



**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ  
ԶՐԿԵԼՈՒ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՊՐԻԼ 2010**

© Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն

Սույն հրատարակման մեջ ներկայացված մեկնաբանությունները և վերլուծությունն Ամերիկյան իրավաբանների ընկերակցության “Իրավունքի գերակայության նախաձեռնության” աշխատանքի արդյունք են: Ձեռնարկված մեկնաբանությունները և վերլուծությունը պատկանում են բացառապես դրանց հեղինակներին, չեն հաստատվել Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Պատվիրակների պալատի կամ Կառավարման խորհրդի կողմից և չեն ներկայացնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության դիրքորոշումը կամ քաղաքականությունը: Ավելին, սույն զեկույցի բովանդակությունը չի կարող համարվել կոնկրետ գործերով մատուցված իրավաբանական խորհրդատվություն: Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել ԱՄՆ Պետդեպարտամենտի Թմրանյութերի դեմ պայքարի և իրավապահպանության հարցերով միջազգային բյուրոյի (“INL”) առատաձեռն օժանդակության, ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի Դատախազության զարգացման, աջակցման և վերապատրաստման արտասահմանյան գրասենյակի (“OPDAT”) աշխատակազմի օգնության շնորհիվ: Բովանդակության համար պատասխանատու է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության “Իրավունքի գերակայության նախաձեռնությունը”, ընդ որում՝ բովանդակությունը կարող է չհամընկնել INL-ի կամ OPDAT-ի կամ ԱՄՆ Կառավարության տեսակետներին:

ISBN: 978-1-61632-006-5 (տպագիր)

ISBN: 978-1-61632-007-2 (PDF)

Տպագրված է Հայաստանի Հանրապետությունում

Հեղինակային իրավունքները պաշտպանված են © 2010 թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն

ԱՄՆ, Կոլումբիա օկրուգ 20005, ք. Վաշինգտոն, NW 15-րդ փողոց, շ. 740

Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունը (“ABA”) թույլատրում է սույն զեկույցում տեղ գտած նյութերի մասամբ կամ ամբողջական պատճենումը բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ հասարակական կազմակերպությունների օգտագործման համար, եթե այդ օգտագործումը հետապնդի բացառապես տեղեկատվական, ոչ-առևտրային նպատակներ, և որ նյութերի կամ դրանց հատվածների կրկնօրինակում հիշատակվի ABA-ի կողմից զեկույցը հրատարակելու մասին, ներառյալ զեկույցի վերնագիրը, հեղինակի անունը, ինչպես նաև հետևյալ մակագրությունը՝ «Վերատպվել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության թույլտվությամբ: Հեղինակային բոլոր իրավունքները պահպանված են»:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	i
Սահմանումներ.....	viii
Հապավումների ցանկ.....	xii
Համառոտ ակնարկ.....	1
Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին.....	6
Պատմական և քաղաքական ակնարկ.....	6
Իրավական դաշտը.....	7
Քրեական արդարադատության համակարգի կառուցվածքը.....	12
Պաշտոնատար անձինք և հաստատությունները.....	12
Ընթացակարգերը.....	17
Հայաստանի Հանրապետություն. ԱԶԸԳ-ի 2010թ. վերլուծությունը.....	20
<b>I. Անձին ազատությունից զրկելու հետ կապված բոլոր փուլերի դիտարկում.....</b>	<b>20</b>
Գործոն 1. Պատշաճ դատավարական ընթացակարգ.....	20
Գործոն 2. Համապատասխանություն և արդարություն.....	29
Գործոն 3. Ռեսուրսներ.....	31
Գործոն 4. Արտաքին և անհարկի ազդեցություն.....	36
Գործոն 5. Տուժողի ներգրավվածությունը.....	42
Գործոն 6. Հատուկ նկատառումներ անչափահասների գործերով.....	47
<b>II. Ազատությունից զրկումը մինչդատական փուլում.....</b>	<b>57</b>
Գործոն 7. Անձին ազատությունից նախնական զրկումը.....	57
Գործոն 8. Ազատությունից զրկումը նախքան կալանավորելու մասին որոշում կայացնելը.....	61
Գործոն 9. Նախնական ազատությունից զրկման և կալանավորման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը.....	65
Գործոն 10. Կալանավորումը դատական քննության գործընթացում.....	72
<b>III. Մինչդատական վարություն կալանավորումը բողոքարկելու մեխանիզմները.....</b>	<b>74</b>
Գործոն 11. Իրավական պաշտպանության արտակարգ միջոցները.....	74
Գործոն 12. Կալանավորում կիրառելու մասին որոշման բողոքարկումը.....	76
Գործոն 13. Կալանքի տակ պահելու ժամկետը պարբերաբար վերանայելու երաշխիքը.....	78
<b>IV. Ազատազրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռ կայացնելը.....</b>	<b>80</b>
Գործոն 14. Դատավճռի կայացման ընթացակարգը.....	80
Գործոն 15. Պատիժ նշանակելիս հաշվի առնվող գործոնները.....	82
Գործոն 16. Ազատազրկման այլընտրանքները.....	88
Գործոն 17. Ազատազրկման հետ չկապված պատիժների մասին որոշումների կատարումը և վերահսկողությունը.....	93
Գործոն 18. Ազատազրկման հետ չկապված պատիժների վերացումը.....	97
<b>V. Ազատազրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռը բողոքարկելու մեխանիզմները.....</b>	<b>100</b>
Գործոն 19. Իրավական պաշտպանության արտակարգ միջոցները.....	100
Գործոն 20. Ազատազրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճռի բողոքարկումը.....	101
Գործոն 21. Նախագահի կողմից ներում շնորհելը.....	103
<b>VI. Ազատազրկման ձևով պատիժը կրելու պրակտիկան.....</b>	<b>106</b>
Գործոն 22. Ազատազրկման ձևով պատիժը կրելու ժամանակ գործող ընթացակարգերը.....	106
Գործոն 23. Բողոքարկման մեխանիզմները.....	112
<b>VII. Պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը.....</b>	<b>116</b>
Գործոն 24. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի կառուցվածքը.....	116
Գործոն 25. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը.....	118
Գործոն 26. Պայմանական վաղաժամկետ ազատման իրականացումը և վերահսկողությունը.....	122
Գործոն 27. Պայմանական վաղաժամկետ ազատման վերացումը.....	124

## Ներածություն

Ազատությունից զրկելու միջոցների չափից շատ կիրառումը շատ երկրներում մեծ խնդիր է քրեական դատավարության ինչպես մինչդատական, այնպես էլ դատական փուլում: Միջազգային չափանիշները խստորեն խրախուսում են ազատագրկման հետ չկապված միջոցների կիրառումը նախաքննության, դատաքննության, ինչպես նաև պատժի նշանակման ժամանակ և գտնում, որ ազատությունից զրկելը պետք է կիրառվի միայն, եթե ազատության հետ չկապված միջոցները բավարար չեն: Ազատությունից զրկելու միջոցների չարաշահումը հաճախ թերի քրեական արդարադատության համակարգի նշան է, որը կարող է բերել քրեական գործերով մեղադրյալների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև ազատագրկման հետ չկապված միջոցները և սանկցիաները կիրառելու, կատարելու և վերահսկելու ինստիտուցիոնալ իրավունակության պակասի: Այն նաև հաճախ մարդու իրավունքների խախտումների և կալանավորման համակարգի ծանրաբեռնվածության հետ առնչվող հասարակական խնդիրների պատճառ է, ինչպիսիք են՝ ազատագրկման վայրերի մարդաշատությունը, կալանավորված անձանց հանդեպ ցուցաբերած վատ վերաբերմունքը, կալանավայրերում առկա անմարդկային պայմանները, դատապարտյալներին ուղղելու անկարողությունը, որը բարձրացնում է կրկնահանցագործությունների թիվը, ինչպես նաև հանգեցնում հասարակության մեջ արատավորված լինելու պիտակի ձևավորմանը, որը կապված է բնակչության շարունակ աճող մասի բանտարկված լինելու փաստի հետ: Մինչդատական կալանքի և ազատագրկման ձևով պատժի նշանակումը հավասարապես խնդրահարույց են, և երկուսին էլ պետք է ուշադրություն դարձնել՝ արդյունավետ և կայուն քրեական արդարադատության համակարգ ստեղծելու համար:

Օգտվելով Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնության (ABA ROLI-ի) աշխարհի ավելի քան 70 երկրներում օրենքի գերակայությունը խթանելու նպատակով տրամադրած իրավական տեխնիկական աջակցության 20-ամյա փորձից՝ ABA ROLI-ի 7 այլ իրավական գնահատման գործիքների շրջանակներում մշակվել է *Ազատությունից զրկելու ընթացակարգերի գնահատման գործիքը* (ԱԶԸԳԳ), որը նպատակ է հետապնդում գնահատելու քրեական գործերով ազատությունից զրկելու գործընթացն ինչպես մինչդատական, այնպես էլ պատժի նշանակման փուլերում:

ABA ROLI-ի գնահատման գործիքները մշակվել են մի քանի գործառնություն իրականացնելու նպատակով: Առաջին հերթին, տեղական իշխանության ղեկավարները և քաղաքականությունն ձևավորող անձինք կարող են օգտվել

տվյալ զեկույցում տեղ գտած եզրակացություններից, որպեսզի ձևավորեն և կենտրոնացնեն բարեփոխմանն ուղղված ջանքերի առաջնահերթությունները: Երկրորդ, ABA-ը և օրենքի գերակայության ոլորտում աջակցություն տրամադրողները հնարավորություն կունենան օգտագործել գնահատման գործիքի արդյունքները և մշակել իրավական համակարգի որակի բարելավմանն ուղղված առավել արդյունավետ ծրագրեր: Երրորդ, գնահատման գործիքները դոնոր կազմակերպություններին, քաղաքականություն ձևավորողներին, ՀԿ-ներին և միջազգային կազմակերպություններին տրամադրում են նաև դժվարամատչելի տեղեկություններ գնահատման ենթարկված երկրների իրավական համակարգի կառուցվածքի, էության և կարգավիճակի մասին: Չորրորդ, գնահատման գործիքները օգնում են լիարժեք ընկալել, թե ինչպես է իրավունքի գերակայությունը գործում պրակտիկայում: Հինգերորդ, գնահատման գործիքների արդյունքները կարող են ելակետ ծառայել նաև շահերի պաշտպանությանն ուղղված այնպիսի նախաձեռնությունների համար, ինչպիսիք են՝ ժողովրդավարական հասարակության մեջ իրավական համակարգի դերին նվիրված հանրային կրթության քարոզարշավները, մարդու իրավունքներին վերաբերող հարցերը, օրենսդրական նախագծերը և շահերի պաշտպանության հիմնական աշխատանքները, որոնք ուղղված են բարելավելու պետության կողմից իրավունքի գերակայության համար միջազգայնորեն սահմանված չափանիշների պահպանումը:

## **Գնահատման դաշտը**

Քրեական իրավունքի ոլորտում բարեփոխումների ծրագրեր իրականացնելիս ABA ROLI-ին զարմացրել էր այն, որ չնայած շատ գիտնականներ, պետական հաստատություններ և հասարակական կազմակերպություններ թեև լրջորեն փաստագրել և գնահատել են դատապարտյալների իրավունքներին վերաբերող խնդիրները, ինչպիսիք են՝ մարդաշատությունը, վատ վերաբերմունքը, կալանավայրերի պայմանները, վերադաստիարակումը և հասարակության կողմից պիտակավորումը, սակայն որևէ կազմակերպություն կամ ուսումնասիրություն չի փորձել ուղղակիորեն անդրադառնալ այս խնդիրների օրենսդրական և կառուցվածքային պատճառներին: ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանությունը մշակելիս ABA ROLI-ին նպատակ է ունեցել գնահատել դատավարական և օրենսդրական շրջանակը, որը հանգեցնում է կալանավորման և ազատազրկման ձևով պատիժը կրելու չարաշահմանը, ինչպես նաև քրեական արդարադատության ոլորտում աշխատող պաշտոնատար անձանց իրական գործելակերպը, ովքեր պատասխանատու են ազատությունից զրկելու ընթացակարգերը և օրենսդրությունը կիրառելու համար: ABA ROLI-ն այն կարծիքին է, որ թափանցիկ և արդյունավետ դատավարական բարեփոխումների միջոցով օրենքի գերակայություն խթանելով՝ երկիրը հավանաբար կբարելավի մարդու իրավունքների բնագավառում առկա վիճակը կալանավայրերում: ABA ROLI-ն ԱԶԸԳԳ-ն իրականացնելու է այն երկրներում, որտեղ պետությունը, քաղաքացիական

հասարակությունը կամ տեղական այլ հաստատություններ առանձնացրել են կալանավորման կամ ազատագրկման ձևով պատժի չափազանց կիրառման արդյունքում ծագող խնդիրներ՝ նպատակ ունենալով վեր հանել նման պրակտիկայի պատճառները և մշակել բարեփոխումների ծրագիր:

ԱԶԸԳԳ գեկույցի 27 գործոնները դասավորված են 7 բաժիններում, որոնցից հինգը՝ Ազատությունից գրկումը մինչդատական փուլում, Մինչդատական վարույթում կալանավորումը բողոքարկելու մեխանիզմներ, Ազատագրկման ձևով պատժի նշանակում, Ազատագրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռը բողոքարկելու մեխանիզմներ, Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելը դասավորված են ժամանակագրական կարգով և առնչվում են կոնկրետ դատավարական փուլերի հետ, իսկ երկուսը՝ Ազատությունից գրկելու բոլոր փուլերի դիտարկումը և Ազատագրկման ձևով պատիժը կրելու պրակտիկան, անդրադառնում են կալանավորման յուրաքանչյուր փուլում առկա համընդհանուր խնդիրներին: ԱԶԸԳԳ-ում վերլուծության են ենթարկվում ազատությունից գրկվելու պահից մինչև լիարժեք ազատության վերադառնալու պահին վերաբերող ընթացակարգերն ու պրակտիկան, ներառյալ՝ ձերբակալումը, և ազատությունից գրկելը մինչև կալանքը որպես խափանման միջոցի դատական քննությունը, կալանավորումը նախաքննության ընթացքում, կալանավորումը դատավարության ընթացքում, պատժի նշանակումը, մինչդատական կալանքի այլընտրանքները, այլընտրանքային պատիժները, կալանավորումը որպես խափանման միջոցի և նշանակված պատժի բողոքարկման մեխանիզմները, ազատությունից ապօրինի գրկելու համար նախատեսված իրավական պաշտպանության արտակարգ միջոցները, ներում շնորհելը, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը և կալանավայրերի ու պատիժը կատարող հիմնարկների ներսում գործող ընթացակարգերը: ԱԶԸԳԳ-ն նաև ուսումնասիրում է այնպիսի ընդհանուր խնդիրներ, ինչպիսիք են՝ պատշաճ իրավական քննության երաշխիքները, համապատասխանությունն ու արդարությունը, ինստիտուցիոնալ ռեսուրսները, արտաքին և ոչ հարկի ազդեցությունը, տուժողի ներգրավվածությունը և անչափահասների մասով հատուկ նկատառումներ:

ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանության մեջ հաշվի են առնվում քրեական գործերով ազատությունից գրկելու հարցերում ներգրավված բոլոր պաշտոնատար անձանց և հաստատությունների ունեցած դերը, որոնց շարքին են դասվում հետաքննության մարմնի աշխատակիցները, քննիչները, դատախազները, դատավորները, փաստաբանները, դատարանի աշխատակազմը, ուղղիչ հիմնարկների աշխատակազմը, պայմանական վաղաժամկետ ազատման հանձնաժողովների անդամները, մեղադրյալները, կալանավորվածները, դատապարտյալները, տուժողները, վկաները և համապատասխան դեպքերում նաև այլոք: Այն անդրադառնում է ինչպես օրինական դատաքննությունից բխող ազատությունից գրկելու դեպքերին, ինչպես օրինակ՝ քրեական հանցագործության մեջ կասկածվող անձի՝ պետական պաշտոնյայի կողմից դատարանի

կողմից վերահսկվող կալանավորումը, այնպես էլ՝ ապօրինի գործընթացներին, օրինակ՝ բռնի անհետացումը կամ առանց դատական վերահսկողության կասկածյալին արգելանքի վերցնելը:

## Մեթոդաբանությունը

ԱԶԸԳԳ-ն իր կառուցվածքով և մեթոդներով բավականին նման է ABA ROLI-ի մյուս 7 իրավական գնահատման գործիքներին, սակայն ի տարբերություն մյուս գնահատման գործիքների՝ ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանությունը մասնավորապես կենտրոնացած է քրեական գործերով ազատությունից զրկելու դատավարական կողմի վրա և չպետք է դիտվի որպես քրեական արդարադատություն իրականացնող հատվածի կամ քրեական արդարադատության համակարգում գործող պաշտոնատար անձանց և հաստատությունների վերաբերյալ անցկացված համապարփակ գնահատում:

ԱԶԸԳԳ մեթոդաբանությունը մշակելիս ABA ROLI-ն հիմնվել է միջազգային և տարածաշրջանային մի շարք փաստաթղթերի վրա, որոնք վերաբերում են քրեական դատավարությանը, դատապարտյալների և կալանավորվածների իրավունքներին, անչափահասների արդարադատությանը, պատիժներին և ազատությունից զրկելու այլընտրանքներին: Այդ փաստաթղթերի թվին են պատկանում մարդու իրավունքների մասին կարևոր միջազգային պայմանագրերը, ինչպես նաև մարդու իրավունքների եվրոպական, միջամերիկյան, աֆրիկյան համակարգերի կոնվենցիաները, ուղենիշները, կանոնները, հռչակագրերը, ՄԱԿ-ի, տարածաշրջանային միջգերատեսչական մարմինների, փաստաբանական գրասենյակների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ձևավորված լավագույն փորձը, միջազգային, տարածաշրջանային և ներպետական դատական կամ դատական իրավասություններով օժտված մարմինների պրակտիկան, ինչպես նաև գիտնականների կամ քաղաքացիական հասարակության փորձագետների գրքերն ու ձեռնարկները: ԱԶԸԳԳ-ն ուսումնասիրում է ազատությունից զրկելու գործընթացի ինչպես *դե յուրե* օրենսդրական և դատավարական շրջանակը, այնպես էլ՝ դրա կիրառման և իրականացման *դե ֆակտո* պրակտիկան: ԱԶԸԳԳ-ն օգտվում է մինչդատական վարույթում կալանավորման և պատիժների վերաբերյալ առկա միջազգային, տարածաշրջանային օրենքներից, նորմերից և լավագույն փորձից՝ գնահատելով ազատությունից զրկելու համար տվյալ երկրում գործող կարգը 27 գործոնների լույսի ներքո, որոնք արտացոլում են ազատությունից զրկելու գործընթացի առանձնապես կարևոր խնդիրներն ու փուլերը:

Յուրաքանչյուր երկրում գնահատում իրականացնելու համար օգտագործվելու է ԱԶԸԳԳ զեկույցի ստանդարտ ձևաչափը՝ ընթերցողներին հնարավորություն տալով համեմատել և հակադրել տարբեր ոլորտներում տարբեր երկրների

ցուցանիշները, ինչպես նաև՝ միննույն երկրում հետագայում գնահատումներ անցկացնելիս ուսումնասիրել տվյալ երկրի ցուցանիշները ժամանակի մեջ: ԱԶԸԳԳ-ի յուրաքանչյուր զեկույց ընդգրկում է ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանության և գնահատման գործընթացի ներածություն, երկրի պատմության և իրավական համակարգի մասին ընդհանուր նկարագիր և ԱԶԸԳԳ-ի եզրակացությունների համառոտ ակնարկ: 27 գործոններից յուրաքանչյուրի սկզբում ներկայացված է տվյալ գործոնին վերաբերող միջազգայնորեն ընդունված չափանիշների համառոտ շարադրանքը: ԱԶԸԳԳ-ն որակական է, այլ ոչ՝ քանակական, և յուրաքանչյուր գործոնին տրված է դրական, բացասական կամ չեզոք հարաբերակցություն, որոնք վկայում են այն մասին, թե ինչպիսի քայլեր են ձեռնարկվում երկրում տվյալ գործոնը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Յուրաքանչյուր գործոն ունի երկրի վիճակը ներկայացնող համառոտ եզրակացություն տվյալ գործոնի համեմատությամբ: Դրան հաջորդում է *դե յուրե* և *դե ֆակտո* իրավիճակն ամփոփող հանգամանակից վերլուծությունը, որում մանրամասն նկարագրվում են այն տարատեսակ խնդիրները, որոնք տվյալ երկրում ազդում են այդ գործոնի վրա: ԱԶԸԳԳ-ն իրենից ներկայացնում է չեզոք և ապաքաղաքականացված գնահատում՝ ազատությունից զրկելու հետ կապված երկրում գործող ընթացակարգերի, իրավական դաշտի և պրակտիկայի վերաբերյալ: Նրանում չկան բարեփոխման համար նախատեսված կոնկրետ առաջարկություններ, այլ տրամադրված է մինչդաստական վարույթում կալանավորման և ազատագրվման ձևով պատիժը կրելու շուրջ առկա խնդիրների վերլուծություն՝ ընդգծելով ազատությունից զրկելու վերաբերյալ երկրում գործող համակարգերի ուժեղ և թույլ կողմերը:

ԱԶԸԳԳ-ի վերլուծության մեջ օգտագործված տեղեկությունները հավաքվում են 2-3 շաբաթվա ընթացքում անցկացված գնահատումների արդյունքում, որոնց ժամանակ չեզոք, անկախ գնահատողը կամ գնահատողները գնահատում անցկացնող երկրում վարում են մի շարք հարցազրույցներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ: Հարցազրույցների մասնակիցների թվին են պատկանում մոտ 50 դատավորներ, փաստաբաններ, դատախազներ, արդարադատության նախարարության կամ պետական այլ ներկայացուցիչներ, ուղղիչ հիմնարկների աշխատողներ, ոստիկաններ, քննիչներ, նախկին կամ ներկա կալանավորված անձինք կամ դատապարտյալներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ անձինք երկրի տարբեր մասերից: Նախքան գնահատման գործընթացը սկսելը, ABA ROLI-ի տվյալ երկրի աշխատակազմը կատարում է *դե յուրե* և երկրորդական աղբյուրների հետազոտություն՝ գնահատողին տրամադրելով համապատասխան ողջ օրենսդրությունը, կանոնակարգեր, դատարանի որոշումներ, զեկույցներ և հոդվածներ, ինչպես նաև համապատասխան տվյալներ ու վիճակագրություն: Գնահատումից հետո գնահատողը պատրաստում է երկրի ԱԶԸԳԳ զեկույցի նախագիծը: Զեկույցը խմբագրվում է ABA ROLI-ի աշխատակազմի կողմից և

վերանայվում փորձագետների և երկրի հիմնական շահագրգիռ անձանց կողմից նախքան անգլերեն և տեղական լեզուներով հրատարակվելը:

## **Երախտիքի խոսք**

ABA ROLI-ն չափազանց երախտապարտ է թիմին, որը մշակել է ԱԶԸԳԳ 2009-2010թթ. գաղափարը, մեթոդաբանությունն ու ձևը: Քրեական իրավունքի ավագ խորհրդատու Մերի Գրիբը և Իրավական վերլուծաբան Ջեսսի Թանենբաումը ծրագրի կոորդինացնողներն են, ովքեր ստեղծել և կազմել են գործոնների մեթոդաբանությունը՝ մշակելով գնահատման զեկույցի ձևը և կառուցվածքը և Հայաստանում անցկացնելով ԱԶԸԳԳ-ի անդրանիկ փորձնական գնահատումը: Հետազոտությունների գծով օգնական Ջիմ Վորմինգտոնը անփոխարինելի է եղել համեմատական քրեական դատավարության մասին օրենքների և լավագույն փորձի ուսումնասիրության, ինչպես նաև ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանության մշակման հարցում: ABA ROLI-ի մյուս աշխատողներից Սայմոն Կոնտեն, Ջուլի Գարուչոն, Դեննի Ադամսը, Հասմիկ Հակոբյանը, Սառա Շիրազյանը և Կիթ Պետերսոնը նույնպես կարևոր աջակցություն են ցուցաբերել ԱԶԸԳԳ-ի գաղափարի և մշակման հարցում:

ԱԶԸԳԳ-ի մեթոդաբանության նախագծում ներդրում և դրա վերաբերյալ կարևոր առաջարկություններ են արել քրեական իրավունքի և դատավարության փորձագետների խումբն՝ ի դեմս պրոֆեսոր Սինտիա Ալկոնի, Ջուրաբեկ Արիպովի, Պոլ Դենենֆելդի, պրոֆեսոր Ջիմի Գուրուլեի, Մարտին Շոնտեյխի, Ջեյսոն Ռայքելտի, Անդրյու Սոլոմոնի և դոկտոր Ռիչարդ Վոլգերի: ABA ROLI-ն իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում ԱԶԸԳԳ-ի մշակման հարցում կատարած նրանց անգնահատելի ներդրման համար:

## **Գնահատող թիմը**

ԱԶԸԳԳ 2010 Հայաստանի գնահատումն անցկացվել է ABA ROLI-ի Քրեական իրավունքի ավագ խորհրդատու Մերի Գրիբի և ABA ROLI-ի Իրավական վերլուծաբան Ջեսսի Թանենբաումի կողմից, ովքեր եղել են նաև ծրագրի ընդհանուր կոորդինացնողները: Գնահատման թիմի այլ անդամներն են՝ ABA ROLI-ի հայաստանյան գրասենյակի Քրեական իրավունքի ծրագրի իրավաբաններ Սառա Շիրազյանը և Հասմիկ Հակոբյանը, իրավունքի մասնագետ Կիթ Պետերսոնը և թարգմանիչ Ալենուշ Կիրակոսյանը: Գնահատող թիմը մեծ աջակցություն է ստացել ABA ROLI-ի երևանյան գրասենյակի աշխատակազմից՝ ի դեմս տնօրեն Քրեզ Հոլստեդի, ադմինիստրատիվ կոորդինատոր Սաթենիկ (Ջառա) Սողոմոնյանի և վարորդ Մերգո Հարությունյանի, վաշինգտոնյան գրասենյակի Եվրոպայի և Եվրասիայի բաժնի աշխատակազմից՝ ի դեմս տնօրեն Դոննա Ռայթի, տնօրենի տեղակալ Ջուլի Գարուչոյի, ծրագրերի

ղեկավար Իրինա Պարշիկովայի, ծրագրերի օգնականներ Դեննի Ադամսի և Քրիստի Կոնտակի, ծրագրի կրտսեր աշխատակից Կամերոն Պլատի ինչպես նաև Հետազոտությունների և գնահատումների գրասենյակի աշխատակազմից՝ ի դեմս իրավական վերլուծաբան Ջիմ Կորմինգտոնի և փորձնակ Քեթրին Ստեռլի: ԱԶԸԳԳ զեկույցի խմբագիրն է Հետազոտությունների և գնահատումների գրասենյակի տնօրեն Սայմոն Կոնտեն:

ABA ROLI-ն բարձր է գնահատում հայ իրավաբաններ Ռուբեն Մելիքյանի, Աննա Մարգարյանի, Դավիթ Խաչատուրյանի և Արթուր Հովհաննիսյանի անգնահատելի օժանդակությունը, ովքեր հանդիսանում են կալանավորումը որպես խափանման միջոցի և պատիժների հարցերով աշխատանքային խմբի անդամներ՝ որպես ABA ROLI Հայաստանի Քրեական իրավունքի ծրագրի մաս: Սույն զեկույցում տեղ գտած եզրակացություններն ու վերլուծությունները հիմնված են 2010թ. փետրվարին Հայաստանում անցկացված հարցազրույցների և 2010թ. ապրիլին ուսումնասիրած համապատասխան նյութերի վրա: Համապատասխան մարմինների հետ անցկացրած հարցազրույցների գրառումները և հարցազրույց տվողների գաղտնի ցանկը պահվում են ABA ROLI-ում: ABA ROLI-ն չափազանց շնորհակալ է այն անձանց, ովքեր մասնակցել են գնահատման նպատակով անցկացված հարցազրույցներին:

## Սահմանումներ

Տարբեր երկրներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերը տարբեր են և մի երկրում օգտագործվող տերմինները կարող են մեկ այլ իմաստ ունենալ այլ տեղ: Հետևաբար, շատ կարևոր է սահմանել ԱԶԸԳԳ-ում օգտագործված տերմինները և յուրաքանչյուր տերմին ճշգրիտ օգտագործել: Եթե գնահատման զեկույցի հիմնական մասում այլ բան նախատեսված չէ, ապա ներքոշարադրյալ տերմիններն սահմանվում են հետևյալ կերպ՝

**Ազատագրվում** – հանցագործության համար դատապարտված և կատարած հանցագործության համար ազատագրվման ձևով պատիժը կրող անձին անազատության մեջ պահելը:

**Ազատագրվման հետ չկապված** – հանցագործության համար դատապարտված անձի նկատմամբ նշանակված պատժի տեսակ կամ միջոց, որի դեպքում անձն ազատագրվման ձևով պատիժ չի կրում պետության կողմից վերահսկվող պատիժը կատարող հիմնարկում:

**Ազատությունից զրկում** – անձի ֆիզիկական ազատության սահմանափակում, այնպես, որ նրան չի թույլատրվում լքել այն տարածքը, որտեղ նա պահվում է, պաշտոնական իրավական կամ դատական վերահսկողությամբ կամ առանց դրա և անկախ նրանից, թե արդյոք անձն ազատությունից զրկվել է օրենքով նախատեսված կարգով, թե ոչ:

**Այլընտրանքային պատիժներ** – ազատագրվման հետ չկապված ցանկացած պատիժ, որը նշանակվում է քրեական հանցագործության համար դատապարտված անձի նկատմամբ:

**Արգելանք** – պետական պաշտոնյայի կողմից անձին ազատությունից զրկելը կամ բացառապես պետության կողմից վերահսկվող ազատագրվման հաստատությունում, կամ մասամբ ազատությունից զրկելու միջոցով (օր.՝ տնային կալանքը կամ աշխատանքի ընթացքում կալանավորված անձի նկատմամբ իրականացվող հսկողության թուլացումը):

**Բանտ** – հանցագործության համար դատապարտված անձանց պահելու հիմնարկ:

**Բանտարկյալ** – հանցագործության համար դատապարտված անձ, ում նկատմամբ որպես պատժատեսակ ազատագրվում է նշանակվել:

**Բանտարկում** – ազատությունից ֆիզիկապես զրկում պետության կողմից վերահսկվող կալանավայրում:

**Բողոքարկում** – դատական մարմնի կողմից կայացրած որոշման վերանայում ավելի բարձր դատական մարմնի կողմից:

**Դատական մարմին** – դատավոր, հաշտարար դատավոր կամ օրենքի հիման վրա ստեղծված այլ արբիտր քրեական վարույթում:

**Դատապարտյալ** – անձ, ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և տվյալ պահին կրում է կատարած հանցագործության համար նախատեսված պատիժը:

**Դատապարտում** – դատական մարմնի եզրակացությունը, որով մեղադրյալը մեղավոր է ճանաչվում հանցագործություն կատարելու մեջ:

**Դատավճիռ** – քրեական գործի վերջնական լուծում:

**Իրավական պաշտպանության արտակարգ միջոց** – իրավական պաշտպանության միջոց՝ նախատեսված կալանավորման, ազատազրկման կամ ազատությունից զրկելու այլ ձևի օրինականությունը դատական մարմնի առջև վերանայելու համար, որն իրավասու է որոշում կայացնել կալանավորված անձին ազատ արձակելու մասին:

**Իրավասու մարմին** – պետության կողմից ստեղծված մարմին, որն իրավասություն ունի իրավունքի կոնկրետ ոլորտի կամ գործընթացի նկատմամբ:

**Կալանավայր** – վայր, որտեղ անձը կալանքի տակ է պահվում պետական պաշտոնյայի կողմից կամ պետական իրավասության ներքո՝ պաշտոնապես ձերբակալված լինելու կամ հանցագործություն կատարելու համար դատապարտվելու փաստից անկախ:

**Կալանավորված անձ** – անձ, ում կալանքի տակ են վերցրել և ով չի դատապարտվել հանցագործություն կատարելու համար և ում նկատմամբ կատարած հանցագործության համար ազատազրկման ձևով պատիժ չի նշանակվել, այդ թվում՝ անձինք, ովքեր ազատությունից զրկվել են առանց պաշտոնական իրավական կամ դատական վերահսկողության:

**Մինչդատական կալանքի այլընտրանքներ** – ազատազրկման հետ չկապված միջոց, որը նպատակ ունի ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի դատավարությանը ներկայանալը:

**Կալանավորում** – անձին կալանքի տակ պահելն է պետության կամ պետական պաշտոնյայի կողմից քրեական վարույթի ցանկացած փուլում իրավական կամ դատական վերահսկողությամբ կամ առանց դրա և անկախ նրանից, թե արդյոք անձը կալանքի տակ է վերցվել օրենքով նախատեսված կարգով, թե ոչ:

**Կասկածյալ** – հետաքննության կամ նախաքննության մարմնի այլ պաշտոնյաների կողմից հանցանք կատարելու մեջ կասկածվող անձ՝ անկախ

պաշտոնապես կասկածյալ ճանաչվելու կամ այդ մասին տեղեկացված լինելու փաստից:

**Ձերբակալված անձ** – ցանկացած անձ, ով հանցագործություն կատարելու կասկածանքով արգելանքի տակ է վերցվել կամ ձերբակալվել պետական պաշտոնյայի կողմից, սակայն ում նկատմամբ դեռևս դատական մարմնի կողմից որոշում չի կայացվել որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին:

**Ձերբակալում** – հանցագործության մեջ կասկածվող անձին արգելանքի տակ վերցնելը:

**Մեղադրյալ** – հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձ, ով չի դատապարտվել կամ ում ներկայացրած բողոքը դեռ չի քննվել:

**Մինչդատական կալանք** – հանցագործության համար չդատապարտված անձին կալանքի տակ վերցնելը, դատական մարմնի որոշմամբ: Նաև՝ կալանավորումը դատաքննության փուլում կամ դատական կարգով գործի քննության այլ փուլում:

**Ներում** – գործադիր մարմնի կողմից ընդունվող ակտ, որով նվազեցվում են դատապարտյալի նկատմամբ կիրառված քրեական սանկցիաները:

**Պաշտոնատար անձ** – քրեական արդարադատության ոլորտում դեր ունեցող պետական պաշտոնյա կամ ներկայացուցիչ՝ անկախ այն բանից հանդես է գալիս իր ծառայողական լիազորությունների շրջանակներում, թե՛ օրենքի համաձայն:

**Պաշտպան** – փաստաբան, որը ներկայացնում է կալանավորված անձի, մեղադրյալի կամ դատապարտյալի շահերը:

**Պատիժ** – հարկադրանքի միջոց, որը նշանակվում է հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ:

**Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը** – Ազատագրկման ձևով պատիժն ամբողջությամբ չկրած դատապարտյալի ազատ արձակումը պետական վերահսկողության ներքո թույլատրող գործընթաց, :

**Պատիժը պայմանականորեն չկիրառելը** – պետական վերահսկողության ներքո հանցագործության համար դատապարտված անձին ազատության մեջ մնալ թույլատրող գործընթաց:

**Պետության կողմից վերահսկվող ազատագրկման հիմնարկ** – պետության կողմից նշանակված ազատագրկման ձևով պատիժ կրող անձանց պահելու հիմնարկ, որն ուղղակիորեն ղեկավարվում է պետական պաշտոնյայի կամ պետության հետ կնքած պայմանագրով՝ մասնավոր պաշտոնյայի կողմից:

**Վկա** – անձ, ով ներկա է եղել հանցագործության կատարմանը կամ ում հետաքննության մարմինը կամ նախաքննության մարմնի այլ պաշտոնյաներ խնդրում են տեղեկություն տրամադրել հանցագործության կատարման մասին, սակայն պաշտոնապես ճանաչված չէ որպես կասկածյալ:

**Տուժող** – անձ, ում հանցագործության հետևանքով անմիջական վնաս է պատճառվել:

**Քրեակատարողական հիմնարկ** – հանցագործության համար դատապարտված անձանց պահելու հիմնարկ:

## Հապավումների ցանկ

<b>ԱԽ</b>	Արդարադատության խորհուրդ
<b>ԱՀ</b>	Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողով
<b>ԱՆ</b>	Արդարադատության նախարարություն
<b>ԱՊԿԲ</b>	Քրեակատարողական վարչության Այլընտրանքային պատիժների կատարման բաժին
<b>ԵԱՀԿ</b>	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
<b>ԺՀՄԻԳ</b>	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
<b>ՀԿ</b>	հասարակական կազմակերպություն
<b>ՀՊԳ</b>	Հանրային պաշտպանի գրասենյակ
<b>ՀՔԾ</b>	Հատուկ քննչական ծառայություն
<b>ՁՊՎ</b>	Ձերբակալվածներին պահելու վայր
<b>ՄԻԵԴ</b>	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
<b>ՔՎ</b>	ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչություն
<b>ABA</b>	Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն
<b>ABA ROLI</b>	Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավունքի գերակայության նախաձեռնություն
<b>OPDAT</b>	Դատախազության զարգացման, աջակցման և վերապատրաստման արտասահմանյան գրասենյակ, ԱՄՆ-ի արդարադատության դեպարտամենտ
<b>USAID</b>	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

## Համառոտ ակնարկ

### Համառոտ տեղեկություններ արդյունքների մասին

Հայաստանում անցկացված Ազատությունից զրկելու ընթացակարգերի գնահատման գործիքի առաջին փորձում (ԱԶԸԳԳ) արտացոլված է քրեական արդարադատության համակարգի հետ առնչվող սոցիալական և օրենսդրական էական փոփոխությունների մի շրջան, որը 20 տարուց պակաս մի ժամանակահատվածում խորհրդային մոդելից փոխակերպվել է դատական անկախության և մարդու իրավունքների վրա հիմնված համակարգի: Տեղի են ունեցել ազատությունից զրկելու ընթացակարգերի և դրա պրակտիկայի վրա ներգործություն ունեցող կարևոր բարեփոխումներ, որոնցից հատկանշական են 2002թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հայաստանի կողմից վավերացումը, ինչպես նաև 2005թ. Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարումը՝ ուժեղացնելով դատական համակարգի անկախությունը: Հանրային պաշտպանի գրասենյակի հիմնումը 2005թ. և 2008թ. նախադեպային իրավունքի ընդունումը ծառայել են քրեական գործերում մեղադրյալների իրավունքները պաշտպանելու նպատակին:

Չնայած բարեփոխումների և ձեռնարկված կարևոր քայլերի հանդեպ դրսևորվող մեծ կամքին, Հայաստանը շարունակում է հանդիպել լուրջ խոչընդոտներ միջազգային չափանիշներին համապատասխան գործում, թափանցիկ քրեական արդարադատության համակարգ ունենալու հարցում: Ազատությունից զրկելու հետ կապված միջոցները դեռևս չափազանց հաճախակի են կիրառվում ինչպես դատավարության մինչդատական, այնպես էլ պատժի նշանակման փուլերում: Ռեսուրսների պակասը բարդացնում են ազատությունից զրկելու դեպքերը նվազեցնելու նախաձեռնությունները, քանի որ այլընտրանքային միջոցներ կիրառելու համար չկան համապատասխան միջոցներ, աշխատակազմ և ենթակառուցվածք: Արտաքին և անհարկի ազդեցությունը՝ մասնավորապես գործադիր իշխանության կողմից դատական համակարգի վրա ցուցբերվող ազդեցությունը, շարունակում է լուրջ խնդիր մնալ:

2010թ.-ի ուսումնասիրության մեջ 15 գործոն ունեն չեզոք հարաբերակցություն՝ վկայելով այն մասին, որ տվյալ գործոնի վերլուծության մեջ առանձնացվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական գործելակերպեր, իսկ 12 գործոն ձեռք են բերել բացասական հարաբերակցություն՝ վկայելով, որ տվյալ գործոնի վերլուծության մեջ զետեղված գործելակերպերի ճնշող մասը չեն համապատասխանում միջազգայնորեն ընդունված չափանիշներին: Դրական հարաբերակցությունների բացակայությունը չի նշանակում, որ Հայաստանի քրեական դատավարությունում ազատությունից զրկելու ընթացակարգերում չկան լավ գործելակերպեր, ընդհակառակը՝ նույնիսկ բացասական հարաբերակցություն

ստացած շատ գործոններ ցույց են տալիս, որ առկա է բարեփոխումներին ուղղված դրական միտում: Ընդհանուր առմամբ, 2010թ. Հայաստանում անցկացված ԱԶԸԳԳ-ն բացահայտում է մի համակարգ, որն էական քայլեր է կատարել արդյունավետ և կայուն քրեական արդարադատության համակարգ ունենալուն ուղղված բարեփոխումների գործընթացում, սակայն դեռևս բավական ճանապարհ ունի անցնելու հետագա զարգացման համար:

## ԱԶԸԳԳ Հայաստան 2010թ.-ում առանձնացված դրական կողմերը

- 2008թ.-ի Դատական օրենսգիրքը նախատեսել է **դատական նախադեպի ինստիտուտին (*stare decisis model doctrine*)** նման մի համակարգ: Այս համակարգի շնորհիվ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի վճիռները պարտադիր են դառնում ստորադաս դատարանների համար նմանատիպ գործեր քննելիս: Չնայած նրան, որ այս համակարգը բավականին նոր է, սակայն բոլոր գործոնները վկայում են այն մասին, որ դատարանները և փաստաբաններն արդեն իսկ օգտվում են նախադեպերից՝ մեղադրյալների իրավունքների պաշտպանությունը խթանելու նպատակով: Դատավորների, դատախազների և փաստաբանների շարունակական կրթությունը ՄԻԵԿ-ի վերաբերյալ, ինչպես նաև հայերեն լեզվով ՄԻԵԴ-ի վճիռների մատչելիությունը հետագայում կաջակցի այս կարևոր բարեփոխմանը:
- Հիմնադրվելով 2005թ.-ին՝ **Հանրային պաշտպանի գրասենյակը ամրապնդում է արդարադատության մատչելիությունը՝ պետության միջոցների հաշվին Հայաստանում անվճարունակ անձանց իրավաբանական ծառայություններ մատուցելու միջոցով:** Չնայած նրան, որ թերի ենթակառուցվածքը և ռեսուրսների պակասը երբեմն թույլ չեն տալիս հանրային պաշտպաններին արդյունավետորեն իրականացնել իրենց պարտականությունները, սակայն նրանք ջանասիրաբար օգնություն են տրամադրում իրենց վստահորդներին և կարևոր հենարան են հանդիսանում պատշաճ դատավարական ընթացակարգ ունենալու մեղադրյալների իրավունքների համար:
- Հայաստանի **դատարաններն ակտիվ դեր են ստանձնել մեղադրյալների և տուժողների իրավունքների պաշտպանության գործում:** Վճռաբեկ դատարանը ճանաչել է տուժողների արդար դատաքննության իրավունքը, որպեսզի նրանք հնարավորություն ունենան իրենց խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանել, ինչպես նաև տուժողներին իրավունք է տվել առարկելու դատական քննության արագացված կարգ կիրա-

ռելու դեմ, որի արդյունքում հանցագործություն կատարած անձը կարող է ավելի պակաս պատիժ ստանալ՝ առանց ապացույցների լիարժեք քննության: Վճռաբեկ դատարանը հաստատել է նաև, որ առանց պաշտոնապես ձերբակալված լինելու ազատությունից զրկված անձն օժտված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքներով և գտել է, որ անմեղության կանխավարկածն արգելում է դատարաններին քննել մեղադրյալի հնարավոր մեղքը մինչդատական կալանքի հարցը լուծելիս:

- Ընդհանուր առմամբ, գնահատող թիմի կողմից անցկացրած հարցազրույցների ժամանակ պարզվել է, որ **բարեփոխումներ կատարելու մեծ կամք կա**: Քրեական համակարգում ազատությունից զրկելու ընթացակարգերի հետ առնչություն ունեցող պաշտոնատար անձինք տեղյակ էին առկա խնդիրներից և համակարգը բարելավելու մեծ ցանկություն էին հայտնում, որպեսզի պաշտպանեն մեղադրյալների, հասարակության, ինչպես նաև տուժողների իրավունքները: Բարեփոխում կատարելու հանդեպ ցուցաբերված ուժեղ կամքն արդեն իսկ կատարված բարեփոխումների հիմքում ընկած խթանն է եղել և անկասկած հետագայում կհանգեցնի քրեական համակարգում ազատությունից զրկելու ընթացակարգերի ամրապնդմանը:

#### **ԱԶԸԳԳ Հայաստան 2010թ.-ում առանձնացված խնդիրները**

- Քրեական արդարադատության համակարգում **համապատասխան ֆինանսական, ենթակառուցվածքային և մարդկային ռեսուրսների պակասը** հանգեցնում է անարդյունավետության, ինչպես նաև մեղադրյալների իրավունքների անտեսման և անշուշտ հանդիսանում է Հայաստանի քրեական համակարգում ազատությունից զրկելու ընթացակարգերի հետ առնչվող մեծագույն խնդիրը: Առանց բավարար ռեսուրսների, ըստ հարցազրույցների մասնակիցների, անհնար է գործը լուծել համապատասխան ապացույցներ հավաքելու և վերլուծություն կատարելու միջոցով՝ հաճախ հարկադրանքով ձեռք բերված ինքնախոստովանական ցուցմունքների վրա հենվելու փոխարեն, համապատասխան ձևով վերահսկել գրավով ազատված մեղադրյալներին կամ այն դատապարտյալներին, ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել կամ նրանց, ովքեր պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել են, տրամադրել սոցիալական ծառայություններ անչափահաս դատապարտյալներին կամ ջանասիրաբար պաշտպանություն իրականացնել: Չնայած այն բանին, որ Հայաստանում ընդհանուր առմամբ ազատությունից զրկելու կարգերի հետ կապված համապատասխան օրենսդրական դաշտն ապահովված է, սակայն ռեսուրսների պակասը թույլ չի տալիս, որպեսզի այն ինչ նախատեսված է օրենսդրությամբ, գործնականում կիրառվի:

- **Քրեական արդարադատություն համակարգի ներսում և դրսում ցուցաբերվող անհարկի ազդեցությունը** բացասաբար է ազդում արդարադատության ոլորտում գործող պաշտոնատար անձանց վրա, որպեսզի վերջիններս արդար, թափանցիկ և արդյունավետ ձևով վերաբերվեն կալանավորման և պատժի նշանակման վերաբերյալ կայացված որոշումներին: Դատական գործողությունների վրա ցուցաբերվող գործադիր իշխանության ազդեցությունը, տուժողների և վկաների նկատմամբ գործադրվող անհարկի ճնշումները, ինչպես նաև կոռուպցիայի գործերով կայացված քաղաքական շարժառիթներ ունեցող որոշումներն առանձնացվել են որպես լուրջ խնդիրներ:
- Հայաստանում **բացակայում է անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու համապարփակ համակարգ**, ներառյալ՝ կալանավորման և պատժի նշանակման ոլորտներում: Ազատությունից զրկված անչափահասների թիվը զգալիորեն մեծացել է Հայաստանում: Նախկին անչափահաս դատապարտյալների պիտակավորումը հասարակության կողմից բացասաբար է անդրադառնում նրանց վրա չափահաս տարիքում, իսկ բանտում անցկացրած անչափահասների շրջանում ռեցիդիվը տարածված է: Ազատությունից զրկելու իրական այլընտրանքների պակաս կա, և հարցազրույցների մասնակիցները հաճախակի են արտահայտել այն միտքը, որ ոչ բավարար ռեսուրսներ են հատկացված անչափահասների կողմից հանցագործությունների կատարումը կանխելու և նրանց վերադաստիարակելու համար:
- **Ազատությունից զրկելու նախնական փուլում** հաճախ են պատահում դատավարական ընթացակարգերի լուրջ խախտումներ: Արգելանքի տակ գտնվելիս կասկածյալների իրավունքների պաշտպանության ընթացակարգերը սահմանված են օրենքով, սակայն առկա բացերի և գիտելիքի պակասի հետևանքով այդ ընթացակարգերը գրեթե ամենուր չեն պահպանվում: Համաձայն ստացված տեղեկությունների, տարածված է առանց կարգավիճակ տալու կամ օրենքով նախատեսված ժամկետից դուրս անձանց անազատության մեջ պահել: Մինևույն ժամանակ, **տուժողների և վկաների վրա ճնշում գործադրելը**, ումից հաճախ պահանջում են ցուցմունք տալ ոստիկանության բաժանմունքում առանց իրենց իրավունքների մասին տեղեկացվելու, լուրջ խնդիր է հետաքննության և նախաքննության փուլերում:

- **Ազատությունից զրկելու այլընտրանքներն իրականացնելու և վերահսկելու ոչ բավարար դաշտը** մեծ խնդիր է քրեական արդարադատության բոլոր փուլերում: Անչափահաս դատապարտյալների կամ հանցագործություն կատարելու ռիսկի առջև կանգնած անչափահասների համար սոցիալական ծառայությունների ապահովումն առանձնացվել է որպես ազատությունից զրկված անչափահասների աճող թվին նպաստող լուրջ գործոն: Գրավի վերաբերյալ հազվադեպ է միջնորդություն ներկայացվում, որը պայմանավորված է օրենքով նախատեսված անթույլատրելի աստիճանի բարձր չափերով՝ խնդիր, որը բարդություն է առաջացնում դատարանների համար ազատագրկման փոխարեն տուգանք կիրառելու հարցը քննելիս: Այլընտրանքային պատիժների կատարման բաժինը, որը պատասխանատու է պատիժը պայմանականորեն չկրող կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալներին վերահսկելու համար, չունի բավարար թվով աշխատակիցներ՝ իր պարտականությունները համապատասխան ձևով կատարելու համար:
- 2006թ. ստեղծված **Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովները** (ԱՀ), որոնք ծառայում են որպես միջանկյալ մարմիններ՝ հաստատելու պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին պատիժը կատարող հիմնարկի միջնորդագիրը նախքան դատական քննության հանձնելը, **չեն գործում թափանցիկ և անաչառ ձևով**: ԱՀ-ներին մեղադրում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքերի ցածր թվի համար, իսկ հանձնաժողովների անկախությունը կասկածի տակ է առնված, քանի որ դրանց անդամների ճնշող մեծամասնությունը, ըստ ստացված տեղեկությունների, գործադիր իշխանության կամ իրավապահ մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ են: Շատերի կարծիքով ինչպես պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը, այնպես էլ դատարանները, այնուամենայնիվ, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելիս արդար են և օբյեկտիվ:
- Համատարած մտահոգություն կա, որ **կալանավորում կիրառելու մասին որոշումները կանխորոշված են**: Հարցազրույցների մասնակիցները բազմիցս վկայակոչել են խորհրդային ժամանակներից մնացած մտածելակերպը, որը կասկածյալներին և մեղադրյալներին կալանավորելու, իսկ դատապարտյալներին ազատագրկման ենթարկելու կողմնակից է: Դատավորները, քննիչները և դատախազները վախենում են հանցագործությանը մեղմ վերաբերվելուց, կամ ավելի վատ՝ կաշառակերի տպավորություն թողնելուց, ուստի վարանում են գործել մեղադրյալի շահերից ելնելով:

## Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին

### Պատմական և քաղաքական ակնարկ

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հարավային Կովկասում, սահմանակցելով հյուսիսում՝ Վրաստանի, հարավ-արևելքում՝ Ադրբեջանի, հարավում՝ Իրանի, իսկ արևմուտքում՝ Թուրքիայի հետ: Բնակչությունը 2.966.802 է, որից մոտավորապես 97.9%-ը ազգությամբ հայ են, ովքեր առնվազն անվանապես Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներ են: Երկրի ամենամեծ փոքրամասնական խումբը եզդիներն ու ռուսներն են: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՋԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ (փոփոխվել է 2010թ. հունիսի 24-ին), <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/am.html>:

Առաջին հայկական պետությունը հիմնադրվել է մ.թ.ա. 190թ. և մոտ մեկ դար նրա սահմանների մեջ է մտել գրեթե ողջ Կովկասը՝ ձգվելով կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Մ.թ.ա. 55թ. այն դարձել է Հռոմեական կայսրության մասը և մ.թ. 4-րդ դարում ընդունել Քրիստոնեությունը որպես պետական կրոն: Հաջորդ 17 դարերի ընթացքում Հայաստանը նվաճել և կառավարել են տարբեր կայսրություններ, այդ թվում՝ պարսկական, թուրքական և ռուսական: 16-րդ դարում Օսմանյան Թուրքիան գրավել է Արևմտյան Հայաստանը, իսկ մեկ դար հետո Պարսկաստանն իր տիրապետության տակ է առել Արևելյան Հայաստանը: 19-րդ դարում Արևելյան Հայաստանը դարձել է Ռուսական կայսրության մի մասը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մոտավորապես 500,000 հայերի արտաքսումից և 1,500,000-ի կոտորածից հետո 1923թ. նախկին Արևմտյան Հայաստանի տարածքը ընդգրկվեց այժմյան Թուրքիայի տարածքի մեջ: Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Հայոց ցեղասպանություն [http://www.genocide-museum.am/eng/armenian\\_genocide.php](http://www.genocide-museum.am/eng/armenian_genocide.php): Արևելյան Հայաստանը հռչակել է իր անկախությունը 1918թ.-ին, սակայն 1920թ.-ին անցել է Խորհրդային ուժերի հսկողության տակ և ընդգրկվել Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կազմում: 1936թ.-ին Հայաստանը դարձել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: 1991թ.-ին Սովետական Միության փլուզումից հետո Հայաստանն անցկացրել է համաժողովրդական հանրաքվե՝ հաստատելով իր անկախությունը: Այն պաշտոնապես հռչակել է իր անկախությունը 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին և առ այսօր հանրապետություն է:

Հայաստանը և հարևան Ադրբեջանը երկար տարիներ տարաձայնություններ են ունեցել մեծամասամբ հայաբնակ Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու շուրջ, որը Սովետական Միությունը 1920-

ական թթ. Հանձնել էր Ադրբեջանին: Անկախացումից հետո վեճը սրվել է հանգեցնելով պատերազմի, որը տևել է մինչև 1994թ.-ի զինադադարի շուրջ ձեռք բերված համաձայնությունը, որից հետո այդ տարածքի նկատմամբ հսկողությունը մնացել է Հայաստանին: Չնայած զինադադարին, լարվածությունը դեռ շարունակվում է, և ժամանակ առ ժամանակ պատերազմող երկու կողմերի միջև փոխհրաձգություն է տեղի ունենում:

Կախված լինելով էներգիայի պաշարների և հումքի ստացման արտաքին աղբյուրներից՝ Հայաստանի աշխարհագրական կղզիացումը լրջորեն խոչընդոտել է նրա տնտեսական առաջընթացին: Հարևան պետությունների հետ ունեցած հակամարտությունների գինն ու հետևանքները, դրան գումարած Խորհրդային Միության փլուզումից հետո շուկաների կորուստը, 1988թ.-ի ավերիչ երկրաշարժը, որի արհավիրքները ցայսօր տեսանելի են, Հայաստանը դարձրել են տնտեսապես խոցելի: Համատարած աղքատությունը և այս իրավիճակի հետևանքով առաջացած պետության ռեսուրսների պակասը, ինչպես նաև կոմունիստական իշխանությունից ստացած 70 տարվա ժառանգությունը մեծապես ազդում են Հայաստանի Հանրապետության դատական համակարգի և իրավական բարեփոխումների առջև ծառայած խնդիրների վրա:

### **Իրավական դաշտը**

Խորհրդային Միության փլուզումը խթան հանդիսացավ Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարացման և իրավական բարեփոխումների գործընթացի համար: 1991թ.-ին անկախություն հռչակելուց հետո Հայաստանն ընդունեց իր Սահմանադրությունը հանրաքվեի միջոցով: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, (*ընդունվել է 1995թ.-ի հուլիսի 5-ին, փոփոխվել է 2005թ.-ի նոյեմբերի 27-ին ժողովրդական հանրաքվեով*) (այսուհետ՝ ՍԱՀՄ.): Սահմանադրությամբ սահմանվել է երկրի սահմանադրական կարգը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, որով պետական իշխանությունը բաժանվում է օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի, օրենքի գերակայությունը և ճանաչված բազմակուսակցական համակարգը: Այն ստեղծել է ընդհանուր իրավասության եռաստիճան դատարաններ և առանձին Սահմանադրական դատարան, որն ունի սահմանադրական արդարադատություն իրականացնելու և օրենքի սահմանադրականության վերաբերյալ ծագած վեճերը լուծելու բացառիկ լիազորություն: *Նույն տեղը*, հոդվածներ 91-93:

Օրենսդիր իշխանությունը վերապահված է միապալատ *Ազգային ժողովին*, որը կազմված է 5 տարի ժամկետով ընտրվող 131 պատգամավորներից: *Նույն տեղը*, հոդված 63: Ազգային ժողովը ձայների պարզ մեծամասնությամբ է ընդունում օրենքների և որոշումների մեծ մասը, այդ թվում՝ նրանք, որոնց վրա Հանրապետության Նախագահը վետո է դրել, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: *Նույն տեղը*, հոդված 71: Այնուամենայնիվ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ

յուն է պահանջվում կառավարությանն անվստահություն հայտնելու համար, որը պետք է ներկայացվի կամ Հանրապետության Նախագահի, կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից: *Նույն տեղը*, հոդված 84: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը 2 անգամ անընդմեջ 2 ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին: Հանրապետության Նախագահը կարող է նաև արձակել Ազգային ժողովն Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ, եթե Ազգային ժողովը 3 ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ, կամ եթե հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը 3 ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում: *Նույն տեղը*, հոդված 74.1: Օրենքներ ընդունելուց բացի, Ազգային ժողովը Նախագահի առաջարկությամբ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին, և հայտարարում է համաձայնություն: *Նույն տեղը*, հոդված 81: Բացի այդ, Ազգային ժողովն իր նախագահի առաջարկությամբ նշանակում է Սահմանադրական դատարանի ինն անդամներից հինգին: Ազգային ժողովն է ընտրում Արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների (այսուհետ՝ ԱԽ): *Նույն տեղը*, հոդված 83:

***Հայաստանի Հանրապետության Նախագահը*** պետության գլուխն է, *նույն տեղը*, հոդված 49: Հանրապետության Նախագահն ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում: *Նույն տեղը*, հոդված 50: Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին: *Նույն տեղը*, հոդված 56: Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, Հանրապետության Նախագահը ստորագրում և հրապարակում է այն, կամ կարող է վերադարձնել այն Ազգային ժողով՝ առարկություններով և առաջարկություններով: Եթե Ազգային ժողովը վերստին ընդունում է Նախագահի կողմից վերադարձրած օրենքը, ապա Նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Նախագահը նշանակում է վարչապետ և վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին: Դատական համակարգի առնչությամբ Նախագահի լիազորությունները ներառում են ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարանների և վճարելի դատարանի դա-

տավորների, ինչպես նաև սահմանադրական դատարանի 4 անդամի նշանակումը և նրանց լիազորությունների դադարեցումը: *Նույն տեղը*, հոդված 55:

**Կառավարությունը** կազմված է վարչապետից, փոխվարչապետից և նախարարներից: *Նույն տեղը*, հոդված 85: Կառավարությունն իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: *Նույն տեղը*, հոդված 89, 74: Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների: Բացի այդ, կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ: *Նույն տեղը*, հոդված 85: Հանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը 1 ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը և օրենքներին դրանց համապատասխանության հարցը պարզելու համար: *Նույն տեղը*, հոդված 86:

**Ընդհանուր իրավասության դատարաններին** են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 22 (ընդունվել է 2007թ. փետրվարի 21-ին, դատարանները գործում են 2008թ.-ի հունվարի 1-ից): Հայաստանում գործում է 2 վերաքննիչ դատարան՝ **վերաքննիչ քաղաքացիական դատարանը** և **վերաքննիչ քրեական դատարանը**, որոնք քննում են ընդհանուր իրավասության դատարանների դեմ բերված վերաքննիչ բողոքները: Վերաքննիչ դատարանի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում: Վերաքննիչ դատարաններից յուրաքանչյուրը գործում է 16 դատավորի կազմով, ներառյալ դատարանի նախագահը: Վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բողոքները քննվում են կոլեգիալ՝ 3 դատավորի կազմով, այլ դատական ակտերի դեմ բողոքը՝ միանձնյա: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 387 (ընդունվել է 1998թ. Հուլիսի 1-ին) (այսուհետ՝ ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ):

**Վարչական դատարանն** ըստ էության քննում է Վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը, այդ թվում՝ վարչական և նորմատիվային ակտերին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց գործողություններին և անգործությանն առնչվող վեճերը: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդ-

ված 35: Չնայած որ Վարչական դատարանը գտնվում է Երևանում, այն ունի այլ նստավայրեր մարզերում: Վարչական դատարանը գործում է 16 դատավորի կազմով, ներառյալ դատարանի նախագահը, որոնցից 6-ը գործում են մարզերում: *Նույն տեղը*, հոդված 37:

**Վճռաբեկ դատարանը** Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանն է, “բացի սահմանադրական արդարադատության հարցերից”: ՄԱՀՄԱՆԱԴԲՈՒԹՅՈՒՆ, հոդված 92: Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը և նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանը բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը, ընդ որում՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտը առերևույթ (*prima facie*) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 50: Վճռաբեկ դատարանն ունի 2 պալատ՝ քրեական պալատ ու քաղաքացիական և վարչական պալատ: Վճռաբեկ դատարանի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում: Վճռաբեկ դատարանը կազմված է վճռաբեկ դատարանի նախագահից, պալատների նախագահներից և 14 դատավորից: *Նույն տեղը*, հոդված 52: Վճռաբեկ դատարանը քրեական գործերով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի համապատասխան պալատի նախագահի և պալատի դատավորների կազմով: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 41<sup>42</sup>: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարանը քննում է կոլեգիալ՝ պալատի նախագահի և առնվազն 3 դատավորի կազմով: *Նույն տեղը*, հոդված 405: Վճռաբեկ դատարանի ակտերը վերջնական են և ենթակա չեն բողոքարկման:

**Սահմանադրական դատարանը** պատասխանատու է սահմանադրական արդարադատության իրականացման համար: ՄԱՀՄԱՆԱԴԲՈՒԹՅՈՒՆ, հոդված 93: Այն գտնվում է Երևանում և գործում է 9 դատավորի կազմով, ովքեր կոչվում են “անդամներ”: *Նույն տեղը*, հոդված 99: Դատարանի լիազորությունները չեն սահմանափակվում օրենսդրության՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշմամբ և ներառում են նաև կարևոր քաղաքական նշանակություն ունեցող գործառույթներ, որոնցից են, մասնավորապես, միջազգային պայմանագրի վավերացումից առաջ դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշումը, հանրաքվեների կամ Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների հետ կապված վեճերի լուծումը, Հանրապետության Նախագահի

թեկնածուի համար առաջացած խոչընդոտների անհաղթահարելի կամ վերացած ճանաչումը, Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալը, Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն տալը և օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշում կայացնելը: *Նույն տեղը*, հոդված 100:

Հայաստանի *վարչատարածքային բաժանումը* կազմված է 10 մարզերից և 1000-ից պակաս համայնքներից, ինչպես նաև՝ մայրաքաղաք Երևանը, որն իր հերթին բաժանված է 12 վարչական տարածքի:

Հայաստանի իրավական համակարգը հիմնված է քաղաքացիական իրավունքի ավանդույթի վրա: Իրավունքի ներպետական աղբյուրների հիերարխիան հետևյալն է. Սահմանադրություն, որի նորմերը կիրառվում են ուղղակիորեն, ապա՝ օրենքներ, որոնք պետք է չհակասեն Սահմանադրությանը և ուժի մեջ են մտնում *Պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո, ապա՝ այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնք պետք է չհակասեն Սահմանադրությանը և օրենքներին, և ուժի մեջ են մտնում օրենքով նախատեսված կարգով պաշտոնական հրապարակման պահից: Վավերացված կամ հաստատված միջազգային համաձայնագրերը դառնում են Հայաստանի իրավական համակարգի անբաժանելի մասը: Որևէ համաձայնագիր չի կարող վավերացվել, եթե այն չի համապատասխանում Սահմանադրությանը: Ուժի մեջ մտած համաձայնագրերի դրույթները գերակայում են ներպետական օրենքների՝ դրանց հակասող դրույթների նկատմամբ: Հայաստանը 2002 թվականին վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ “ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ”), և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ “ՄԻԵԴ”) որոշումները գնալով ավելի կարևոր դեր են խաղում Հայաստանի արդարադատության համակարգում: 2008թ.-ին Դատական օրենսգրքի ընդունումից ի վեր Հայաստանի իրավական համակարգում գործում է դատական նախադեպի (*stare decisis*) մի տեսակը: Վճռաբեկ դատարանի կամ ՄԻԵԴ-ի դատական ակտերը պարտադիր են Հայաստանի դատարանների համար նույն կամ նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 15:

## Քրեական արդարադատության համակարգի կառուցվածքը

### *Պաշտոնատար անձինք և հաստատությունները*

20-րդ դարի սկզբին ստեղծվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը (1918-1920), և ներմուծվեց Ռուսական կայսրության դատական համակարգի մոդելի վրա հիմնված **դատական համակարգը**: Այս համակարգի կարևոր առանձնահատկությունը դատախազական ծառայության միացումն էր դատական համակարգին: 1920թ. Խորհրդային Միությանը միանալուց հետո Հայաստանի դատական համակարգի կառուցվածքը նույնն էր, ինչ մյուս Խորհրդային Հանրապետություններին: Ոստիկանությունն ու դատախազությունը պարտավոր էին քննություն կատարել և քրեական հետապնդում իրականացնել: Առաջին ատյանի դատարանները, որոնք հայտնի են որպես «ժողովրդական դատարաններ», պատասխանատու էին քրեական գործեր քննելու համար, իսկ Գերագույն դատարանը լիազորված էր վերանայել ստորադաս դատարանների քննած գործերը, ինչպես նաև հանդես գալ որպես առաջին ատյանի դատարան՝ քննելով ծանր հանցագործությունների գործեր: Բանտերը վերահսկվում էին Ներքին գործերի նախարարության կողմից:

1995 թ. Սահմանադրությամբ ներդրվեց ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան կառուցվածք, ինչպես նաև առանձին դատարան՝ օրենքների սահմանադրականությունը որոշելու բացառիկ իրավասությամբ, որն իր գործունեությունը սկսեց՝ 1996 թվականին: Վճռաբեկ դատարանը սկսել է գործել 1998 թվականին, որից 1 տարի անց սկսեցին գործել 2 վերաքննիչ դատարանները: 1996 թվականի նոյեմբերի 8-ին հրապարակվեց «Դատաիրավական բարեփոխումների» մասին Նախագահի հրամանագիրը: 1998 թվականի ընթացքում ՀՀ Ազգային ժողովը ընդունել է մի շարք օրենքներ դատարանների, դատավորների, դատախազների, փաստաբանների, արբիտրաժի և դատական ակտերի կատարման մասին: Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական և Քրեական դատավարության օրենսգրքերը ուժի մեջ են մտել 1999թ. հունվարի 12-ին, իսկ Քաղաքացիական օրենսգիրքը գործում է 1999թ. հունվարի 1-ից: Նոր օրենսդրությանը համապատասխան ձևավորվել և սկսել է գործել ՀՀ նոր դատական համակարգը. նախկին երկաստիճան դատական համակարգի փոխարեն՝ բաղկացած ժողդատարաններից և Գերագույն դատարանից, ստեղծվեց եռաստիճան դատական համակարգը՝ բաղկացած առաջին ատյանի դատարաններից, վերաքննիչ դատարաններից և Վճռաբեկ դատարանից: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, <http://www.court.am>:

Խորհրդային Միության փլուզումը և նոր քրեական (2003թ.) և քրեական դատավարության (1998թ.) օրենսգրքերի ներմուծումը արմատապես փոխեցին Հայաստանի քրեական արդարադատության համակարգը: Նոր քրեական

օրենսգրքում հիմնական փոփոխություններից մեկն այլընտրանքային պատիժների համակարգի ներմուծումը և մահապատժի վերացումն էր, որը նախատեսված էր Խորհրդային տարիների Քրեական օրենսգրքով: Բացի այդ, 1998թ. Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, սահմանադրական իրավունքների բոլոր սահմանափակումները ենթակա էին դատական վերահսկողության, այնպես որ միայն դատավորները, այլ ոչ դատախազներն էին լիազորված կիրառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք էր կալանավորումը, կամ սահմանափակել կալանավորված անձանց նամակագրությունը:

Դատական բարեփոխումների երկրորդ փուլն սկսվեց Սահմանադրության փոփոխություններով՝ 2005 թ. նոյեմբերի 27-ի ժողովրդական հանրաքվեով: Փոփոխությունները, մասնավորապես, նպատակ էին հետապնդում նվազեցնել նախագահի ինստիտուտի գերիշխող դերը և բարձրացնել դատական համակարգի անկախության աստիճանը: Այդ փոփոխությունները կյանքի կոչելու նպատակով Ազգային ժողովը 2007 թ. փետրվարին ընդունեց Դատական օրենսգիրք, որը գործում է Հայաստանի բոլոր դատարանների նկատմամբ, բացառությամբ Սահմանադրական դատարանի: Դատական օրենսգրքով միավորվեցին և փոփոխվեցին դատական համակարգի վերաբերյալ մինչ այդ գոյություն ունեցած օրենքները, և վերակազմակերպվեց դատարանների կառուցվածքը: Դատական օրենսգիրքը գործում է 2008թ. հունվարի 1-ից: Բացի այդ, Դատական օրենսգրքով ներդրվեց ընդհանուր իրավունքի (“common law”) համակարգերի նախադեպի (“precedent”) ինստիտուտին նման ինստիտուտ, որը, սակայն, օժտված է 2 առանձնահատկությամբ. առաջին, դրանով ճանաչվում է կողմերի իրավունքը՝ որպես իրավական փաստարկ մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԷՔ, հոդված 15(3): Երկրորդ, Դատական օրենսգրքով նախատեսվում է, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ: *Նույն տեղը*, հոդված 15(4):

Դատական համակարգի անկախությունն ու պրոֆեսիոնալիզմը խթանելու, ինչպես նաև գործերի կառավարումն ավելի արդյունավետ իրականացնելու նպատակով 2008թ. ի հայտ եկավ մասնագիտացված դատարանների համակարգը, որի մեջ գործում էին քրեական և քաղաքացիական դատարաններ, ինչպես նաև առանձին Վարչական դատարան: Ռեսուրսների պակասի հետևանքով, այնուամենայնիվ, դատական համակարգն ի վիճակի չէր հաջողությամբ իրականացնել մասնագիտացված դատարանների աշխատանքը և հետևապես

վերադարձավ իր նախկին և ներկայումս գործող եռաստիճան համակարգին՝ ունենալով ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ:

Քրեական գործով մեղադրյալի **պաշտպանությունը** որպես ձեռնարկատիրական գործունեություն Հայաստանում իրականացվում է միայն փաստաբանների կողմից, ովքեր փաստաբանական մասնագիտական միության անդամ են, որը պաշտոնապես հայտնի է որպես Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատ: Փաստաբանը պարտավոր է ունենալ բարձրագույն իրավաբանական կրթություն և պարտավոր է Փաստաբանների պալատի կողմից ստանալ փաստաբանական գործունեության արտոնագիր:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը պետությունը հանձնարարել է Փաստաբանների պալատին: **Հանրային պաշտպանի գրասենյակը** (այսուհետ՝ ՀՊԳ) ստեղծվել է որպես Փաստաբանների պալատի կառուցվածքային ստորաբաժանում՝ քրեական գործերով տրամադրելու անվճար իրավաբանական ծառայություններ: Այն միասնական մի հաստատություն է, որը կոչված է ամրապնդել արդարադատության մատչելիությունը ողջ Հայաստանի տարածքում անվճարունակ անձանց համար՝ պետության հաշվին բարձրորակ իրավաբանական ծառայություններ մատուցելու միջոցով: ՀՊԳ-ն ղեկավարում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և կազմված է հանրային պաշտպաններից, ովքեր արտոնագրված փաստաբաններ են և աշխատանքային պայմանագրով աշխատում են ՀՊԳ-ում: Որպես Փաստաբանների պալատի անդամներ՝ հանրային պաշտպանները ենթարկվում են մյուս բոլոր փաստաբանների նկատմամբ գործող նույն էթիկայի կանոններին: Հանրային պաշտպանի ամսեկան վարձատրությունը համարժեք է Երևան քաղաքի համայնքի դատախազի վարձատրությանը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 45 (*ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին*) (այսուհետ՝ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ): ՀՊԳ-ն անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում անվճարունակ անձանց քրեական գործերով, ինչպես նաև քաղաքացիական գործերի սահմանափակ կատեգորիաներով: Անվճար իրավաբանական ծառայություններ կարող են մատուցվել նաև մասնավոր գործունեությամբ զբաղված փաստաբանների հայեցողությամբ՝ չնայած փաստաբանության մասին գործող օրենքը չի խրախուսում *անվճար* (“pro bono”) ներկայացուցչությունը, և Հայաստանում փաստաբանների շրջանում *անվճար* ծառայություններ մատուցելու սովորույթը ձևավորված չէ:

**Քրեական գործի հարուցումը և քրեական հետապնդումն** իրականացվում է հետաքննության մարմնի, քննիչների և դատախազների կողմից: Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում և ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները հանցագործությունը և

հանցագործության կատարման համար պատասխանատու անձանց բացահայտելու համար: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆԱԳԻՐՔ, հոդված 27, տե՛ս նաև հոդված 34:

**Հետաքննության մարմինը** նախնական տեղեկություններ և ապացույցներ է հավաքում ենթադրվող հանցագործության վերաբերյալ և որոշում կայացնում, թե արդյոք քրեական գործ պետք է հարուցվի, թե՛ ոչ: *Նույն տեղը*, հոդված 57, 180-185: Հետաքննության փուլը կարող է տևել ոչ ավել, քան 10 օր քրեական գործ հարուցելու պահից, որից հետո հետաքննության մարմինը գործն ուղարկում է քննիչներին: *Նույն տեղը*, հոդված 188, տե՛ս նաև հոդված 57: Հետաքննության մարմինը հիմնականում ուստիկանությունն է, որը զբաղվում է քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների գործերով: Միևնույն ժամանակ գոյություն ունեն մասնագիտացված քննչական բաժիններ, որոնք զբաղվում են հատուկ հանցագործություններով, ինչպիսիք են հարկային, մաքսային կամ ազգային անվտանգության հետ կապված հանցագործությունների գործերը, մինչդեռ զորամիավորումների հրամանատարները և ռազմական ուստիկանությունը զբաղվում են զինվորական հանցագործությունների գործերով: *Նույն տեղը*, հոդված 56:

**Քննիչը** պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով իրականացնում է նախաքննություն: *Նույն տեղը*, հոդված 55: Քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և կամ գործն ընդունել իր վարույթ, կամ ուղարկել այլ քննիչի կամ հետաքննության մարմնի: Քննիչը նաև իրավասու է մերժել քրեական գործ հարուցելը: Քրեական գործն իր վարույթ ընդունելուց հետո ուղղություն է տալիս քննությանը, ընդունում է անհրաժեշտ որոշումներ, իրականացնում է քննչական և այլ դատավարական գործողություններ, ինչպես նաև պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողությունների օրինական ու ժամանակին կատարման համար: *Նույն տեղը*:

**Դատախազը** կարևոր դեր ունի Հայաստանի քրեական արդարադատության համակարգում: Դատախազը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասությունների սահմաններում և քրեական դատավարության բոլոր փուլերում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: Իր լիազորություններն իրականացնելիս դատախազն անկախ է և ղեկավարվում է միայն օրենքով: *Նույն տեղը*, հոդված 52:

Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը՝ ընդհանուր վերահսկողություն իրականացնելով համակարգի նկատմամբ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 1 (*ընդունվել է 2007թ.*

փետրվարի 22-ին) (այսուհետ՝ ԴՍԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ): Դատախազությունը կազմված է գլխավոր դատախազությունից ու Երևան քաղաքի և մարզային համապատասխան կառուցվածքային միավորներից, ինչպես նաև զինվորական կենտրոնական դատախազությունից և կայազորների զինվորական դատախազություններից: *Նույն տեղը*, հոդված 8: Հայաստանի զինվորական դատախազը ղեկավարում է զինվորական կենտրոնական դատախազությունը և կայազորների զինվորական դատախազությունները և ի պաշտոնե գլխավոր դատախազի տեղակալն է: *Նույն տեղը*, հոդված 19: Դատախազությունը լիազորված է օրենքով նախատեսված կարգով հարուցել քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան, բողոքարկում է դատարանների որոշումները և հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: *Նույն տեղը*, հոդված 4, *տե՛ս* նաև ՍԱՀՄ. հոդված 103: 2007 թվականին նորաստեղծ Հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ՝ ՀՔԾ) պարտականություն ստանձնեց իրականացնել պետական հատուկ ծառայություն իրականացնող բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարված հանցագործությունների նախաքննությունը: ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 2 (*ընդունվել է* 2007թ. նոյեմբերի 28-ին): Հատուկ քննչական ծառայությունն իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախաքննություն: Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են Գլխավոր դատախազը և նրա լիազորված դատախազները: *Նույն տեղը*, հոդված 2:

Նախքան 2001 թվականը *քրեակատարողական ծառայությունը* Հայաստանում գործում էր Ներքին գործերի նախարարության ներքո, իսկ Եվրոպայի խորհրդին անդամակցելով պարտավորությունների ստանձման արդյունքում քրեակատարողական ծառայությունը տեղափոխվեց Արդարադատության նախարարության համակարգ (այսուհետ՝ ԱՆ): ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 2 (*ընդունվել է* 2001 թվականի հուլիսի 26-ին): Այժմ, այն ԱՆ-ի առանձին կառուցվածքային ստորաբաժանում է: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 2 (*ընդունվել է* 2005թ. հուլիսի 8-ին) (այսուհետ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ): Հայաստանի Հանրապետության ԱՆ-ի Քրեակատարողական ծառայությունը կազմված է 13 քրեակատարողական հիմնարկներից: Բացի բուժական ուղղիչ հիմնարկների, Հայաստանում գոյություն ունեն 4 մակարդակի ուղղիչ հիմնարկներ՝ բաց, որտեղ

դատապարտյալներն ունեն տեղաշարժվելու ամենաշատ ազատությունը, կիսաբաց, կիսափակ և փակ, որտեղ դատապարտյալները սովորաբար մեկուսացված են մի քանի մարդու համար նախատեսված խցերում: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 99, 103-106 (*ընդունվել է* 2004թ. դեկտեմբերի 24-ին) (այսուհետ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ): Համաձայն կատարված հանցագործության ծարուքյան, դատապարտյալները տեղաբաշխվում են տարբեր տեսակի ուղղիչ հիմնարկներում և կարող են տեղափոխվել իրենց դրսևորած վարքին համապատասխան: Հայաստանի քրեակատարողական համակարգի կենտրոնական մարմինը ԱՆ-ի Քրեակատարողական վարչությունն է (այսուհետ՝ ՔՎ): ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 6:

***Այլընտրանքային պատիժների կատարման բաժինը*** (այսուհետ՝ ԱՊԿԲ) Քրեակատարողական վարչության կազմում գործող մարմին է: Այն ունի տարածքային մարմիններ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքի համայնքներում: Ներկա պահին 7 տարածքային մարմիններ գործում են Երևան քաղաքի համայնքներում, իսկ տասը՝ մարզերում: Այս բաժնում իրականացվում է ազատությունից զրկելու հետ չկապված քրեական պատիժների կատարումը, վերահսկողություն է իրականացնում պատժի հետաձգումով ազատված անձանց նկատմամբ, իրականացնում է պատժի պայմանական կիրառում, ինչպես նաև վերահսկում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց: *Նույն տեղը*, հոդված 6:

### ***Ընթացակարգերը***

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրքը նախատեսում է ***պատժի*** հետևյալ տեսակները՝ տուգանք, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, գույքի բռնագրավումը, կալանքը<sup>1</sup>, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկում որոշակի ժամկետով և ցմահ ազատազրկում: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 49, 51-ից 60 (*ընդունվել է* 2003թ. ապրիլի 18-ին) [այսուհետ՝ ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ]:

<sup>1</sup> Կալանք տերմինը Հայաստանում օգտագործվում է երկու համատեքստում: Որպես խափանման միջոց այն վերաբերում է հանցագործության մեջ կասկածվող անձին պաշտոնապես ազատությունից զրկելուն: *Տե՛ս* ստորև, Գործոններ 7 և 8: Որպես պատժատեսակ, կալանքը վերաբերում է տասնհինգ օրից մինչև երեք ամիս ժամկետով ազատազրկմանը, որը նշանակվում է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքում: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 57(1): Ազատազրկումը դատապարտյալին անազատության մեջ պահելն է երեք ամսից տասնհինգ տարի ժամկետով (իսկ դատավճիռների համակցության ժամանակ՝ առավելագույնը քսան տարի ժամկետով): *Նույն տեղը*, հոդված 59:

Քրեական օրենսգիրքը Հայաստանի քրեական արդարադատության համակարգում նախատեսում է նաև **հանցագործության 4 տեսակ՝** ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ: *Նույն տեղը*, հոդված 19: Ոչ մեծ ծանրության հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քրեական օրենսգիրքը նախատեսում է 2 տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցող առավելագույն պատիժ կամ ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ կամ անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար առավելագույն պատիժը չի գերազանցում 3 տարի ժամկետով ազատազրկումը: Միջին ծանրության հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քրեական օրենսգիրքը նախատեսում է 5 տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցող առավելագույն պատիժ կամ անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար առավելագույն պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը: Ծանր հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քրեական օրենսգիրքը նախատեսում է 10 տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցող առավելագույն պատիժ: Առանձնապես ծանր հանցագործություններ են դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Քրեական օրենսգիրքը նախատեսում է 10 տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ առավելագույն պատիժ: *Նույն տեղը*:

Քրեական գործով կասկածյալին անազատության մեջ պահելն սկսվում է **արգելանքի վերցնելով**: ՔՐ. ՂԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 128: Արգելանքի վերցնելու պահից 3 ժամվա ընթացքում կասկածյալը պաշտոնապես **ձերբակալվում է** և կարող է ձերբակալված մնալ ոչ ավելի, քան 72 ժամ: *Նույն տեղը*, հոդվածներ 129, 130: 72 ժամվա ընթացքում դատախազը պետք է որոշում կայացնի ձերբակալվածին մեղադրանք առաջադրելու վերաբերյալ, իսկ դատարանը պարտավոր է դատական նիստում քննել **կալանավորման** հարցը և որոշում կայացնել նրան կալանավորելու կամ գրավ կիրառելու կամ էլ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժելու և ազատ արձակելու մասին: *Նույն տեղը*, հոդված 137, 285:

**Ղատապարտվելուց** հետո դատապարտյալի նկատմամբ կարող է նշանակվել ազատազրկման ձևով պատիժ կամ այլընտրանքային պատիժներ, այդ թվում տուգանք, պատիժը պայմանականորեն չկիրառելը, հանրային աշխատանք, գույքի բռնագրավում, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 49: ԱՊԿԲ-ն վերահսկողություն է իրականացնում այլընտրանքային պատիժ կրող դատապարտյալների նկատմամբ:

Ազատագրկման ձևով պատիժ կրող անձը կարող է **պայմանական վաղաժամկետ ազատվել**: Նույն տեղը, հոդված 76(1): Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը: Եթե հիմնարկի վարչակազմը որոշում է կայացնում միջնորդագիր ներկայացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու մասին, ապա միջնորդագիրը պետք է հավանության արժանանա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Անկախ հանձնաժողով), որի հավանությունը ստանալու դեպում միջնորդագիր է ներկայացվում իրավասու դատարան: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 115: ԱՊԿԲ-ն նույնպես վերահսկողություն է իրականացնում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների նկատմամբ:

Հայաստանը չունի **անչափահասների արդարադատությունն** իրականացնող հատուկ և առանձին դատական կառուցվածք: ՀՀ Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերը նախատեսում են հատուկ կանոններ անչափահասների հետ վարվելու վերաբերյալ, այնուամենայնիվ, ինչպես անչափահասների, այնպես էլ չափահասների կողմից կատարված հանցագործությունների արդարադատությունն իրականացվում է միևնույն դատական համակարգի շրջանակներում:

## Հայաստանի Հանրապետություն. ԱԶԸԳԳ-ի 2010թ. վերլուծությունը

Չնայած որ սույն գնահատման մեջ տրված հարաբերակցության գնահատականների հիման վրա կարելի է ընդհանուր պատկերացում կազմել առկա որոշ խնդիրների հարաբերական վիճակի մասին՝ ABA ROLI-ն ընդգծում է այն հանգամանքը, որ այս գործոնային հարաբերակցություններն ու եզրակացություններն առավելագույն օգուտ կարող են տալ այն դեպքում, եթե դիտարկվեն Հայաստանի վերլուծությունների համադրությամբ:

### I. Անձին ազատությունից զրկելու հետ կապված բոլոր փուլերի դիտարկում

#### Գործոն 1. Պատշաճ դատավարական ընթացակարգ

*Ազատությունից զրկված անձինք, այդ թվում՝ կալանավորված անձինք, օժտված են պատշաճ դատավարական ընթացակարգով նախատեսված բոլոր իրավունքներով, ներառյալ՝ իրավասու դատարանի կողմից գործը քննելու, պաշտպան ունենալու, իրենց սեփական պաշտպանությանն արդյունավետ մասնակցելու իրավունք:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ չեզոք</u>
<p>Իրավասու դատարանի կողմից գործը քննելու, պաշտպան ունենալու և սեփական պաշտպանությանը մասնակցելու իրավունքներն ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ: Գործնականում նյութատեխնիկական խնդիրները երբեմն խանգարում են հանրային պաշտպանների կողմից արդյունավետ օգնություն տրամադրելուն, իսկ գործը քննելու և պաշտպան ունենալու իրավունքները հաճախ կրում են <i>pro forma</i> (ձևական) բնույթ և գործնականում քիչ արդյունք են տալիս, քանի որ շատերի կարծիքով կալանավորում կիրառելու մասին որոշումները կանխորոշված են:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Ազատությունից զրկված անձի հիմնական իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: ՍԱՀՄ., հոդված 16: Հայաստանում յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք և մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված հատուկ դեպքերում և կարգով, այդ թվում՝ երբ անձը դատապարտվել է հանցագործություն

կատարելու համար իրավասու դատարանի կողմից, երբ առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, երբ անհրաժեշտ է անձին ազատությունից զրկել նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով և անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Ազատությունից զրկված անձն իրավունք ունի այդ մասին տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին և պետք է ազատ արձակվի, եթե դատարանը 72 ժամվա ընթացքում կալանավորման մասին որոշում չի կայացրել: Մարդուն չի կարելի ազատությունից զրկել այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարել իր քաղաքացիաիրավական պարտավորությունները և չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով: *Նույն տեղը*:

Ազատությունից զրկելու կարգը սահմանված է նաև Քրեական դատավարության օրենսգրքով, որը պատշաճ քննության երաշխիքներ է նախատեսում դատավարության բոլոր փուլերում՝ առաջին անգամ դատարան ներկայանալու պահից մինչև վերջին բողոքի վերաբերյալ դատավճիռ կայացնելու պահը: Ազատությունից զրկել թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 11: Յուրաքանչյուր ոք, ով հանցագործություն կատարելու կասկածանքով արգելանքի տակ է վերցվել պետք է պաշտոնապես ձերբակալվի արգելանքի վերցնելու պահից 3 ժամվա ընթացքում: Դատարանը 72 ժամվա ընթացքում որոշում է կայացնում անձին կալանավորելու կամ չկալանավորելու մասին: *Նույն տեղը*, հոդվածներ 129-131<sup>1</sup>, հոդված 11, *տե՛ս նաև* ստորև՝ Գործոններ 7-8: Քննիչի կամ դատախազի միջնորդությամբ մինչդատական վարույթում կալանքի հարցը դատարանը քննում է յուրաքանչյուր 2 ամիսը մեկ, մինչև դատաքննության սկիզբը, իսկ մեղադրյալը դատաքննություն ժամանակ կարող է միջնորդել դատարանին վերանայել իր կալանավորման հարցը: *Նույն տեղը*, հոդված 138, *տե՛ս նաև* ստորև՝ Գործոններ 9-10: Յուրաքանչյուր ձերբակալվածի կամ կալանավորվածի հաղորդվում են ձերբակալման կամ կալանավորման հիմքերը և նրա դեմ առաջադրված մեղադրանքի էությունը, իսկ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը և դատարանը պարտավոր է ազատ արձակել անազատության մեջ ապօրինի պահվող անձին: *Նույն տեղը*, հոդված 11: Նախքան մեղադրանք առաջադրելը ձերբակալված անձին անվանում են «կասկածյալ», իսկ մեղադրանք առաջադրելուց հետո նա հանդես է գալիս որպես «մեղադրյալ»:

Բոլորը հավասար են օրենքի առջև: *Նույն տեղը*, հոդված 8: Յուրաքանչյուր ոք քրեական դատավարության ժամանակ իրավունք ունի ստանալ իրավաբանական օգնություն, իսկ քրեական վարույթն իրականացնող մարմինը, որը կարող է լինել ոստիկանությունը կամ հետաքննության մարմինը մինչ ձերբակալման փուլում, նաև քննիչը՝ ձերբակալման փուլում կամ կասկածյալին

մեղադրանք առաջադրելուց հետո՝ նաև դատարանը, պարտավոր է ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Մեղադրող կողմը չի կարող արգելել կասկածյալի փաստաբանին մասնակցել իր վստահորդի հարցաքննությանը: Քրեական վարույթն իրականացնող մարմինը նաև իրավունք ունի ապահովել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը, եթե նա անվճարունակ է: *Նույն տեղը*, հոդված 10:

Յուրաքանչյուր ոք ունի անմեղության կանխավարկածի պահպանմամբ արդար դատաքննության իրավունք, որը սովորաբար հրապարակային է: Բոլոր քրեական գործերը պետք է քննվեն անկախ և անաչառ դատարանի կողմից: Դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակիցներին արգելվում է մասնակցել գործին, որում նրանք ուղղակի կամ անուղղակի շահագրգռված են գործի ելքով: Մեղադրող կողմը պետք է ապահովի գործի լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, ներառյալ՝ մեղավորությունը հիմնավորող կամ արդարացնող ապացույցները, ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները: Դատարանը պարտավոր է հանգամանալից կերպով քննել մեղադրյալին արդարացնող բոլոր ապացույցները: *Նույն տեղը*, հոդված 17: Հանցագործության համար կասկածվողը պետք է համարվի անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ հիմնավոր ապացույցներով և նա չի դատապարտվել՝ յուրաքանչյուր կասկած մեկնաբանելով մեղադրյալի օգտին, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: *Նույն տեղը*, հոդված 18: Դատական քննությունը դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ միայն հասարակական կարգը, հասարակական արժեքները, պետական անվտանգությունը, կողմերի անձնական կյանքը կամ արդարադատության շահը պաշտպանելու նպատակով, սակայն դատավճիռը և վերջնական որոշումը պետք է հայտարարվեն հրապարակայնորեն: *Նույն տեղը*, հոդված 16:

Յուրաքանչյուր կասկածյալ կամ մեղադրյալ ունի պաշտպանության և իր դեմ ցուցմունք չտալու իրավունք: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին կամ մեղադրյալին բացատրել նրա իրավունքները և ապահովել, որ նա ունենա իրեն պաշտպանելու հնարավորություն և համապատասխան դեպքերում գործին մասնակից դարձնելու նրա օրինական ներկայացուցչին: Կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի միջոցով: Կասկածյալին կամ մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ կամ որևէ աջակցություն ցույց տալ վարույթն իրականացնող մարմնին: *Նույն տեղը*, հոդված 19: Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: *Նույն տեղը*, հոդված 20: Մեղադրող և պաշտպանության կողմերի միջև մրցակցությունն ապահովված է օրենքով, և երկու կողմերն էլ իրավունք ունեն մասնակցելու ինչպես առաջին ատյանի, այնպես էլ վերաքննիչ դատարաններում գործի քննությանը, մինչդեռ միայն բողոք բերած

անձն իրավունք ունի ներկա գտնվելու գործի քննությանը Վճռաբեկ դատարանում: *Նույն տեղը*, հոդված 23:

Վճռաբեկ դատարանը 2009թ. մի գործով հաստատել է, որ Եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները տարածվում են այն անձանց վրա, ովքեր արգելանքի տակ են վերցվել նախքան պաշտոնական ձերբակալումը, ներառյալ՝ արգելանքի տակ վերցնելու մասին տեղեկանալու և արգելանքի տակ վերցնելու պատճառն իմանալու, պաշտպան ունենալու, ինչպես նաև սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքները: *Գազիկ Միքայելյանի գործը*, § 1, թիվ ԵԱԴԴ/0085/06/09 (2009թ. դեկտեմբերի 18): Այնուամենայնիվ, հետաքննության փուլում առկա է իրավական բաց, որը ոստիկաններին թույլ է տալիս հարցաքննել անձանց առանց նրանց կասկածյալի կարգավիճակ տալու և հաճախ առանց պաշտպանի մասնակցության: Տվյալ բացի մանրամասն քննարկման համար *տե՛ս* ստորև՝ Գործոն 7: Ըստ ստացված տեղեկությունների, պաշտոնապես չձերբակալված անձանց պաշտպան ունենալու իրավունքից զրկելը տարածված և հաճախակի հանդիպող խնդիր է, որն ազդում է պատշաճ դատավարական ընթացակարգի վրա: Անձինք, ովքեր առանց կասկածյալի կարգավիճակ ունենալու հրավիրվում են ցուցմունք տալու, հաճախ չեն պահանջում կամ չեն բերում պաշտպան՝ կամ որովհետև չգիտեն (տեղեկացված չեն), որ Քրեական դատավարության օրենսգրքի 86(10) հոդվածի համաձայն նրանք այդ իրավունքն ունեն, կամ էլ վախենում են, որ մեղավորի տպավորություն կթողնեն, եթե պաշտպանի հետ ներկայանան: Բացի այդ, շատ քննիչներ և անգամ որոշ հանրային պաշտպաններ տեղյակ չէին, որ որպես կասկածյալ ճանաչված անձի պաշտպան ունենալու իրավունքը գործում է արգելանքի տակ վերցնելու պահից, ինչը կարող է չափազանց անբարենպաստ լինել մեղադրյալների համար, քանզի պրակտիկայում ընդունված է հարցաքննություն անցկացնել արգելանքի վերցնելու և ձերբակալման միջև ընկած ժամանակահատվածում: Ըստ փաստաբանների, գործնականում պաշտպան ունենալու իրավունքն ընդհանուր առմամբ, եթե ոչ միշտ, ապահովվում է պաշտոնական ձերբակալման պահից կամ արգելանքի վերցնելու պահից: Այն կասկածյալները, ովքեր ի վիճակի չեն պաշտպան ունենալ, կարող են պահանջել քննիչից՝ դիմելու հանրային պաշտպանին՝ մի ընթացակարգ, որն ասես հաճախ չարաշահումների տեղիք է տալիս, սակայն ներկայացվում է, որ գործնականում լավ է աշխատում: Կասկածյալի պահանջի հիման վրա քննիչը պարտավոր է գրավոր որոշում կայացնել հանրային պաշտպան ներգրավելու մասին և դիմել Հանրային պաշտպանի գրասենյակին: Հանրային պաշտպանները հայտնել են, որ սովորաբար կասկածյալի պահանջն ստանալուց անմիջապես հետո տեղեկացվում են և չեն լսել մի դեպք, երբ կասկածյալին մերժեն հանրային պաշտպան տրամադրելու խնդրանքը: Թեև, հանրային պաշտպաններից մեկը նշել է, որ հանրային պաշտպանները իրականում երբևիցե հնարավորություն չեն էլ ունենա իմանալու, արդյո՞ք կասկածյալի պահանջը մերժվել է, թե՛ ոչ: Հար-

ցազրույցների շատ մասնակիցներ նշել են, որ անվճարունակությունը հանրային պաշտպան ունենալու միակ չափորոշիչն է, և քանի որ շատ անվճարունակ հայեր կան, այս չափորոշիչը հեշտությամբ պահպանվում է:

Հանրային պաշտպանները նաև հաճախ բողոքել են, որ ռեսուրսների պակասն ազդում է իրենց վստահորդներին արդյունավետ օգնություն տրամադրելու հնարավորության վրա: Հանրային պաշտպանի գրասենյակներում աշխատողների պակաս կա, և ստացված տեղեկությունների համաձայն, մեկ հանրային պաշտպանը սովորաբար միաժամանակ ունենում է 10 կամ ավելի ընթացիկ գործ: Հաճախ դատական նիստերը նշանակվում են միևնույն ժամին, կամ նրանց վստահորդները կալանավորված են լինում աշխարհագրական առումով հեռու հիմնարկներում, որոնց միևնույն օրը պահանջվում է տեսակցել: Դրությունը հատկապես լուրջ է շրջաններում, որտեղ հանրային պաշտպաններից ոմանք ունեն ավելի քան 200 գործ, որոնց վերաբերյալ վերջնական որոշումը կայացվել է և առկա են բողոքարկման հիմքեր, սակայն չեն բողոքարկվել հանրային պաշտպանի ծանրաբեռնվածության պատճառով: Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված վիճակագրության համաձայն, 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում Երևանում գործող 17 հանրային պաշտպանները վարույթում ունեցել են 529 գործ, 333 մեղադրյալի նկատմամբ (որից 11-ն անչափահաս) 323 գործով վճիռ է կայացվել: Նույն ժամանակամիջոցում մարզերում 19 հանրային պաշտպանները (ովքեր տեղաբաշխված են 10 մարզում՝ յուրաքանչյուրում մոտ 2 հանրային պաշտպան) ունեցել են 765 գործ, որոնցից 736 մեղադրյալի (որից 98-ն անչափահաս) նկատմամբ 606 գործով դատավճիռ է կայացվել: Ըստ ստացված տեղեկությունների, Մեղրիում հանրային պաշտպաններ ընդհանրապես չկան: Որոշ տեղեկություններով էլ շրջաններում քննիչները որոշում են չներգրավել կոնկրետ հանրային պաշտպանի, քանի որ տվյալ հանրային պաշտպանը չափազանց համառ է իր վստահորդի շահերը պաշտպանելիս:

Նշվել է նաև, որ եղել դեպքեր են, երբ կալանավորման վերաբերյալ առաջին նիստն անցկացվել է առանց պաշտպանի ներկայության և դատարանը մերժել է նաև նախնական կալանավորման երկամսյա ժամկետը երկարացնելու նիստին պաշտպանի մասնակցությունը, իսկ որոշ դեպքերում էլ նաև նիստերը անցկացվել են առանց մեղադրյալի ներկայության: Որոշ դատավորներ հայտնել են, որ մինչդատական վարույթում կալանավորելու վերաբերյալ պետք է որոշում կայացնեն նախքան օրենքով նախատեսված ժամկետի լրանալը, նույնիսկ եթե այդ ժամկետը համընկնում է հանգստյան օրերի կամ տոների հետ կամ եթե փաստաբանը չի կարող ներկա լինել գործի քննությանը:

Փաստաբանները նշել են նաև, որ նրանք հնարավորություն չունեն ծանոթանալու գործի նյութերին մինչև նախաքննության ավարտը՝ որը կարող է տևել մինչև 1 տարի, եթե մեղադրյալը գտնվում է մինչդատական կալանքի տակ, իսկ հակառակ դեպքում ձգվել անորոշ ժամանակ: Այս հանգամանքը նրանց համար

դժվարեցնում է նախնական կալանքի բողոքարկումը մինչդասական փուլում: Ըստ ստացված տեղեկությունների, ինչպես մինչդասական փուլում կալանավորելու մասին միջնորդությունները, այնպես էլ դրանք բավարարելու մասին որոշումը հաճախ վատ են պատճառաբանված և հիմնավորված, ինչի հետևանքով էլ դժվարանում է բողոքարկումը: Փաստաբանները նշել են նաև, որ պատիժը նշանակվում է դատավճռի կայացման ժամանակ, այնպես որ հնարավորություն չի լինում առանձին փաստարկներ ներկայացնել առավել մեղմ կամ ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու վերաբերյալ: *Տե՛ս* ստորև՝ Գործոններ 14-15:

ԱՆ-ը, որպես կանոն, միայն թարգմանում է ՄԻԵԴ-ի այն գործերը, որոնցում Հայաստանը կողմ է հանդիսանում, ինչը, ըստ տրամադրած տեղեկությունների, պայմանավորված է թարգմանության համար հատկացված ֆինանսավորման պակասով: Այս հանգամանքը անհնարին է դարձնում անզլերեն, ֆրանսերեն կամ ՄԻԵԴ-ի գործերը թարգմանվող այլ ոչ պաշտոնական լեզուներին չտիրապետող դատավորների և փաստաբանների համար մուտք ունենալ ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա, որը Հայաստանի օրենսդրության համաձայն ունի նախադեպային արժեք և կարող է վճռորոշ լինել գործերի լուծման համար: Այնուամենայնիվ, կազմակերպությունների կողմից ջանքեր են գործադրվել, այդ թվում՝ ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի Դատախազության զարգացման, աջակցման և վերապատրաստման արտասահմանյան գրասենյակի (այսուհետ՝ OPDAT) և ABA ROLI-ի կողմից, ուսուցանել դատավորներին և մյուս իրավաբաններին ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը՝ մանրամասն քննարկելով Կոնվենցիայի հինգերորդ հոդվածը (Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք): Փաստաբանների պալատի կողմից աշխատանքներ են տարվում ինտերնետային կայք ունենալու ուղղությամբ, որում ՄԻԵԴ-ի գործերը տեղադրվելու են ռուսերեն լեզվով, իսկ Դատավորների միությունը, ինչպես հայտնի է, աշխատանքներ է տանում ՄԻԵԴ-ի համապատասխան վճիռները թարգմանելու ուղղությամբ:

Հարցազրույցների մասնակիցները նաև հայտնել են, որ դատարանները հաճախ չեն հետևում պատշաճ քննության համար սահմանված չափանիշներին հատկապես քաղաքականորեն խոցելի գործերում, որն էլ հիմնավորված է միջազգային դիտորդների եզրակացություններով: Մասնավորապես, Հայաստանի իրավաբանները և միջազգային դիտորդները նույնպես բարձրացրել են Հայաստանի դատական իշխանության՝ գործադիր և օրենսդիր իշխանությունների ազդեցությունից անկախ լինելու հարցերը: Այս խնդրի վերաբերյալ վերջերս տեղի ունեցած և մեծ հնչեղություն ստացած օրինակը կապված է 2008թ. մարտի 1-ի քաղաքական հուզումներից ծագած գործերի հետ: Փետրվարի 19-ին կայացած վիճարկվող նախագահական ընտրություններից հետո ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկել համեմատաբար առանց բռնության իրականացվող քաղաքացիական խռովության դեմ: Ուժային գործողությունների արդյունքում զոհվել են մի շարք քաղաքացիներ, իսկ ընդդիմության

մի քանի ղեկավարներ և այլ քաղաքացիներ երկար ժամանակ անազատության մեջ են գտնվել: 2008թ.-ի մարտի 1-ի դեպքերից սկիզբ առած քրեական գործերի քննությունը կարևոր մարտահրավեր էր Հայաստանի դատական իշխանության համար: Ընդհանուր հաշվով դատարանները քննել են ավելի քան 100 գործ, այդ թվում՝ նախկին բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ մեծ հնչեղություն ստացած մի քանի գործեր: Այս գործերը մի շարք իրավաբանականների և միջազգայնագետների կարծիքով շուրջ-դատավարություններ են եղել, որտեղ գործադիր մարմինը փորձել է ապացուցել, որ քաղաքացիական խռովությունները և դրան հաջորդող բռնությունը ունեցել է քրեական, այլ ոչ-քաղաքական դրդապատճառներ: Ընդդիմության ակտիվիստները մեղադրվել են պետական իշխանությունը յուրացնելու և քաղաքացիական խռովություն կազմակերպելու մեջ: Գործին տեղական և միջազգային մակարդակով մանրակրկիտ հետևել են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունները և մարդու իրավունքների գրասենյակը (այսուհետ՝ ԺՀՄԻԳ): Դատական իշխանության վրա գործադրվող ուղղակի ճնշումը գուցե ավելի օրենսդրական ազդեցությամբ, որի արդյունքում արագ կերպով փոփոխություններ կատարվեցին Հայաստանի քրեական օրենսգրքում՝ գործադիր իշխանության վրա դրական անդրադարձ ունեցող արդյունք ապահովելու նպատակով:

Օրենքով ամրագրված քրեական գործի պատշաճ քննության դատավարական երաշխիքները ապահովելու դատական իշխանության հնարավորությունը կասկածի տակ առնվեց մարտի 1-ի գործերից հետո: ԺՀՄԻԳ-ը նշել է, որ այս գործերի քննությունը չի համապատասխանում արդար դատաքննության հիմնական չափանիշներին, ներառյալ այնպիսի չափանիշներին, որոնք վերաբերում են անմեղության կանխավարկածին, կողմերի հավասարությանը, դատավարության մրցակցային լինելու սկզբունքին, դատավորների անաչառությանն ու ազնվությանը, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի միջոցով ձեռք բերված ապացույցների օգտագործմանը, վկաների վրա ճնշում գործադրելուն, ինչպես նաև արդյունավետ ինքնապաշտպանության իրավունքին: Դատավարությունների մոնիթորինգի իր զեկույցում ԺՀՄԻԳ-ն իր մտահոգությունն է արտահայտել Հայաստանում ազատության իրավունքի իրականացման կապակցությամբ՝ հատուկ վկայակոչելով, որ ազատագրված մասին որոշումները պատշաճ կերպով պատճառաբանված չեն և չեն պարունակում հղում յուրաքանչյուր գործի անհատական փաստական հանգամանքներին: Ըստ ԺՀՄԻԳ-ի, կալանավորումը, որպես խափանման միջոց կիրառելը, դարձել է ստանդարտ կանոն, այլ ոչ բացառություն, ինչպես պահանջվում է միջազգային չափանիշներով, իսկ այլընտրանքային միջոցները հազվադեպ են կիրառվել: ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ, ՀԱՅԱՍՏ

ՏԱՆՈՒՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 6 (ԱՊՐԻԼ 2008-ՀՈՒԼԻՍ 2009) (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ):<sup>2</sup>

Բացի մարտի 1-ի գործերից, հարցազրույցների մասնակիցները հղում են կատարել գործադիր իշխանության կողմից գործադրվող ազդեցության այլ օրինակների վրա, ներառյալ՝ քրեական արդարադատության համակարգի օգտագործումը որպես քաղաքական գործիք: Հարցազրույցների մասնակիցներից մի քանիսը վկայակոչել են գործեր, որտեղ մարդու իրավունքների գործերով վստահորդների շահերը պաշտպանելիս փաստաբանների նկատմամբ դատական հետապնդում սկսելու սպառնալիքներ են ներկայացրել կամ, ըստ մասնակիցների, անհիմն կամ հորինված մեղադրանքների հիման վրա իրականում ձերբակալել են՝ վերջիններիս վախեցնելու նպատակով և ստիպելու հրաժարվել մարդու իրավունքների ոլորտում իրականացվող իրեն պաշտպանությունից:

Համաձայն որոշ աղբյուրների, դատավորները վախենում են պատասխանատվության ենթարկվելուց կամ պաշտոնից հեռացվելուց քաղաքական գործերում «սխալ» որոշում կամ վճիռ կայացնելու համար՝ իրավիճակ, որը թույլ չի տալիս նրանց ուշադիր ուսումնասիրել գործը: Հարցազրույցների մասնակիցներից շատերը նշել են, որ պրակտիկայում, սակայն ոչ օրենքում, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը վերահսկվում է դատախազության կողմից: Չնայած, որ օրենքի համաձայն դատավորները չեն կարող նկատողություն ստանալ կամ հեռացվել պաշտոնից՝ բացառությամբ Արդարադատության խորհրդի որոշման կամ առաջարկի հիման վրա, ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 153(1), ենթադրվում է, որ գործադիր իշխանությունը զգալի վերահսկողություն է իրականացնում այս գործընթացի նկատմամբ, և դատավորները նկատողություն կստանան կամ

---

<sup>2</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Դատավարությունների մոնիտորինգի զեկույցը սպառնիչ եզրակացություններ է արել ԱԶԸԳԳ-ի այս զեկույցում վերլուծված շատ խնդիրների վերաբերյալ, մասնավորապես կապված 2008թ. մարտի 1-ի խռովությունից ծագած 93 գործերի հետ: Չնայած այն բանին, որ ԱԶԸԳԳ-ի այս զեկույցն ավելի լայն է, քան ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի զեկույցը (մոնիտորինգի ենթարկված 93 գործերը կազմում են տարեկան քրեական գործերի թվի մոտ 3,6%-ը), սակայն պետք է նշել, որ ԺՀՄԻԳ-ը այդ 93 գործում կրկնվող և լուրջ խախտումներ է գտել կապված ազատության իրավունքի, հրապարակային դատաքննության իրավունքի, անմեղության կանխավարկածի, կողմերի հավասարության սկզբունքի, մրցակցային դատավարության և ոստիկանության ցուցմունքների վրա հիմնվելու, ինչպես նաև իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի, ապօրինի ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու, իրեն անձամբ պաշտպանելու իրավունքի, արագացված դատավարության, դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի և դատավորների անաչառության հետ, որոնք տեղի են ունեցել 2008թ. ապրիլ և 2009թ. հուլիս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում: *Տե՛ս* ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ-ի Համառոտ ակնարկը: Այս գնահատմամբ պարզվել է, որ ԺՀՄԻԳ-ի շատ եզրակացություններ առկա են նաև կալանքը որպես խափանման միջոց կրառելու ընդհանուր համակարգում:

կհեռացվեն պաշտոնից, եթե չհամագործակցեն դատախազության հետ քաղաքական շահ հետապնդող գործերով: Ոմանք հեռուն գնալով՝ ասում էին, որ դատավորների նկատմամբ կարող է հետապնդում իրականացվել, եթե վերջիններիս որոշումները չհամապատասխանեն դատախազության ցանկություններին: Ինչևէ, հարցազրույցների մյուս մասնակիցները, ներառյալ՝ դատավորները, չեն համաձայնվել այս գնահատականի հետ՝ նշելով գործեր, անգամ քաղաքականացված գործեր, որոնց դեպքում դատարանները գործը լուծել են հոգուտ պաշտպանության կողմի՝ առանց հակահարված ստանալու:

Հարցազրույցների մասնակիցներից շատերը կարծում էին, որ այլընտրանքային միջոցները հազվադեպ են կիրառվում, քանի որ գործընթացի բոլոր փուլերի ներկայացուցիչները վախենում են պատժվել, եթե մեղադրյալը փախուստի դիմի կամ կրկին հանցագործություն կատարի, այնպես որ քննիչները, դատախազները և դատավորները լուրջ չեն վերաբերվում այլընտրանքային միջոցներ կիրառելու տարբերակին և հիմնավորում են կալանավորելու մասին որոշումը: Սակայն, հարցազրույցների մասնակիցներից այլոք համաձայն չէին այս կարծիքի հետ, իսկ որոշ քննիչներ նշել են գործեր, որոնց դեպքում նրանք կալանավորելու մասին միջնորդություն չեն ներկայացրել: Հարցազրույց տվողներն ընդգծել են, որ այլընտրանքային միջոցների ենթարկված անձանց վերահսկման համար անհրաժեշտ ռեսուրսների պակասն ավելի մեծ խոչընդոտ է այլընտրանքային միջոցներ կիրառելու հարցում, քան փախուստի դիմելու մտավախությունը:

Թերևս, պատշաճ իրավական ընթացակարգի վրա ազդող առավել տարածված խնդիրն այն է, որ կալանավորում կիրառելու մասին որոշումը կանխորոշված է: Հարցազրույցների մասնակիցները շարունակ հիշատակում էին խորհրդային ժամանակներից ժառանգություն մնացած մտածելակերպը, որով նախապատվությունը տրվում էր կասկածյալներին և մեղադրյալներին կալանավորելուն, իսկ դատապարտյալներին՝ ազատազրկելուն: Քննիչները և դատախազները, ըստ ստացված տեղեկությունների, գրեթե միշտ կալանավորելու մասին միջնորդություն են ներկայացնում, իսկ գործերի ճնշող մեծամասնության դեպքում այն բավարարվում է: Տե՛ս ստորև՝ Գործոններ 7-9, 15-16: Տարածված է այն միտքը, որ քաղաքական ճնշումների հետևանքով դատարանները համագործակցում են դատախազության հետ, և որ փաստաբանները շատ քիչ բան կարող են անել իրենց վստահորդի ազատությանը հասնելու համար արդյունավետ գործ մշակելու առումով:

## Գործոն 2. Համապատասխանություն և արդարություն

*Անձին ազատությունից զրկելու պայմաններն ու դրանք թույլատրող դատավարական ընթացակարգերը սահմանվում են օրենքով: Ազատությունից զրկելու հետ կապված հայեցողական որոշումները կայացվում են գործի փաստերը հաստատված չափորոշիչների հետ համադրելու միջոցով:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Չնայած այն բանին, որ ՀՀ օրենքով բոլորն ունեն հավասար պաշտպանության իրավունք, ինչպես նաև իրավաբանորեն սահմանված ընթացակարգերն առկա են քրեական գործով կալանավորման բոլոր փուլերի ընթացքում, գործնականում ազատությունից զրկելու վերաբերյալ կայացված որոշումները հազվադեպ են հիմնավորված և անհատականացված: Այնպիսի տպավորություն է, որ հայեցողական որոշումները հաճախ կայացվում են ոչ թե գործի փաստերի հիման վրա, այլ՝ արտաքին ճնշումների ազդեցությամբ:</p>	

### Վերլուծություն/Նախադրյալներ.

Ինչպես արդեն ասվել է սույն զեկույցում, քրեական գործի քննության ընթացքում անձին ազատությունից զրկելու հետ կապված բոլոր փուլերում կիրառվող իրավական դրույթներն ուղեցույց են հանդիսանում ոստիկանների, քննիչների, դատախազների և դատավորների համար: Այդուհանդերձ, տարածված կարծիքի և վիճակագրական տվյալների համաձայն գործերի մեծամասնությամբ բոլոր փուլերում անձն ազատությունից զրկվում է, այդ թվում՝ արգելանքի վերցնելիս, պաշտոնական ձեռքակալման, մինչդատական կալանքի և պատժի նշանակման ժամանակ, իսկ բողոքարկելու դեպքում այդ մասին որոշումները հաստատվում են: Տե՛ս ստորև՝ Գործոններ 7-10, 15-16: Քննիչները և դատախազները հետևողականորեն կալանավորելու մասին միջնորդություն են ներկայացնում, դատավորները հետևողականորեն բավարարում են դրանք՝ ըստ երևույթին առանց ուշադրություն դարձնելու գործի որևէ առանձնահատուկ փաստի վրա: Համաձայն որոշ աղբյուրների, քննիչները և դատախազները հազվադեպ են ներկայացնում պատճառաբանություն՝ հիմնավորելու ձեռքակալումը կամ կալանավորելու մասին ներկայացրած իրենց միջնորդությունները: Տե՛ս ստորև՝ Գործոն 8, 9:

Մինչդատական կալանքի մասին որոշումները կայացվում են առանձին դատական նիստի ժամանակ: Դատավորները, ըստ ստացված տեղեկութ-

յունների, չեն պատճառաբանում մինչդատական կալանքի վերաբերյալ կայացրած իրենց որոշումները, իսկ փաստաբանները վկայակոչել են գործեր,

որտեղ դատավորը նախնական կալանք է նշանակել, թեպետ քննիչը միջնորդության մեջ որևէ հիմնավորում չի ներկայացրել, ինչպես նաև վկայակոչել են գործեր, որտեղ դատավորը նախնական կալանք է նշանակել օրենքով չթույլատրված հիմքերով: *Տե՛ս նույն տեղը:*

Հայտնի է, որ արդարության և համապատասխանության պակաս կա նաև պատժի նշանակման և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման փուլերում: Մեղքի և պատժի մասին որոշումները կայացվում են միննույն ժամանակ, այնպես որ փաստաբանները հնարավորություն չեն ունենում իրենց վստահորդի մեղավոր ճանաչվելուց հետո առանձին վիճարկել պատժի խստությունը: Հարցազրույցների մասնակիցները հայտնել են, որ մեղադրական դատավճիռները լավ հիմնավորված չեն, իսկ ազատագրվման ձևով պատիժը, թվում է, թե չափանիշ է: *Տե՛ս ստորև՝ Գործոններ 15-16:* Տպավորությունն այնպիսին է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշումները, որոնք սովորաբար մերժում են պայմանական վաղաժամկետ ազատումը, գործադիր իշխանության ազդեցության տակ են կայացվում և որ այդ որոշումներին պատճառաբանություն չի տրվում: *Տե՛ս ստորև՝ Գործոն 25:*

Արտաքին ճնշումներն ազդում են բոլոր փուլերում ազատությունից զրկելու մասին կայացվող որոշումների վրա: *Տե՛ս ստորև՝ Գործոն 4:* Ստացված տեղեկությունների համաձայն, քննիչները, դատախազները և դատավորները վախենում են նույնիսկ կոռուպացված լինելու տպավորություն թողնելուց և մեղադրյալներին զրկում են ազատությունից, որպեսզի իրենց չմեղադրեն կաշառք վերցնելու մեջ: Հարցազրույց տվողներից շատերը հիշատակել են սովետական ժամանակներից հասած մտածելակերպը՝ որպես գործերի հանդեպ անհատական մոտեցում ցուցաբերելու պակասի հիմքում ընկած հիմնական պատճառ, քանի որ այդ ժամանակաշրջանում քրեական արդարադատություն իրականացնողները դիտում էին կալանավորումը որպես չափանիշ դարձած խափանման միջոց կամ պատժի տեսակ և որևէ պատճառ չէին տեսնում այլընտրանքները հաշվի առնելու համար: Ռեսուրսների պակասը նույնպես հանգեցնում է անհատականացված պատճառաբանության պակասի, քանի որ արդարադատության համակարգի համապատասխան մարմինը հնարավորություն չունի գրավի տակ գտնվող, փորձաշրջան անցնող, հանրային աշխատանք կատարող կամ պայմանական վաղաժամկետ ազատված անձի նկատմամբ բավարար վերահսկողություն իրականացնելու, թեև շատ կասկածյալներ և մեղադրյալներ հնարավորություն չունեն գրավ կամ տուգանք վճարել: Էլեկտրոնային վերահսկողությունը որպես խափանման միջոց, որը խստությամբ զիջում է, ևս չի գործում Հայաստանում: *Տե՛ս ստորև՝ Գործոն 3:*

Պատիժ նշանակելիս համապատասխանության պակասը նույնպես առանձնացվել է որպես մեծ խնդիր: Հարցազրույցների մասնակիցները պնդել են, որ հաճախ պատժի տևողությունը չի համապատասխանում հանցագործության ծանրությանը, և միննույն իրավիճակում հայտնված մեղադրյալների նկատմամբ հաճախ նմանատիպ պատիժ չի նշանակվում: Տե՛ս ստորև՝ Գործոն 15: Հարցազրույց տվողներից շատերը կողմ էին, որպեսզի պատիժ նշանակելու համար ուղենիշներ ընդունվեն կամ գոնե օրենսդրական փոփոխություններ կատարվեն՝ յուրաքանչյուր պատժի համար նախատեսված տարիների միջև եղած տարբերությունը կրճատելու համար, որպեսզի այս խնդրին լուծում տրվի:

Ավելի դրական արտահայտվելով համապատասխանության մասին՝ մի քանի մասնակիցներ նշեցին, որ դատավորները տեղյակ են դատական որոշումներ կայացնելիս համապատասխանության պակասի մասին և ներքին կարգով սեմինարներ են անցկացնում՝ քննարկելու իրավական խնդիրները, իսկ այնուհետև հաճախ հանգում են որոշակի սկզբունքի միատեսակ մեկնաբանության և/կամ կիրառման:

### Գործոն 3. Ռեսուրսներ

*Ազատությունից զրկելու և պատիժը կրելու այդ թվում՝ այլընտրանքային պատիժների կիրառման գործընթացներում ներգրավված ինչպես անհատներին, այնպես էլ հաստատություններին տրամադրվում են համապատասխան ռեսուրսներ՝ ֆինանսական միջոցներ, ենթակառուցվածք, աշխատակազմ և այլն:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պակասը քրեական գործով անձին ազատությունից զրկելու հետ առնչվող մարմինների գործունեության շրջանում առաջացնում է ոչ բավարար աշխատակազմի և ենթակառուցվածքային ռեսուրսների հետ կապված խնդիրներ՝ հանգեցնելով նախաքննության փուլում անարդյունավետության, պատիժը պայմանականորեն չկրող և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ ոչ պատշաճ վերահսկողության իրականացման, ինչպես նաև անվճարունակ մեղադրյալների շահերի անարդյունավետ պաշտպանության:</p>	

### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանում դատարանների ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ դատական դեպարտամենտի միջոցով և ընդգրկվում է Պետական բյուջեի մեջ, որն ընդունվում է Կառավարության կողմից, իսկ առարկությունների դեպքում՝

ներկայացվում Ազգային ժողով: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 64: Դատախազության ֆինանսավորումն արտացոլվում է պետական բյուջեում առանձին տողով: ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 63: Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորումը նույնպես իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից: Փաստաբանների պալատին պետական բյուջեից փոխհատուցվող հանրային պաշտպանի աշխատավարձի գումարի չափը որոշվում է Երևան քաղաքի համայնքի դատախազի վարձատրությանը համարժեք գումարի չափով: ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 45: Դատարանների անկախությունը երաշխավորված է Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով: ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, հոդված 94: Դատավորների թեկնածությունների առաջադրումն այնուհետև իրականացվում է Արդարադատության խորհրդի կողմից: *Նույն տեղը*, հոդված 95, *տե՛ս* նաև ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 117, 136-138, որը նախագահում է Վճռաբեկ դատարանի նախագահը, *նույն տեղը*, հոդված 94(1): Դատախազության որակավորման հանձնաժողովը համակարգում է դատախազի թեկնածուների և դատախազների ծառայողական առաջխաղացման հարցերը: ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդվածներ 34, 35:

Ստորև ներկայացված 2010թ.-ի պետական բյուջեի 7-րդ հոդվածը սահմանում է Հայաստանում հասարակական կարգի, անվտանգության և դատական աշխատանքների համար հատկացված դրամային փոխհատուցումները՝

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

**2010թ. ԲՅՈՒՋԵՅ՝**

<b>Խումբ</b>	<b>Ենթախումբ</b>	<b>Գումարը դրամով</b>	<b>Գումարը դոլարով</b>
Հասարակական կարգ և անվտանգություն	Ոստիկանություն	22,966,922,700	60,122,834
	Ազգային անվտանգություն	11,787,457,300	30,857,218
	Ընդամենը	34,754,380,000	90,980,052
Դատական	Դատարաններ	9,234,755,700	24,174,753

<sup>3</sup> Սույն զեկույցում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ) փոխարկված է Միացյալ Նահանգների դոլարի (այսուհետ՝ ԱՄՆ դոլար): ԱԶԸԳԳ գնահատումն անցկացնելու ժամանակ գործել է 382 ՀՀ դրամը = 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը:

գործունեություն և իրավական ծառայություն	Իրավական պաշտպանություն <sup>4</sup>	308,366,600	807,242
	Ընդամենը	9,543,122,300	24,981,996
Դատախազություն	Դատախազություն	2,692,175,700	7,047,580
Կալանավայրեր	Կալանավայրեր	5,229,727,000	13,690,385
Փրկարար ծառայություն	Փրկարար ծառայություն	4,413,812,100	11,554,482
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>		<b>56,633,217,100</b>	<b>148,254,495</b>

*Աղբյուրը՝* Հայաստանի Հանրապետության Պետական բյուջեի մասին օրենք, հոդված 7 (*ընդունվել է* 2009թ. դեկտեմբերի 10-ին)

Ըստ որոշ աղբյուրների, քրեական համակարգում ընդգրկված բոլոր մարմինները մշտապես թերֆինանսավորված են, որը խնդիրներ է առաջացնում կալանավորման և պատժի նշանակման գործընթացի բոլոր փուլերում: Հանրային պաշտպանի գրասենյակը, մասնավորապես, ներկայումս դեռ խնդիրներ ունի կապված ՀՀ Կառավարության կողմից կայուն ֆինանսական աջակցության ստանալու հետ, որն իր հերթին հանգեցնում է աշխատողների թվի անբավարարության և անիրատեսական ծանրաբեռնվածության: ՀՊԳ-ն ֆինանսավորվում է պետական բյուջեից, Փաստաբանների պալատի միջոցով, որոնք ներառում են հանրային պաշտպանների պաշտոնային դրույքաչափը և հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսեր: Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման գումարը հաշվարկվում է հանրային պաշտպանների աշխատանքի վարձատրության համար նախատեսված գումարի 30%-ի չափով՝ անկախ հանրային պաշտպանների կողմից կատարված փաստացի ծախսերից: *Տե՛ս* ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 45: Հարցազրույցի մասնակիցներից մեկը նշել է, որ պետությունը, որպես հանրային պաշտպանների գործատու, ի հավելումն ՀՊԳ-ի բյուջեին պետք է հոգ տանի բյուջեից դուրս սոցիալական ապահովության վճարները վճարելու համար, և ոչ թե փոխարենը պահանջի, որ ՀՊԳ-ն իր իսկ բյուջեից վճարի սոցիալական ապահովության դիմաց:

ՀՊԳ-ի առջև ծառայած խնդիրներն առանձնապես լուրջ են շրջաններում, որտեղ որոշ հանրային պաշտպանների աշխատանքի ֆինանսավորումը

<sup>4</sup> Ներառյալ Սարգոսի իրավունքների պաշտպանի գրասենյակը (155,933,600 ՀՀ դրամ կամ 408,203 ԱՄՆ դոլար) և հանրային պաշտպանի գրասենյակը (152,433,000 ՀՀ դրամ կամ 399,039 ԱՄՆ դոլար):

կատարվում է կես դրույքով՝ չնայած ահռելի ծանրաբեռնվածության: Շիրակի մարզում, օրինակ, հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում չկան ո՛չ մարդկային ռեսուրսներ, և ո՛չ էլ տրանսպորտային միջոցներ՝ 40 կմ հեռավորության վրա գտնվող կալանավայր իրենց վստահորդների հետ կանոնավոր կերպով հանդիպելու գնալու համար: Գյումրիում չկան նաև ձերբակալվածների ժամանակավոր պահման վայրեր ձերբակալվածներին 72 ժամ պահելու համար: Մյուս մարզերում ևս առկա է համանման խնդիրը: Հարցազրույցների մասնակիցները հայտնել են, որ համապատասխան ռեսուրսների ընդհանուր պակասը մեծապես ազդում է պաշտպանի կողմից վաղ փուլերում ակտիվ պաշտպանություն իրականացնելու վրա, հատկապես, երբ վստահորդը ձերբակալված է կամ գտնվում է նախնական կալանքի տակ: Սա առանձնապես խնդրահարույց է, քանզի մեղադրյալներից շատերը, թվում է, թե որպես կանոն կալանքի տակ են վերցվում, և պաշտպանության միակ միջոցը կալանքի մասին որոշումը ստանալուց հետո բողոք բերելն է: Տե՛ս ստորև՝ Գործոններ 8-10: Միաժամանակ՝ հաճախ տարբեր վայրերում միևնույն ժամին նշանակված մի քանի դատական նիստ ունենալը հանրային պաշտպանի համար սովորական բան է:

Հանրային պաշտպանները, հատկապես մարզերում, չունեն նաև համապատասխան գրասենյակներ և սարքավորումներ: Երևանում բոլոր 17 հանրային պաշտպաններն աշխատում են մեկ մեծ սենյակում, իսկ նրանց համակարգիչների և մյուս սարքավորումների դիմաց վճարումները կատարվել են նվիրատվությունների կամ մասնավոր միջոցների հաշվին, այլ ոչ՝ պետական բյուջեից: Համապատասխան ջեռուցման, աշխատասեղանների և այլ գրասենյակային սարքավորումների բացակայությունը լուրջ խնդիր է մարզերի հանրային պաշտպանների համար:

Հանրային պաշտպանների ընդհանուր թիվը Հայաստանում 36 է, որից 17-ը գտնվում են Երևանում: Ներկայումս կա առաջարկ հինգով ավելացնելու հանրային պաշտպանների թիվը Երևանում և ընդհանուր պահանջ՝ ավելացնելու նրանց ընդհանուր թիվը Հայաստանում: Ռեսուրսների հետ կապված խնդիրները մարզերում շատ ավելի լուրջ են: Հանրային պաշտպաններից ոմանք հայտնել են, որ ունեն 200 կամ ավելի գործեր, որոնք չեն բողոքարկվել ժամանակի սղության և գերծանրաբեռնվածության պատճառով: Երկրի հարավային մասում գտնվող Մեղրիում հանրային պաշտպաններ ընդհանրապես չկան, որի արդյունքում այլ շրջաններից փաստաբանները ստիպված են լինում գնալ այնտեղ և պաշտպանել վստահորդների շահերը: Մտահոգության տեղիք է տալիս նաև վերջերս արված առաջարկը հանրային պաշտպանի գրասենյակի ընթացիկ պարտականություններին ավելացնելու քաղաքացիական գործեր: Քանի որ ռեսուրսների հետ կապված խնդիրներն այդքան լուրջ են, շատերն այն կարծիքին են, որ այս քննարկումները պետք է շարունակվեն բյուջեին վերաբերող որոշակի խնդիրներին արձագանքելուց հետո:

Ռեսուրսները նաև ազդում են պետական պաշտոնյաների կողմից իրենց լիազորություններն իրականացնելու վրա: Հայաստանում փորձառու քննիչների պակաս կա, որը համաձայն կարծիքների, առաջ է եկել այն բանից հետո, երբ մի քանի տարի առաջ հիմնական նախաքննության պարտականությունները դատախազությունից անցել են ՀՀ ոստիկանությանը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, հոդվածներ 10, 11 (*ընդունվել է* 2001թ.-ի ապրիլի 16-ին, ուժի մեջ է մտել 2001թ.-ի հունիսի 16-ին) (այսուհետ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ): *Տե՛ս* նաև ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 55: Ըստ հարցազրույցների մասնակիցների, սա հանգեցնում է չափից մեծ կախվածության՝ որպես ինքնախոստովանական ցուցմունքներ կորզելու և վկաների ցուցմունքները հիմնավորելու միջոց կալանավորում կիրառելու առումով՝ փոխարենը բազմակողմանի քննություն անցկացնելու նպատակով կիրառելու ռազմավարական, մեթոդական մոտեցումներ, ներառյալ, հնարավորության դեպքում փորձագիտական եզրակացությունների ստացումը մինչև մեղադրյալին կալանավորելու միջնորդություն ներկայացնելը: Օրինակ՝ ասվել է, որ Լոռի մարզում կա 37 քննիչ, սակայն 37-ից միայն 5-ն ունեն 5 տարուց ավելի փորձ, 32-ը՝ 2½ տարուց պակաս: Հարցազրույցների մասնակիցները հայտնել են նաև, որ տեխնիկայի պակասը նախաքննության գործընթացում առաջացնում է ձգձգումներ, քանի որ քննիչները չունեն նույնիսկ հիմնական փորձաքննական սարքավորումներ և պետք է հույսը դնեն Երևանի փորձագետների վերլուծությունների վրա, որը կարող է մինչդասական փուլում ամիսներ շարունակ ձգձգումների պատճառ հանդիսանալ: *Տե՛ս* ստորև՝ Գործոն 9:

Մարզերում կալանավայրերի հեռավորությունը ևս դժվարություններ է առաջացնում քննիչների համար: Օրինակ՝ Գյումրիի ոստիկանության համար նույնպես խնդիր է Շիրակի մարզի կալանավայրի 40 կիլոմետր հեռու լինելը, և ըստ ստացված տեղեկությունների, Գյումրի քաղաքում այժմ կալանավայր է կառուցվում: Լոռի մարզում հաղորդել են, որ ինչպես դատախազների, այնպես էլ քննիչների համար դժվար է աշխատողներ ուղարկել կալանավորման վերաբերյալ դատական նիստերի, հատկապես Երևան՝ բողոքարկման գործերով, որի համար մեկ ամբողջ օր է պահանջվում: Այս խնդիրը բնորոշ է բոլոր մարզերին:

Չնայած այն բանին, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելն օրենսդրորեն կարգավորված են, սակայն գործնականում, նրանք, ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և ովքեր պայմանական վաղաժամկետ ազատվել են, չեն հսկվում և ունեն միայն Այլընտրանքային պատիժների կատարման ստորաաժանման աշխատակազմի առջև ներկայանալու պարտավորություն: Թեպետ օրենքում ամրագրված սոցիալական արդարության վերականգնումը և պատժի ենթարկված անձին ուղղելը, *տե՛ս* ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 48(2), հիանալի նպատակներ են, հարցազրույց տվողները նշել են, որ հստակ նպատակ

հետապնդող վերահսկման պակասը բավարար չէ ո՛չ փորձաշրջան անցնող անձին օգնելու և ուղղելու, և ո՛չ էլ տուժողին պաշտպանելու և անվնաս պահելու համար:

Աշխատողների պակասն անդրադառնում է նաև անչափահաս հանցագործների նկատմամբ արդարադատություն իրականացնելիս: Չկան պետության կողմից ստեղծված և ֆինանսավորվող պաշտոններ, որոնք պաշտոնապես զբաղվում են անչափահասների գործերով: Շատ իրավական համակարգերում նախաքննության մարմնի կամ ոստիկանության կազմում կան անձինք, ովքեր պատասխանատվություն են կրում և ոչ պաշտոնապես վերահսկում են ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անչափահասներին: *Տե՛ս* նաև ստորև՝ Գործոն 6:

#### **Գործոն 4. Արտաքին և անհարկի ազդեցություն**

*Քրեական արդարադատության համակարգում գործող պաշտոնատար անձինք, ինչպիսիք են հետաքննության մարմնի աշխատակիցները, քննիչներն ու դատախազները, պաշտպանները, դատավորները և դատարանի աշխատակազմը, ինչպես նաև ուղղիչ հիմնարկի աշխատակազմը, իրենց գործառույթներն իրականացնում են առանց անհարկի ազդեցության:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ բացասական</u>
<p>Հայաստանն ընդունել է հակակոռուպցիոն ռազմավարություն և կառավարությունը բազմաբնույթ աշխատանքներ է կատարել կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բարեփոխումների կապակցությամբ: Այնուամենայնիվ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ազդեցությունները շարունակում են բացասաբար անդրադառնալ Հայաստանի քրեական արդարադատության համակարգում գործող պաշտոնատար անձանց վրա, որպեսզի վերջիններս կարողանան արդար, թափանցիկ և արդյունավետ ձևով վերաբերվել կալանավորման և պատիժների վերաբերյալ կայացված որոշումներին: Գործադիր իշխանության ազդեցությունը դատական գործողությունների վրա, տուժողների և վկաների վրա գործադրվող անհարկի ճնշումները, ինչպես նաև կոռուպցիայի գործերով քաղաքական շարժառիթներով պայմանավորված որոշումներն առանձնացվել են որպես մեծ խնդիր:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Չնայած կոռուպցիայի մասին ընդհանուր սահմանման բացակայությանը, հայկական օրենսդրությունը քրեականացրել է արդարադատության ոլորտում պաշտոնատար անձանց և սուբյեկտների կողմից կատարվող կոռուպցիոն շատ

գործողություններ, ինչպիսիք են՝ կաշառք ստանալը կամ տալը, ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 311, 312, պաշտոնական լիազորությունները կամ պարտականությունները չարաշահելը կամ անցնելը, *նույն տեղը*, հոդվածներ 308, 309, պատիժն ի կատար ածող հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի կամ ձերբակալվածներին պահելու վայրի աշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը, *նույն տեղը*, հոդված 319, արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը, *նույն տեղը*, հոդված 332, ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, *նույն տեղը*, հոդված 336, սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն տալու կամ սխալ թարգմանության համար կաշառելը կամ հարկադրելը, *նույն տեղը*, հոդված 340, ցուցմունք տալուն հարկադրելը, *նույն տեղը* 341, նախնական քննություն վարելու կամ արդարադատություն իրականացնելու հետ կապված դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորի նկատմամբ սպառնալիքը կամ բռնի գործողությունները, *նույն տեղը*, հոդված 347, ակնհայտ ապօրինի ձերբակալելը կամ կալանավորելը, *նույն տեղը*, հոդված 348, քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը, *նույն տեղը*, հոդված 351, և ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը, *նույն տեղը*, հոդված 352: Այս հանցագործությունները պատժելու եղանակներն են տուգանքը, ձերբակալումը, կալանքը, ազատազրկումը կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, իսկ պատժի տևողությունը տարբեր է:

2008թ.-ի ապրիլին Ազգային ժողովը հաստատել է նորընտիր կառավարության ծրագիրը՝ ճանաչելով կոռուպցիայի դեմ պայքարը որպես պետական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2009-2012 ԹԹ. ԹԻՎ 4(2009) ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ (այսուհետ՝ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարություն): Ուժի մեջ մտնելով 2009թ.-ին՝ այն Հայաստանի մի քանի տարվա երրորդ հակակոռուպցիոն ռազմավարություն է և առանձնացնում է կոռուպցիայի 3 ամենագերակշռող ձևերը, որոնք նշվել էին Համաշխարհային բանկի և Թրասփերենսի ինթերնեշնրլի ուսումնասիրություններում: Դրանք բոլորն էլ ազդում են կալանքի գործընթացի վրա՝ գործառնական կամ կոռուպցիա, որի նպատակն է արագացնել գործընթացները կամ պաշտոնական ընթացակարգերը, վարչական, որը տեղի է ունենում, երբ գոյություն ունեցող նորմերը խախտվում են կամ վերապահումներով են կիրարկվում, և քաղաքական, երբ պետական քաղաքականությունը ծառայեցվում է մասնավոր շահերին: *Նույն տեղը*, կետ 9, 12, 16: Ռազմավարությունը, որը մանրամասն ներկայացնում է հասարակական սեկտորի խոշոր կոռուպցիոն ոլորտները, առանձնացնում է մի քանի խնդիրներ, որոնք վերաբերում են կալանքին՝ ընդգծելով ոչ միայն կալանքի համար

նախատեսված սանկցիաները, այլ հենց կոռուպցիան քրեական վարույթում: Այն նշում է. «Արդարադատության իրականացման ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հետևողական իրականացումը պետք է ընդգրկի նաև դրան հաջորդող պատիժների կատարման փուլը: Միաժամանակ, նախաքննության մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը չի կարող հանգեցնել դրական արդյունքների, եթե չգուզակցվի կալանքի տակ պահելու և պատիժ կատարելու լիազորություն ունեցող մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի հետ: Այս առումով նշված գործառույթներն իրականացնող քրեակատարողական ծառայությունում կոռուպցիոն ռիսկերի կրճատումը կոռուպցիայի դեմ պայքարի առանձին ուղղություն է»: *Նույն տեղը*, կետ 176: Առանձնացված են նաև այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են կոռուպցիայի արդյունքում ստացված եկամուտների առգրավման և բռնագրավման համապատասխան և թափանցիկ կարգերի բացակայությանը, ինչպես նաև բռնագրավումից հետո այդ եկամուտների կառավարմանն այն մի քանի դեպքերում, երբ փորձ է արվել նման բռնագրավման կարգ գործի դնել: Միջոցառումների ծրագրում նշվում է, որ շատ երկրներում բռնագրավված գույքը հանձնվում է պետությանը և օգտագործվում հատուցելու հանցագործությամբ պատճառված վնասները կամ այլ ծրագրերում: *Նույն տեղը*, կետ 103:

Չնայած համեմատաբար նոր հակակոռուպցիոն ռազմավարությանը, կոռուպցիան դեռևս տարածված է Հայաստանում: 2009թ.-ին բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հետազոտությունը բացահայտել է, որ պատասխանողների կեսն ընկալում է կոռուպցիան որպես Հայաստանում առօրյա կյանքի երևույթ: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄՈՒԲԻԼԻ-ԶԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ, Գործունեության լրատվաթերթիկ 3-րդ մաս, 2-րդ թողարկում (հունվար 1- մարտ 31, 2010թ.): Գրեթե նույնքան թվով մարդիկ, որքան 2008թ.-ին, կարծել են, որ երկրում կոռուպցիայի մակարդակը չի փոխվել նախորդ տարվա ընթացքում, իսկ առողջապահությունը, կրթությունը, դատական համակարգը, դատախազությունը, ընտրական հանձնաժողովները դեռևս համարվում են 5 ամենակոռումպացված ոլորտները: Հետազոտությունը ցույց է տվել, որ հասարակության կարծիքով, կոռուպցիան ավելացել է նախորդ 12 ամիսների ընթացքում: Ըստ գործարարների, ամենաշատ տարածված կոռումպացված կառույցները ընտրական, իրավապահ և դատական համակարգերն են, իսկ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: *Նույն տեղը, տե՛ս* նաև ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, կետ 12-15 (*մեջբերում* Համաշխարհային բանկի ինստիտուտից և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանից):

Լայնորեն ընդունված է այն կարծիքը և ինչպես նշվել է հեղինակավոր մի փաստաբանի կողմից. «Հայաստանում չես կարող գոյատևել առանց կոռուպցիայի»: Հարցազրույցների մասնակիցների կարծիքով այն մի քանի պատճառ ունի՝ մասնավորապես այն, որ Հայաստանում միևնույն մարդիկ են զբաղեցնում

քաղաքական և բիզնես էլիտան, ովքեր պղպջակների պես կպած են իրար: Ըստ ստացված տվյալների, գործարարների կամ նրանց ընտանիքի անդամների շրջանում ընդունված է զբաղեցնել պաշտոններ որպես պետական ծառայողներ, այդ թվում նաև՝ քրեական արդարադատության համակարգում, քանի որ այդ պաշտոնների միջոցով նրանք պահպանում են այն քաղաքական կապերը, որոնք անհրաժեշտ են բիզնեսում իրենց շահերը պաշտպանելու համար:

Քրեական արդարադատության համակարգում աշխատող պաշտոնատար անձինք վախենում են անգամ կոռուպցիայի մտքից և կարծում են, որ հասարակությունը կկասկածի իրենց կոռուպցիայի մեջ, եթե նրանք նախնական կալանքի կամ ազատազրկման տեսքով պատժի վերաբերյալ միջնորդություն չանեն կամ որոշում չկայացնեն: Քննիչները, որպես կանոն, նախնական կալանքի վերաբերյալ միջնորդություն են ներկայացնում անգամ այն դեպքերում, երբ դրա կարիքը չկա՝ նախընտրելով, որ կասկածյալի՝ կալանքի տակ չգտնվելու համար դատավորները մեղադրվեն: *Տե՛ս* ստորև՝ Գործոն 9: Այնուամենայնիվ, թվում է, թե դատական համակարգում կաշառք տալու կամ ստանալու երևույթն այժմ շատ ավելի քիչ է տարածված, քան մեղմ և քաղաքական ազդեցություն գործելու երևույթը: Շատ փաստաբաններ արտահայտել են իրենց ընդհանուր և առաջնահերթ մտահոգությունը կապված բոլոր փուլերում դատավորների անաչառ չլինելու հետ: Կա կարծիք, որ դատավորները կալանքի միջնորդությունները միայն *pro forma* (ձևական) են քննում և չեն հիմնավորում իրենց որոշումները կամ յուրաքանչյուր գործի անհատական մոտեցում չեն ցուցաբերում: *Տե՛ս նույն տեղը*: Համաձայն ստացված տեղեկությունների, *ex parte* (արտադատական շփումները) դատավորների, դատախազների և քննիչների միջև տարածված են, իսկ դատավորների և փաստաբանների միջև եղած մասնագիտական հարաբերությունները հաճախ անկանխատեսելի են: Շատ փաստաբանների կարծիքով դատավորները մեղադրող կողմին են պաշտպանում և հայտնել են, որ Հայաստանի Խորհրդային սոցիալիստական հանրապետությունում շատ դատավորներ աշխատել են Պետական անվտանգության կոմիտեում կամ դատախազության համակարգում կամ կառավարությունում զբաղեցրել են այլ պաշտոններ:<sup>5</sup> Հարցազրույցների մասնակիցներից շատերն այն կարծիքին են, որ դատավորները կանգնած են քաղաքական ճնշումների ենթարկվելու ռիսկի առջև, եթե նրանք մեղմ չվերաբերվեն լավ կապեր ունեցող կասկածյալներին նմանապես եթե մեղմ վերաբերվեն քաղաքական գործերում կասկածվող անձանց հետ: Ըստ ստացված տեղեկությունների, դատավորները կարգապահական պատասխանատվության են են-

---

<sup>5</sup> Հայաստանում ՊԱԿ-ի գործերը չեն բացվել, այնպես որ անհնար է հստակ որոշել, թե քանի, եթե այդպիսիք եղել են, գործող դատավոր և քրեական համակարգի պաշտոնատար անձ է աշխատել ՊԱԿ-ում:

թարկվել կամ ազատվել են պաշտոնից կամ արդարացման դատավճիռ կայացնելու կամ էլ «սխալ» մեղադրյալներին դատապարտելու համար: Հարցազրույցների մասնակիցներից ոմանք հայտնել են նաև, որ դատավորները վախենում են բավարարել գրավի միջնորդությունները, քանի որ նրանք կարող են կարգապահական պատասխանատվության ենթարկվել, եթե մեղադրյալը փախուստի դիմի, չնայած մասնակիցներից ոչ ոք չգիտեր որևիցե մի դեպք, երբ դա իրականում տեղի է ունեցել: Մյուսները պնդել են, որ նոր և ոչ փորձառու դատավորները հնարավոր է որ վախենան սխալ գործելու դեպքում ճնշումների ենթարկվելուց, սակայն բազմամյա փորձ ունեցող դատավորները, ովքեր վստահություն են ձեռք բերել, առանց անհանգստության կարող են և կայացնում են ոչ սովորական որոշումներ:

Հարցազրույցների մասնակիցները մտահոգություն են հայտնել նաև մինչդատական կալանքի վարույթում միջազգային դատական պրակտիկան կիրառելու կապակցությամբ: Չնայած նրան, որ ՄԻԵԴ-ի վճիռները նախադեպային արժեք ունեն, ըստ մասնակիցների, դատարանները հղում են կատարում Եվրոպական կոնվենցիային միայն մինչդատական կալանքի կիրառումը հիմնավորելու համար՝ անտեսելով այն վճիռները, որոնք պաշտպանում են այլընտրանքային միջոցների կիրառումը: *Տե՛ս ԴՍՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ*, հոդված 15: ՄԻԵԴ-ի վճիռների հայերեն լեզվով թարգմանության պակասը, ինչպես նաև դատավորների համար ՄԻԵԿ-ի վերաբերյալ դասընթացների պակասը հարցազրույցների մասնակիցները նշել են որպես այս խնդրին նպաստող գործոն: Մի քանի կազմակերպություններ աշխատում են անդրադառնալ այս խնդիրներին: *Տե՛ս վերևում՝ Գործոն 1:*

Բացի այդ, ՀՀ Կառավարությունն իր հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում առանձնացրել է դատական համակարգի վրա ոչ պատշաճ ազդեցության վերաբերյալ խնդիրները, սակայն դատավորների վրա է դրվում ճնշման նման փորձերի մասին ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի էթիկային հանձնաժողովին հայտնելու պարտականությունը՝ այլապես նրանք կենթարկվեն կարգապահական պատասխանատվության՝ փոխարենը դիմակայելու նրանց, ովքեր փորձում են ճնշում գործադրել: Այդուհանդերձ, Հակակոռուպցիոն ռազմավարության մեջ նշվում է, որ կարգապահական պատասխանատվությունը կանխարգելիչ նշանակություն չի ունենում, և բացակայում է էթիկայի հանձնաժողովի կողմից դատավորի չհայտնելու դեպքերի հայտնաբերման մեխանիզմը: ՀՀ ՀԱԿԱ-ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, կետ 172: Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը անդրադառնում է նաև դատական համակարգի ներսում ենթակառուցվածքային համակարգված խնդիրներին և առանձնացնում է դրանց հնարավոր լուծումները: *Նույն տեղը*, կետ 168:

Դատախազության համակարգը շատերի կողմից ընդունվում է որպես քաղաքական համակարգի բաղկացուցիչ մաս, որն անկախ չէ: Ըստ ստացված տեղեկությունների, դատախազները հրաժարվում են կոռուպցիայի վերաբերյալ քննություն սկսել, նույնիսկ երբ արժանահավատ, փաստաթղթավորված հայտարարություններ են ներկայացվում հեղինակավոր լրագրողների կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից, և նույնիսկ այն դեպքերում, երբ պաշտոնյաներն ընդունել են իրենց մեղսագրվող կոռուպցիոն գործողությունները: Մասնակիցները գտնում են, որ դատախազները բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարված կոռուպցիային փակ աչքերով են նայում՝ կենտրոնանալով այն անձանց վրա, ովքեր քաղաքական կապեր չունեն և մշակելով ռազմավարություն լավ կապեր ունեցող անձանց մեղադրանք առաջադրելուց խուսափելու համար:

Ընդհանուր առմամբ վկաների պաշտպանությունն անբավարար է գնահատվում, և անտեղի ճնշումներ են գործադրվում նրանց վրա: Գործնականում ոստիկանությունը հետաքննության փուլում գտնում է նշանակետում գտնվող կասկածյալին, սակայն ճանաչում է նրան որպես վկա կամ ընդհանրապես որևէ կարգավիճակ չի տալիս նրան: Անձն այնուհետև հրավիրվում է ոստիկանություն որոշ հարցերի պատասխանելու, և ըստ հարցազրույցների մասնակիցների, նման իրավիճակում հայտնված անձինք վախենում են, որ, եթե հրաժարվեն ցուցմունք տալ, ապա նրանց կձերբակալեն: Մյուս կողմից, ոստիկանության բաժանմունք գնալու դեպքում հաճախ նրանց վրա ճնշում են գործադրում, հարկադրում կամ նույնիսկ ֆիզիկական վնաս հասցնում: Տե՛ս ստորև՝ Գործոն 7: Որպես վկաների վրա գործադրվող ճնշումների հասարակության մեջ առկա խնդրի օրինակ, ներկայացնենք SOS Թեղուտ բնապահպանական խմբի առաջնորդ Մարիամ Սուխուդյանի օրինակը, ով հայտնել էր Նուբարաշենի դպրոցում դրսևորվող քրեական վարքի և աշակերտների նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին: Մամուլով բազմիցս ասվել է, որ դպրոցի տնօրենը ենթադրվում է, որ քաղաքական կապեր ունի, իսկ դատախազը ենթադրյալ հանցագործի փոխարեն մեղադրանք է առաջադրել Սուխուդյանի նկատմամբ: Մյուս վկաները 3 ժամից ավելի պահվել են, և նրանց նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել: Նրանց սպառնացել և ստիպել են ցուցմունք տալ Սուխուդյանի դեմ: Տե՛ս Բաց հասարակության ինստիտուտ, Ժամանակն է, որ այդ փտած համակարգի դռները բացվեն (նոյեմբերի 24, 2009թ.), <http://www.hra.am/en/point-of-view/2009/11/24/activist>: Ի վերջո, դատախազը դադարեցրել է Մ. Սուխուդյանի նկատմամբ քրեական հետապնդումը և քրեական գործ հարուցել ենթադրյալ հանցագործի նկատմամբ: Տե՛ս Բաց հասարակության ինստիտուտ, Դադարեցվել է Սուխուդյանի նկատմամբ քրեական հետապնդումը, (մարտի 11, 2010թ.), <http://www.hra.am/en/events/2010/03/11/mari>:<sup>6</sup>

<sup>6</sup> Սույն զեկույցի համար իրականացված հետազոտության ավարտից հետո սեռական բռնության մեջ մեղադրվող ուսուցիչը 2010թ. մայիսի 24-ին դատապարտվել է: Տե՛ս ՀՀ Քրեական

Գրեթե առանց բացառության համընդհանուր մոտեցումն այն է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը (այսուհետ՝ Անկախ հանձնաժողով) կամայականորեն մերժում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու արժանի դատապարտյալների դիմումները: Անկախ հանձնաժողովի կողմից կիրառվող չափորոշիչներն իր որոշումների կայացման հարցում ո՛չ հրապարակային են, և ո՛չ էլ թափանցիկ, իսկ անդամներն ունեն հիմնավոր քաղաքական կապեր և ընկալվում են որպես գործադիր իշխանության ազդեցության ենթակա անձինք՝ աղավաղելով «անկախ» բառի գործածությունը: Տե՛ս նաև ստորև՝ Գործոններ 24 և 25:

### Գործոն 5. Տուժողի ներգրավվածությունը

***Տուժողները պատշաճ կերպով տեղեկացվում են կալանավորմանը և պատժին վերաբերող որոշումների ընթացքի և ելքի մասին: Կալանավորման և պատժի վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի են առնվում հանցագործության և կալանավորված անձին ազատ արձակելու հետևանքները տուժողի վրա:***

---

վերաքննիչ դատարան, *Հևոն Ավագյանի գործը*, թիվ Ն-ԵԵԴ/0045/01/10 (օգոստոսի 4, 2010թ.): Հանցագործը սկզբում դատապարտվել է ընդամենը երկու տարի ազատազրկման, սակայն Վերաքննիչ դատարանն ավելացրել է պատիժը մինչև երեք տարի ազատազրկման՝ հաշվի առնելով տվյալ հանցագործության հանրության համար ներկայացվող վտանգավորության աստիճանը: *Նույն տեղը*: Տկն. Սուխուդյանը զգալի դրական ուշադրության է արժանացել մամուլի և քաղաքացիական հասարակության կողմից այդ հանցագործության մասին հայտնելու համար: Ոմանք մատնացույց են արել այս գործը որպես այնպիսին, որտեղ ենթադրյալ քաղաքական կապերն այլևս բավարար չեն հանցագործներին քրեական հետապնդումից պաշտպանելու համար, մինչդեռ մյուսները կարծում են, որ գործի հատուկ հանգամանքները, այն է՝ երեխաների հանդեպ կատարված հանցագործությունը և զանգվածային լրատվամիջոցների կողմից ցուցաբերված մեծ ուշադրությունը, քրեական հետապնդման հիմքում ընկած խթանն են եղել:

**Եզրակացություն**

**Հարաբերակցությունը՝ չեզոք**

Տուժողների իրավունքները և նրանց մասնակցությունը կալանավորման և պատժի նշանակման վերաբերյալ որոշումներ կայացնելիս բավարար կերպով և հստակ սահմանված չեն օրենքով: Չկան համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու տուժողների ֆիզիկական անվտանգությունն այն ժամանակ, երբ մեղադրյալները գրավով ազատ են արձակվում կամ երբ դատապարտյալի նկատմամբ այլընտրանքային պատիժ է նշանակվում: Ստացված տեղեկությունների համաձայն, տուժողների նկատմամբ ճնշումներ և հարկադրանք է գործադրվում հետաքննության և նախաքննության փուլերում: Պատժի կամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանները հաճախ հաշվի են առնում տուժողների շահերը, սակայն տուժողները հաճախակի դուրս են մնում մինչդատական կալանքի վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացից:

**Վերլուծություն/Նախադրյալներ.**

Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս և վնաս, որը կարող էր պատճառվել, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով արգելված արարքը: Հայաստանի օրենսդրության համաձայն տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 58: Քրեական գործի քննության ժամանակ տուժողի իրավունքներն են՝ ստանալ տեղեկություններ նախաքննության մասին, ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, օժանդակել և մասնակցել գործի քննությանը, մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին, բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողություններն ու որոշումները, այդ թվում՝ դատավճիռը կամ դատարանի այլ վերջնական որոշումը, ստանալ պատճառված վնասի և կրած ծախսերի փոխհատուցում և այլն: *Նույն տեղը*, հոդված 59: Տուժողը կարող է նաև քաղաքացիական հայց ներկայացնել՝ քրեական օրենսգրքով արգելված արարքով պատճառված գույքային վնասի դիմաց հատուցում ստանալու նպատակով: *Նույն տեղը*, հոդված 61: Դատավարության ժամանակ դատավորը կարող է պաշտպանության միջոցներ ձեռնարկել՝ կանխելու պաշտպանվող անձի կամ նրա մերձավորների կողմից տուժողի կամ վկայի նկատմամբ հետապնդումները: *Նույն տեղը*, հոդվածներ 98, 99:

Չնայած այն բանին, որ Քրեական դատավարության օրենսգիրքը, թվում է, թե թույլ է տալիս դատարանին տուժողին (կամ նրա պաշտպանին) ներգրավել մինչդատական վարույթում կալանավորման վերաբերյալ կայացվող որոշումներում նույնիսկ դռնփակ նիստի ժամանակ, *նույն տեղը*, հոդված 59(8), դատարանը ոչ միշտ է այդպես վարվում: Գործնականում խնդիրը հաճախ օրենքով թույլատրելի 72 ժամվա ընթացքում տուժողին գտնելն ու տեղեկացնելն է, որպեսզի անձին կալանավորելու վերաբերյալ որոշում կայացվի: Մի գործում դատավորը հետաձգել է նիստը մինչև ժամը 14:00-ն, որպեսզի տուժողը կարողանա ներկա լինել, որովհետև տուժողի ներկայությունն անհրաժեշտ էր մեղադրյալին ճանաչելու համար, իսկ մեկ այլ դեպքում՝ որպեսզի պարզի, թե արդյո՞ք վտանգ կա, որ մեղադրյալը կարող է փախուստի դիմել: Թվում է, թե կա՛մ դատարանին անհամապատասխան միջոցներ են տրված, կա՛մ էլ՝ դատավարական խնդիրներ կան, որպեսզի տուժողին տեղեկացված պահելուց զատ ապահովվի նաև նրա պաշտպանությունը նախաքննության և դատաքննության փուլերում: Հայաստանի օրենսդրությամբ տուժողների համար իրավական պաշտպանության միջոցներ նախատեսված չեն: Հարցազրույցների մասնակիցներից շատերն այն կարծիքին են, որ գրավով ազատված մեղադրյալին արգելելը շփումները տուժողի(ներ)ի հետ կարող է խախտել Սահմանադրության 25 հոդվածը, որը երաշխավորում է ազատ տեղաշարժվելու իրավունքը: Ըստ մասնակիցների, դատավորները նման սահմանափակումներ դնելու հարցին չեն անդրադարձնում:

Վկայի կամ տուժողի նկատմամբ ճնշում գործադրելն ինքնին խնդիր է հետաքննության և նախաքննության փուլերում: Նախաքննության կամ հետաքննության շրջանակներում տուժողները կարող են հրավիրվել ոստիկանություն ցուցմունք տալու և, տրամադրած տեղեկությունների համաձայն, վերջիններս հաճախ վախենում են, որ կասկածյալ կճանաչվեն, եթե չհամագործակցեն: *Տե՛ս ստորև՝ Գործոն 7*: Հարցազրույցների մասնակիցները նշել են տուժողների նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելու դեպքերի մասին՝ կասկածյալի դեմ ցուցմունք կորզելու նպատակով: Բացի այդ, հարցազրույցների մասնակիցները հայտնել են, որ նախաքննությունը դադարեցվում է կամ մեղադրանքը հանվում է, երբ կամ եթե կողմերը հաշտվում են, մեծամասամբ՝ ս դա տեղի է ունենում միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության ժամանակ: Չնայած շատ դեպքերում այս հաշտեցումն իրականում տեղի է ունենում, սակայն կան դեպքեր, երբ տուժողներին հարկադրում են հաշտվել՝ գործը փակելու նկատառումով:

Ներկայումս 28 քրեական հանցագործություններ կարող են հարուցվել տուժողի բողոքի հիման վրա մասնավոր մեղադրանք ներկայացնելու կարգով, ներառյալ՝ ընտանեկան բռնության վերաբերյալ որոշ գործեր, որոնք Հայաստանի օրենսդրության մեջ հատուկ քրեականացված չեն: *Նույն տեղը*, հոդված 183:

Մասնավոր մեղադրանքի գործերում տուժողները հաճախ քրեական արդարադատության համակարգում մնում են առանց պաշտպանության: Տուժողները, ըստ ստացված տեղեկությունների, կարող են ենթարկվել ճնշման կամ ֆիզիկական բռնության, եթե մեղադրյալը քաղաքական կապեր ունի կամ դատախազի ծանոթն է, և այդ իսկ պատճառով հաճախ որոշում են բողոք չներկայացնել:

Վերջերս կայացրած որոշման մեջ Վերաքննիչ դատարանը ճանաչել է արագացված կարգով դատական քննություն անցկացնելու հարցում օգնություն տրամադրելու տուժողների իրավունքը՝ ընթացակարգ, որում մեղադրյալը համաձայնում է հրաժարվել ամբողջական դատաքննությունից, ինչպես նաև իր դեմ ներկայացված ապացույցների քննությունից և ստանում է իր կատարած հանցագործության համար սովորաբար նախատեսվող պատժի միայն 2/3-ը: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍՊԻԲ, հոդվածներ 375<sup>1</sup>–375<sup>4</sup>: Այս ընթացակարգը բավականին տարածված է՝ հատկապես ծանր հանցագործությունների գործերով, ինչպես նաև մարզերում: Որպես կանոն, երբ կիրառվում է դատական քննության արագացված կարգ, դատարանը չի քննում գործում առկա ապացույցները կամ անդրադառնում այն հարցին, թե արդյոք մեղադրանք առաջադրելու մասին որոշումը ճիշտ է կատարվել: Տուժողները նախկինում որևէ առնչություն չեն ունեցել դատական քննության արագացված կարգ կիրառելու հետ, չնայած այն բանին, որ դատաքննության արդյունքում մեղադրյալը կարող է մեղադրվել առավել մեղմ հանցագործության մեջ, քան այն, ինչը տուժողի կարծիքով, փաստերն են թելադրում, կամ մեղադրյալը կարող է ստանալ սովորաբար նշանակվող պատժի 2/3-ը: 2010թ. մարտին Վճռաբեկ դատարանը գտել է, որ տուժողն արդար դատաքննություն ունենալու իրավունք ունի՝ վերականգնելու հանցագործություն կատարած անձի կողմից խախտած իրավունքները ՀՀ Մահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն: Համապատասխանաբար, դատարանը որոշել է, որ դատախազը պետք է հաշվի առնի դատական քննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ ունեցած տուժողի դիրքորոշումը, և որ դատավորը պետք է տեղեկացված լինի այդ դիրքորոշման մասին նախքան դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին որոշում կայացնելը: *Տիգրան Քամայյանի գործը*, թիվ ԵՍՀԴ/0097/01/09 (2010թ. մարտի 26): Դատարանը կարող է մերժել արագացված կարգով դատաքննություն անցկացնելու վերաբերյալ մեղադրյալի միջնորդությունը, եթե տուժողն առարկում է, և նման դեպքում դատավորը պետք է որոշում կայացնի՝ պատճառաբանելով, թե ինչու արագացված կարգով դատաքննության արդյունքում կարող են տուժողի շահերը վտանգվել: Բացի այդ, այն դեպքերում, երբ տուժողը լիարժեք չի փոխհատուցվել պատճառված վնասի դիմաց կամ նա համաձայն չէ գործում առկա փաստերի հետ, ապա արագացված կարգով

դատաքննություն անցկացնելու դեմ տուժողի առարկությունը պետք է բավարարվի: *Նույն տեղը*:<sup>7</sup>

Որոշ դատավորներ նշել են, որ նրանք ակնկալում են տուժողի օգնությունը պատժի նշանակման փուլում, հատկապես երբ քննարկվում է պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը՝ չնայած որ ոչ միշտ է իրավաբանորեն թույլատրվում անել դա: Մեղադրյալի կողմից արարքը կատարելուց անմիջապես հետո բժշկական կամ այլ օգնություն տուժողին առաջարկելը, նրան հանցագործությամբ պատճառված վնասի համար կամավոր հատուցելը կամ որևէ այլ գործողություն ձեռնարկելը, որոնք ուղղված են մեղմացնելու տուժողին պատճառված վնասը պատիժը նշանակելիս համարվում են մեղմացուցիչ հանգամանքներ: *Նույն տեղը*, հոդված 62 (10): Եթե տուժողը ներկա չէ, ապա դատավորը կարող է շարունակել կամ հետաձգել պատիժ նշանակելը մինչև տուժողի ներկայանալը: Այն դեպքում, երբ մեղադրյալը դատապարտվում է կոնկրետ անձի դեմ կատարած հանցագործության համար, դատարանների դիրքորոշումն այն է, որ նրանք չեն կարող արգելել մեղադրյալին հեռու մնալ տուժողից, քանի որ Սահմանադրությամբ չի թույլատրվում սահմանափակել ազատ տեղաշարժվելու իրավունքը: ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, հոդված 25: Ինչնից, հարցազրույցների մյուս մասնակիցները նշել են, որ համաձայն Սահմանադրության 43 հոդվածի ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել հասարակության անվտանգությունը, հասարակական կարգը և այլոց իրավունքներն պաշտպանելու նպատակով և ուստի տուժողի հետ շփումն արգելելը պետք է որ սահմանադրորեն թույլատրելի լինի:

Փաստաբաններն, այնուամենայնիվ, նշել են, որ դատարաններն ընդհանրապես հաշվի չեն առնում տուժողներին որոշում կայացնելիս: Գնահատող թիմին ներկայացված մի օրինակում սպանության համար դատապարտված մեղադրյալը մեղմ պատիժ է ստացել, իսկ տուժողի մայրը չափազանց վախեցել է բողոքարկել դատավճիռը՝ իր մյուս որդու նկատմամբ սպառնալիքից կամ վրեժից խույս տալու պատճառով: Ինչպես նշվել է, տուժողների կարծիքը հաշվի չի առնվում նաև այլընտրանքային պատիժների վերաբերյալ դատավճիռ կայացնելիս, որի դեպքում տուժողը կարող է կրկնակի գոհ դառնալ կամ այն կարող է բացասաբար անդրադառնալ նրա և նրա ընտանիքի իրավունքների վրա:

Տուժողները մասնակցություն չունեն Անկախ հանձնաժողովի որոշումների կայացման հարցում, սակայն տուժողները կարող են հրավիրվել ներկա լինելու

<sup>7</sup> Այս որոշումն արդեն կիրառվել է առաջին ատյանի դատարանի կողմից և հաստատվել ՀՀ Քրեական վերաքննիչ դատարանի կողմից *Ավագյանի* գործում, որը քննարկվել է վերոհիշյալ Գործոն 4-ում:

պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին դիմումները Անկախ հանձնաժողովի կողմից բավարարելուց հետո անցկացվող դատական նիստին: Վերջիններիս մասնակցությունը, սակայն պարտադիր չէ: Բացի այդ, չկան տուժողներին տեղեկացնելու կամ նրանց կարծիքը հաշվի առնելու մասին օրենսդրական կարգավորումներ նաև ներման և համաներման դիմումները քննելիս:

**Գործոն 6. Հատուկ նկատառումներ անչափահասների գործերով**

*Քրեական արդարադատության համակարգը երաշխավորում է անչափահասների առանձնահատուկ իրավունքները և նրանց հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը, ինչպես նաև խթանում նրանց ֆիզիկական և մտավոր բարեկեցությունը նախապատվություն տալով անչափահասների նկատմամբ կալանավորման կամ ազատազրկման ձևով պատիժը կրելու այլընտրանքային միջոցների կիրառմանը:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Հայաստանում չկա համապարփակ, ընդհանուր համակարգ, որը զբաղվում է անչափահասների նկատմամբ իրականացվող արդարադատության հարցերով, ներառյալ՝ կալանավորման և պատժի նշանակման հարցերով:</p>	

Հայաստանում նախքան հանցանք կատարելը 16 տարին լրացած անչափահասը ենթակա է քրեական պատասխանատվության: Մինչև հանցանքը կատարելը 14-ից 16 տարին լրացած անչափահասը ենթակա է քրեական պատասխանատվության ավելի ծանր հանցագործություններ կատարելու համար, ինչպիսիք են՝ սպանությունը, բռնաբարությունը, ավազակությունը, մարդուն առևանգելը և սեքսուալ բնույթի բռնի գործողությունները: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻԲ, հոդված 24(1)-(2): Հանցանքը կատարելու պահին 16 տարին չլրացած անչափահասի օրինական ներկայացուցիչը (ծնողը կամ խնամակալության և հոգաբարձության մարմինը) նրա հետ ներկա է գտնվում գործի քննությանը, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻԲ, հոդված 441, և նրա նկատմամբ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում: *Նույն տեղը*, հոդված 442: Ձերբակալվածներին և/կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է ծնողներին կամ մերձավոր ազգականներին տեղյակ պահել ձերբակալման կամ կալանավորման մասին: ՁԵՆԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 32 (*ընդունվել է 2002թ. փետրվարի 6-ին, փոփոխվել է 2006թ. նոյեմբերի 15-ին*): Անչափահասի իրական տարիքը որոշելուց բացի Հայաստանի օրենսդրությամբ

յունը պահանջում է պարզել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նրա առողջությունը և ընդհանուր զարգացման վիճակը, ինչպես նաև դաստիարակության պայմանները: ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 440: Անչափահաս մեղադրյալների շահերը պարտադիր պետք է ներկայացնի պաշտպանը: *Նույն տեղը*, հոդված 69(5):

Հայաստանի Քրեական օրենսգիրքն առանձին սահմանում է անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակները՝ տուգանք, հանրային աշխատանք, կալանք կամ որոշակի ժամկետով ազատազրկում: ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 86: Կալանքը (այսինքն՝ 15 օրից 2 ամիս ժամկետով ազատությունից զրկումը) նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրացած անչափահասի նկատմամբ: *Նույն տեղը*, հոդված 88: Ազատազրկման ձևով պատիժները (այսինքն՝ 3 ամսից մինչև 15 տարի ժամկետով անձին անազատության մեջ պահելը) տարբեր է հանցագործության ծանրությունից կախված՝ ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, մինչև 16 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 7 տարի ժամկետով, 16-ից մինչև 18 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 10 տարի ժամկետով: *Նույն տեղը*, հոդված 89: Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս օրենքը սահմանում է, որ դատարանը հաշվի առնի նրա կյանքի և ընտանեկան պայմանները, հոգեկան, ֆիզիկական առողջությունը, ընդհանուր զարգացումը, անձի առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը: *Նույն տեղը*, հոդված 90(1): Մինչև 16 տարին լրացած միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անչափահասների նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 7 տարին: *Նույն տեղը*, հոդված 90(2): Բացի այդ, եթե 16-ից 18 տարեկան անչափահասը կատարել է մեկից ավելի միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք, ապա նրա նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 10 տարին: *Նույն տեղը*, հոդված 90(3): Եվ վերջապես, ոչ մի դեպքում ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող պատիժը չի կարող գերազանցել 12 տարին: *Նույն տեղը*, 90(4): Ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 18 տարին չլրացած անձինք: *Նույն տեղը*, հոդված 60(2): Ազատազրկման դատապարտված անչափահասների նկատմամբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել, եթե նրանք կրել են ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ քառորդը, ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը կամ առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը: *Նույն տեղը*, հոդված 94:

Եթե անչափահասը առաջին անգամ է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարել, ապա նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից դատարանի կողմից, եթե դատարանը գտնում է, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ: Այդ միջոցներն են՝ նախազուշացումը, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ անչափահասի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը 6 ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը կամ այլ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը 6 ամիս ժամկետով: *Նույն տեղը*, հոդված 91: Հատուկ պահանջների սահմանումը կարող է նախատեսել որոշակի վայրեր այցելելու, առանց համաձայնության այլ վայրեր ուղևորվելու կամ տրանսպորտային միջոց վարելու արգելք կամ ուսումնական հաստատություն կամ աշխատանքի վերադառնալու պահանջ: *Նույն տեղը*, հոդված 92(4): Եթե անչափահասը չի հետևում այս միջոցներին, ապա նա կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել դատարանի կողմից: *Նույն տեղը*, հոդված 91(5): Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը նաև կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնում է, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով առավելագույնը 3 տարի ժամկետով: *Նույն տեղը*, հոդված 93:

Եթե անչափահասը հաջողությամբ կրում է ազատագրկման հետ չկապված պատիժը, ապա նրա դատվածությունը համարվում է մարված: *Նույն տեղը*, հոդված 96(1): Մինչև 18 տարին լրացած ազատագրկման ձևով պատիժը կրող անչափահասի համար դատվածությունը մարվելու ժամկետները հետևյալն են՝ 1 տարի միջին ծանրության հանցագործության համար, 3 տարի ծանր հանցագործության համար և 5 տարի առանձնապես ծանր հանցագործության համար:

Երբ դատարանը գալիս է այն եզրակացության, որ հանցագործության կատարման պահին մինչև 16 տարին լրացած անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, ապա անչափահասը կարող է ազատվել պատժից: ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 443: Միննույն ժամանակ, օրենքը նախատեսում է, որ եթե անձն անչափահաս է հանցագործությունը կատարելու պահին, ապա այդ փաստը համարվում է պատիժը մեղմացնող հանգամանք: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 62(1(2)): Չափահաս դատապարտյալների համար հանրային աշխատանքներ կարող են նշանակվել որոշ դեպքերում՝ դատավճիռ կայացնելու պահին 16 տարին լրացած կամ ավելի մեծ տարիքի անչափահասների նկատմամբ: *Նույն տեղը*, հոդված 54(4):

Չափահասները, ովքեր դատավճռի կայացման պահին անչափահաս են եղել, կարող են մնալ անչափահասների համար նախատեսված ուղղիչ հիմնարկում 18-ից մինչև 21 տարեկանը: Անչափահասները պետք է անջատ պահվեն չափահասներից: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔ, հոդված 68(1): Ձերբակալված կամ կալանավորված անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ, այդ թվում՝ մարմնամարզությամբ զբաղվելու պայմաններ: ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 27:

ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված հանցագործությունների վերաբերյալ չհրատարակված վիճակագրության համաձայն, անչափահասների կողմից կատարված ամենատարածված հանցագործությունը գողությունն է՝ կազմելով 77% 2008թ. ընթացքում գրանցված անչափահասների գործերի մեջ: Միննույն ժամանակ, 2009թ. ընթացքում գրանցված անչափահասների գործերի 7.7 % եղել են կողոպուտի, 8.8%-ը՝ հարձակման, 3.6%-ը՝ խուլիգանության, 0.8%-ը՝ սեռական բնույթի հանցագործության դեպքեր:

Պրակտիկայում չնայած այն բանին, որ անչափահասների արդարադատության մասով դեռ ամբողջական համակարգ չի ստեղծվել Հայաստանում, որոշ բարելավումներ և ուղղիչ միջոցառումներ արդեն ձեռնարկվել են, այնուամենայնիվ, դեռևս շատերը մնում են որպես ցանկություն Հարցազրույցների մասնակիցներից շատերը նշել են, որ անչափահասների գործերով մասնագիտացած դատավորներ ունենալը օգտակար կլինի: Մի քննչական վարչության պետ նշեց, որ երբ անչափահասի գործ են ունենում, ապա վերջինս քննությունը հանձնում է ավելի փորձառու քննիչի և փորձում է այնպես անել, որ իր քննիչները անչափահասների գործերով մասնագիտացված դասընթացներ անցնեն: Մարզերի մի քանի դատախազներ աչալրջությամբ ուշադրության կենտրոնում էին պահում անչափահասներին վերաբերող խնդիրները՝ համայնքում միջկարգապահական խմբեր ստեղծելու միջոցով (որի կազմում կան ոստիկանության, քաղաքապետարանի, հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ), դպրոցների, եկեղեցիների ներկայացուցիչներ, դատախազներ, սոցիոլոգ-հոգեբաններ, սպորտի բնագավառի պաշտոնյաներ և այլոք)՝ ուսումնասիրելու անչափահասների կողմից կատարված հանցագործությունները և որոշելու դրանք կանխարգելելու ռազմավարությունը: Դատախազներից մեկն ասել է, որ յուրաքանչյուր անչափահասի գործով նա խոսում է անչափահասի հետ՝ հասկանալու համար նրա դրդապատճառները և յուրաքանչյուրի սոցիալական վիճակը: Նա հանդիպում է նրանց ծնողների, դպրոցի ներկայացուցիչների և համապատասխան այլ անձանց հետ: Նա նշել է, որ տարին 2 անգամ անչափահասների կողմից կատարված հանցագործությունների մասին ձեռք բերված տեղեկությունների արդյունքները, ինչպես նաև կանխարգելիչ քայլերի ընդհանուր նկարագիրը, հրատարակվում է տպագիր

մամուլում: Նշել է նաև, որ սա բերել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թվի նվազման: Բացի այդ, ամիսը 4 անգամ նա այցելում է դպրոցներ՝ բացատրելու քրեական գործողությունների, ներառյալ՝ սեռական հանցագործությունների էությունը և հետևանքները: Ըստ նրա, որոշ հանդիպումներ տևել են մինչև չորս ժամ: Նշել է, որ ՀՀ Գլխավոր դատախազի անձնական քաղաքականությունը պետք է լինի զերծ պահել անչափահասներին քրեական արարքներից: Մեկ այլ դատախազ ասել է, որ նա նախընտրում է խիստ չլինել անչափահասների հետ, սակայն ցանկանում է վերացնել հանցագործության պատճառները, քանի որ քննարկումներն ու կանխարգելիչ ռազմավարությունը առավել արդյունավետ են, քան ազատությունից զրկելը: Նա նշել է, որ Գլխավոր դատախազը ստեղծել է անչափահասների հացագործությունների գծով աշխատանքային խմբեր, որոնց կազմում են ոստիկաններ, դատախազներ, դպրոցի տնօրեններ, ուսուցիչներ և այլք:

Հարցազրույց տվող դատավորներից մեկը հայտնել է, որ անչափահասների շրջանում ամենահաճախ հանդիպող հանցագործությունները գողությունն ու խուլիգանությունն են, սակայն կան նաև մի քանի սեռական բնույթի հանցագործություններ: Նշել է, որ աճել են անչափահասների կողմից կատարված կողոպուտի դեպքերը, որն ամենայն հավանականությամբ պայմանավորված է անչափահասների սոցիալ-տնտեսական վիճակով: Չնայած այն բանին, որ համոզված չէր, թե որքանով են արդյունավետ համայնքային հանձնաժողովները, սակայն այն կարծիքին էր, որ անչափահասների նկատմամբ ընդհանուր առմամբ մեղմ վերաբերմունք պետք է լինի՝ յուրաքանչյուր տարիքում և յուրաքանչյուր տեսակի հանցանքի համար առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելով (օրինակ՝ մարիխուանա և ավիոն պահելու նկատմամբ տարբեր մոտեցումներ պետք է լինեն): Նրա կարծիքով 14-ից 16 տարեկան անչափահասները դեռևս երեխա են: Եվ ամենակարևորն այն է, որ համայնքում դպրոցահասակ երեխաների և երիտասարդների համար միջոցառումներ լինեն, որտեղ նրանք կմասնակցեն:

Շատ դրական արձագանքներ են եղել համայնքային վերականգնողական կենտրոնների վերաբերյալ հարցազրույցների մասնակիցների, այդ թվում նաև՝ անչափահաս դատապարտյալների կողմից: Այս կենտրոնները ցերեկային ժամերին գործող հիմնարկներ են, որտեղ հաճախում են ոստիկանության, ծնողների, ուսուցիչների և այլ անձանց կողմից ուղարկված անչափահասները (սովորաբար նրանք, ովքեր առաջին անգամ են հանցագործություն կամ իրավախախտում կատարել): Կենտրոններն անհրաժեշտ ուղղություն և աջակցություն են ցույց տալիս անչափահասներին և հանդիսանում են ազատագրված կամ փորձաշրջանի արդյունավետ այլընտրանք: Կենտրոնները վերահսկվում են Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ USAID) կողմից ֆինանսավորվող մի հասարակական կազմակերպության կողմից: Կենտրոնների հետագա գոյությունը

անորոշ է, քանի որ առ այսօր պետությունը չի ֆինանսավորել դրանք: Արտաքին աղբյուրներից ստացվող կենտրոնների ֆինանսավորման ժամկետն անսահմանափակ չէ:

Անչափահասների կալանավորման բնագավառում մի քանի խնդիր մտահոգել են գնահատող թիմին: Տեղեկություններ են ստացվել այն մասին, որ որոշ դեպքերում քննիչները թյուրիմացաբար սխալ պատկերացում են ստեղծում իրենց դերի մասին և ընկալվում են որպես պաշտպան, որպեսզի համոզեն անչափահասներին ստորագրել ինքնախոստովանական ցուցմունքները: Հնչել են նաև խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններ, որոնց միջոցով փորձել են բռնի ուժով ստիպել անչափահասներին խոստովանել մեղքը կամ մեղադրել ուրիշներին, այդ թվում՝ երբ նրանք նախաքննության ժամանակ մեկուսացված պահվում են ոստիկանության բաժանմունքում: Մեպտեմբերի 9-ի գործով հայտնել են, որ 16-ամյա տղան ենթարկվել է էլեկտրական շոկի: Մասնակիցներից մեկի կարծիքով անչափահասները հաճախ չափազանց վախենում են իրենց իրավունքները պաշտպանելուց: Մեկ այլ մասնակից, ով կալանքի տակ գտնվող անչափահասների հետ կապված հարցումներ էր անցկացրել, ասաց, որ անչափահասներից ոմանք երբեք չէին տեսակցել իրենց գործով նշանակված հանրային պաշտպանին կամ ընդամենը մեկ անգամ էին տեսել նրան, ինչպես նաև բողոքում էին, որ դատավորներն անում են այն, ինչ դատախազներն են ուզում: Տվյալ մասնակիցը տեղեկացրեց 72-ժամյա ժամկետի խախտումների մասին, որի լրանալուց հետո պետք է որոշվի անձին կալանավորելու հարցը, սակայն չէր կարծում, որ սա նորմ է կամ համատարած բնույթ է կրում: Ենթադրվում է, որ կալանքի տակ պահելու միջին տևողությունը նախքան դատավճիռ կայացնելը 2-7 ամիս է: Գյումրիում, որը գտնվում է Շիրակի մարզում, հայտնել են, որ կալանավորումը կիրառվում է ամենավերջին հերթին՝ անչափահասի սոցիալական միջավայրը հաշվի առնելուց հետո և միայն ծանր հանցագործություններ կատարելու համար: 2009թ. Գյումրիում 39 անչափահասների գործերից միայն 2-ի դեպքում է կալանք կիրառվել (17-ամյա 2 մեղադրյալի կողմից կատարվել է խոշոր չափի գողություն): Սույն գնահատման նպատակով անցկացված հարցազրույցների ժամանակ նրանք դեռևս կալանքի տակ էին գտնվում և սպասում էին դատաքննությանը: Տեղեկացրել են նաև, որ մի դատավոր, վկայակոչելով ՄԻԵԴ-ի դատական պրակտիկան, գրավ է նշանակել ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ:

ԱՆ կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համաձայն 2009թ. Հայաստանում կալանավորված անչափահասների թիվը կրկնապատկվել է: Անչափահասները պահվում են Երևանից դուրս գտնվող Արովյանի քրեակատարողական հիմնարկում: Սույն գնահատումն անցկացնելու ժամանակ Արովյանում կար նախնական կալանքի տակ գտնվող 16, իսկ ազատազրկման ձևով պատիժ կրող 29 անչափահաս: Նախնական կալանքի ժամանակ անչա-

փահասները պահվում են նույն պայմաններում, ինչ չափահաս դատապարտ-  
յալները՝ անցկացնելով յուրաքանչյուր օր 22 ժամ խցերում և միայն 1 ժամ  
մարզվելով դրսում՝ ծածկ չունեցող խցում: Կանայք և անչափահասները  
մինչդատական կալանքի փուլում պահվում են տարբեր խցերում: Քրեակա-  
տարողական հիմնարկն ունի իրարից ամբողջովին առանձին 2 շենք՝  
ազատազրկման դատապարտված կանանց և անչափահասների համար:  
Անչափահասներին թույլատրվում է օգտվել ԵԱՀԿ-ի կողմից նվիրաբերված  
մարզական սարքերից, վագուդուց և հեծանիվներից: 2009թ. Աբովյանի քրեա-  
կատարողական հիմնարկում կալանքի տակ գտնվող 2 անչափահաս հեռահար  
ուսուցում են անցել և ազատ արձակվելուն պես հաճախել են համալսարան:  
Առաջին անգամ հանցագործություն կատարած անչափահասները պետք է  
առանձնացվեն կրկնահանցագործներից: Աբովյանի քրեակատարողական  
հիմնարկի ներկայիս վարչակազմը հիշում է միայն մեկ դեպք, երբ աղջիկ  
անչափահասն ազատազրկման ձևով պատիժ է կրել: Աղջիկների համար  
առանձին պայմաններ չունենալու պատճառով վերջինս տեղավորվել է  
կանանց համար նախատեսված վայրում և կիսել կանանց համար նախատես-  
ված ննջասենյակը: Վարչակազմի ներկայացուցիչները նշել են, որ մյուս միակ  
տարբերակը նրան մեկուսարանում պահելն էր, քանի որ Աբովյանում պատիժը  
կրող այլ աղջիկ անչափահասներ չկային:

Դատարանները անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու քիչ  
այլընտրանքներ ունեն: Թվում է, թե շատ դատարաններ փորձում են ազա-  
տազրկման ձևով պատիժ չնշանակել անչափահասների նկատմամբ: Նախկին-  
ում անչափահասի բնակության վայրի հասարակական պաշտպանները նրա  
հետ միասին էին գալիս դատարան: Այժմ դատարանն ինքն է տեղեկություններ  
հավաքում անչափահասի մասին, չնայած երբեմն դպրոցի աշխատակազմի  
կամ այլ անձանց կողմից անչափահասի «սոցիալական պայմանների» վերա-  
բերյալ ցուցմունքներ տալու մասին առաջարկություններ լինում են: Մի  
դատավոր նախկինում ներգրավված է եղել համայնքային լսումներում, որոնք  
անդրադառնում էին անչափահասներին առնչվող խնդիրներին, ինչպես նաև  
կենտրոնանում հանցագործությունների կանխարգելման վրա: Նա նշել է, որ  
հանցագործությունների թիվն աճում է, իսկ ոստիկանությունը հպարտանում է  
ձերբակալման հարցում ունեցած իրենց ցուցանիշներով, սակայն նրանք ավելի  
շատ պետք է աշխատեն անչափահասների շրջանում հանցագործությունները  
կանխելու ուղղությամբ: Պրակտիկայում դատարանները հազվադեպ են  
տուգանք նշանակում, քանի որ անչափահասները սովորաբար վճարունակ չեն:  
Եթե տուգանք է նշանակվում, ապա շատ փոքր գումարի չափով: Այն դեպքում,  
երբ անչափահասն ի վիճակի չէ վճարել, վճարումը կասեցվում է մինչև նրա  
չափահաս դառնալու տարիքը: Եթե անչափահաս դատապարտյալն անցնում է  
պարտադիր զինվորական ծառայության, ապա վճարումը կարող է կասեցվել  
մինչև նրա զորացրվելը կամ զորացրվելուց հետո այն կարող է փոխարինվել  
հանրային աշխատանքով: Սակայն, հանրային աշխատանքն այլընտրանքային

պատիժ է հանդիսանում միայն 16-ից 18 տարեկան անչափահասների համար: ՔՐ. ՕՐԵՆՆՍԳԻՐՔ, հոդված 54(4):

Այն քիչ դեպքերում, երբ փորձաշրջան է նշանակվում, քանի որ չկան անչափահասների գծով մասնագիտացած ծառայողներ, անչափահասները հաճախ վերահսկվում են ոստիկանության կողմից, չնայած այն բանին, որ վերահսկողություն իրականացնելը մտնում է ԱՆ-ի լիազորությունների մեջ: Գործնականում առկա խնդիրներից մեկն այն է, որ պատիժը պայմանականորեն չկրող անչափահասները չեն կարող տեղից տեղ գնալ կամ ճամփորդել, քանի որ նրանք պարտավոր են կանոնավոր կերպով ներկայանալ իրենց նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչություն: Եթե անչափահասի նկատմամբ այլընտրանքային պատիժ է նշանակվել, ապա ոչ ոք ակտիվորեն չի աշխատում նրա հետ՝ նրա կողմից նոր հանցագործության կատարումը կանխելու համար: Ըստ ստացված տեղեկությունների, անչափահասների կողմից կատարված կրկնահանցագործությունների թիվը բավականին բարձր է: Շիրակի մարզում համայնքային հանձնաժողովները, որոնցից մեկը գտնվում է ոստիկանությունում, իսկ մյուսը՝ քաղաքապետարանում (որի կազմում են քաղաքապետարանի քարտուղարը, անչափահասների բաժինը դեկավարող ոստիկանության աշխատակիցը և մի հոգեբան), համաձայն հայտնած տեղեկությունների, աշխատում են անչափահաս դատապարտյալների հետ կրկնահանցագործությունը կանխելու նպատակով: Հանձնաժողովները զբաղվում են ինչպես հանցագործության մեջ մեղադրվող, այնպես էլ պաշտոնապես չմեղադրվող անչափահասների հետ, ովքեր հաճախ սոցիալապես անապահով ընտանիքներից են և տնտեսական պայմաններից ելնելով՝ հայր չունեն (երբեմն աշխատում են Ռուսաստանում կամ արտերկրում): Դատարանները հաճախ անչափահասի նկատմամբ հսկողությունը հանձնում են ծնողին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ այլ իրավասու մարմինների (ներառյալ՝ ուսուցիչներին): Այս պարագայում լուրջ փորձեր են արվում անչափահասին հասարակական կյանքում ներգրավելու ուղղությամբ՝ մշակութային, կրթական կամ մարզական միջոցառումների միջոցով: Մի դատավոր բերեց առաջին անգամ ծխախոտ գողացած մի անչափահասի օրինակը: Նա կարող է վերահսկվել թաղապետարանների կամ դպրոցի աշխատակազմի կողմից, քանի որ ոստիկանությունը վերահսկիչ գործառույթներ չունի (չնայած ոստիկանությանը տեղյակ է պահվում ցանկացած հարցի մասին): Դեռևս դպրոցում սովորող անչափահասները սովորաբար վերահսկվում են ոստիկանության ներկայացուցիչների կամ նրանց ծնողների կողմից կամ կատարում են ինչ-որ տեսակի հանրային աշխատանք ուսուցիչների վերահսկողության ներքո:

Պատիժը փաստացի կրելու հետևանքով հասարակության կողմից արտահայտվող պարսավանքն ավելի մեծ է անչափահաս դատապարտյալների, քան չափահասների նկատմամբ, հատկապես փոքր համայնքներում: Նա կարող է

արատավորված համարվել նաև չափահաս տարիքում: Ըստ մի դատավորի, անչափահասների հետ կապված ամենամեծ խնդիրն այն է, որ պատիժները չափազանց խիստ են սահմանված և չափազանց դաժան են: Միակ դեպքը, երբ նա ստիպված է եղել ազատագրկման դատապարտել անչափահասին, դա խուլիզանության և սպանության փորձի մեջ մեղադրվող մի անչափահասի դատապարտումն է եղել, որի համար նվազագույնը 8 տարի ազատագրկում էր նախատեսված: Եթե անչափահասը նախքան պատիժը կրելու ժամկետի ավարտը դառնում է չափահաս, ապա նա տեղափոխվում է չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկ: Այն դեպքում, երբ նա ուղարկվում է չափահասների համար նախատեսված հիմնարկ, ապա նա կարող է մեկուսացվել մյուսներից, սակայն ընդհանուր առմամբ դա կարող է ավելի մեծ խնդիրներ ստեղծել նրա վերականգնման համար: Անչափահաս դատապարտյալների համար վերականգնողական կենտրոններ չկան:

Նշվել է, որ բանտում գտնվող անչափահասներին մեծամասնությունը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվում են: Նրանց այդ գործընթացում օգնում է բանտի սոցիալական աշխատողը: Հարցազրույցների մասնակիցներից մեկը, ով զբաղվել էր անչափահաս կալանավորների վերաբերյալ հարցումներով հայտնեց, որ անչափահասներից շատերի կարծիքով իրենց նկատմամբ արդար դատավճիռ է կայացվել (այսինքն՝ նրանք ընդունում էին իրենց մեղքը), սակայն պատիժն արդար չի եղել: Այս մասնակցի կարծիքով անչափահասներին ազատագրկման դատապարտելը ստիպում է նրանց ներգրավվել բանտային կյանքում՝ նպաստելով ռեցիդիվին:

Երևանում գտնվող միակ գործող հատուկ կրթական հաստատություն հաճախելու համար (որը չի հանդիսանում արդարադատության համակարգի մաս, այլ ղեկավարվում է Կրթության նախարարության կողմից) պահանջվում է ծնողների համաձայնությունը, և ինչպես նշեցին դպրոցի աշխատողները, հաճախ ծնողները և ընտանիքի անդամներն անչափահասների խնդիրների անբաժանելի մասն են կազմում: Աշակերտների մեծամասնությունը դատարանի կողմից են ուղարկվում, սակայն նրանք չեն դատապարտվել հանցագործություն կատարման համար: Դպրոցը գիշերօթիկ, վերականգնողական և մասնագիտական հաստատություն է: Անչափահասներն ուղարկվում են այս հաստատություն իրենց կրթությունն ավարտելու մտադրությամբ: Այնտեղ, որպես կանոն, աշակերտներին չեն հեռացնում և չկա դատարանի կողմից վերահսկողություն: Վորլդ Վիժն (“World Vision”) ՀԿ-ն 2004թ.-ին եղել է դպրոցի ամենախոշոր հովանավորը և օգնել է կազմակերպել ընդհանուր ուսուցումը, ստեղծելու պաշտոնական հավատարմագրման համակարգը և ատեստավորել աշխատակազմին (սոցիալական աշխատողներին, հոգեբաններին, ուսուցիչներին և ոչ մասնագետ աշխատողներին): Գնահատումն անցկացնելու ժամանակ դպրոցում մնում էր 10-ից 18 տարեկան 72 տղա և աղջիկ (18 տարին լրանալուց հետո աշակերտներին թույլ է տրվում մնալ, եթե նրանք դեռևս պետք է ուսումն

ավարտեն): Բացի կրթական հնարավորություններից, դպրոցում աշխատանքային ժամերին գործում են նաև այլ ծառայություններ, այդ թվում՝ բժշկական (1 բժիշկ և 4 քույր) և սոցիալ-հոգեբանական (4 սոցիալական աշխատող և 2 հոգեբան): Ամեն տարի շուրջ 30 աշակերտ է դպրոցն ավարտում և տուն վերադառնում: Աշակերտները ողջ Հայաստանի տարածքից են, սակայն մեծամասամբ Երևանից են, իսկ ոմանք էլ մնում են իրենց քրոջ կամ եղբոր հետ: Բոլոր աշակերտներն ունեն անհատական զարգացման ծրագիր, որը յուրաքանչյուր 6 ամիսը մեկ վերանայվում է: Հնարավորության դեպքում աշակերտների այցելությունները տուն խիստ խրախուսելի են, քանի որ ծրագրի ընդհանուր նպատակը վերականգնումը և վերաինտեգրումն է ընտանեկան և համայնքային կյանքում:

Ներկա դրությամբ հատուկ կրթական հաստատության առջև ծառայած ամենամեծ խնդիրը ծնողների համաձայնությունն է՝ սահմանափակում, որը երբեմն երեխայի լավագույն շահին չի ծառայում: Դպրոցի տնօրենը նշեց, որ սա կարող է փոխվել շուտով: Նախկինում անչափահասները դպրոց էին գալիս դատարանի որոշմամբ, սակայն այժմ այդպես չէ: Դպրոցն այժմ դիմումներ է ստանում համայնքում գործող հանձնաժողովներից կամ ոստիկանության անչափահասների բաժնից, հատկապես այնպիսի անչափահասների վերաբերյալ, ովքեր գողություն են կատարել կամ ագրեսիվ վարք ունեն (և ում հետ հաճախ դժվար է լեզու գտնել): Եթե աշակերտներն ուղարկվում են անառողջ կամ անապահով ընտանեկան միջավայր, ապա դպրոցը փորձում է համայնքում առկա ռեսուրսների կամ ոստիկանությանը կից անչափահասների հարցերով հանձնաժողովների միջոցով կապի մեջ մնալ և օգնել՝ ապահովելու անչափահասների անվտանգությունը: Քանի որ Հայաստանում կրթությունը պարտադիր է մինչև 16 տարեկան երեխաների համար, ծնողները չեն կարող ստանձնել խնամակալությունը մինչև չլուծեն երեխայի կրթության հարցը տեղական դպրոցում: Դպրոցը նաև տրամադրում է մի շարք այլ ծառայություններ, ինչպիսիք են ծննդյան վկայականների կամ անձը հաստատող փաստաթղթերի պահպանումը նույնիսկ աշակերտների ընտանիքի անդամներից: Կան աշակերտներ, ովքեր դպրոցն ավարտելուց անմիջապես հետո մեկնում են զինվորական ծառայության:

## II. Ազատությունից զրկումը մինչդատական փուլում

### Գործոն 7. Անձին ազատությունից նախնական զրկումը

*Հանցագործության կատարման մեջ կասկածվող անձն ազատությունից զրկվում է անկողմնակալ և չեզոք դատական մարմնի կայացրած որոշման հիման վրա, բացառությամբ արտակարգ հանգամանքների, երբ հնարավոր չէ ձեռք բերել ձերբակալելու մասին որոշումը և բավարար հիմքեր կան կարծելու, որ ձերբակալված անձը կատարել է հանցագործություն: Ձերբակալումն իրականացվում է ձերբակալված անձին իրավասու իրավապահ մարմնի առջև բերելու նպատակով, և պատշաճ ուշադրություն է դարձվում ձերբակալման այլընտրանքներին:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Չնայած կասկածյալներին արգելանքի տակ վերցնելու դատավարական ընթացակարգերը օրենքում ամրագրված են գործնականում առկա են բացեր, որոնք թույլ են տալիս չհետևել այդ ընթացակարգերին գրեթե բոլոր քրեական գործերով: Շատ իրավաբաններ, թվում է, թե տեղյակ չեն արգելանքի տակ վերցնելու պատշաճ ընթացակարգերին, այդ թվում նաև՝ արգելանքի տակ վերցված կամ հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց իրավունքներին: Տարածված են առանց իրավական կարգավիճակ տալու անձանց ոստիկանության բաժանմունքում անազատության մեջ պահելու դեպքերը:</p>	

### Վերլուծություն/Նախադրյալներ

Հայաստանում անձը ձերբակալվում կամ արգելանքի տակ է վերցվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու կամ հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելու նպատակով: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 128(1): Ձերբակալումը կարող է կատարվել միայն, երբ անձը բռնվում է հանցագործության կատարման պահին կամ այն կատարելուց անմիջապես հետո կամ քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա:<sup>8</sup> *Նույն տեղը*, հոդված 128(3): Անձը կարող է ձերբակալվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի,

<sup>8</sup> Քրեական հետապնդման մարմին ասելով՝ հասկանում ենք քննիչին, դատախազին կամ հետաքննության մարմնին:

դատախազի կողմից առանց քրեական հետապնդման մարմնի որոշման, եթե նա բռնվել է հանցագործության կատարման վայրում (*flagrante delicto*), երբ ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին, երբ տվյալ անձի, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր կամ կան հիմքեր հանցանքի կատարման մեջ կասկածելու անձին, ով փորձել է փախչել դեպքի վայրից կամ չունի բնակության մշտական վայր, բնակվում է այլ տեղանքում կամ որի անձնավորությունը պարզված չէ: *Նույն տեղը*, հոդված 129: Անձը կարող է ձերբակալվել քրեական հետապնդման մարմնի որոշման հիման վրա, իսկ կասկածյալին ձերբակալելուն պես հետաքննության մարմինը, քննիչը կամ դատախազն անմիջապես պետք է տեղյակ պահեն համապատասխան որոշումը կայացրած մարմնին: *Նույն տեղը*, հոդված 130:

Ձերբակալված կասկածյալին քրեական հետապնդում իրականացնող մարմնի մոտ բերելուց հետո՝ 3 ժամվա ընթացքում կազմվում է ձերբակալելու մասին արձանագրություն: Ձերբակալման մասին արձանագրությամբ կասկածյալին տեղեկացնում են իր իրավունքների մասին: Նրանում նշվում է նաև այն հանցագործությունները, որոնց կատարման մեջ ձերբակալված անձը կասկածվում է: Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին: *Նույն տեղը*, հոդված 131<sup>1</sup>:

*Միքայելյանի* գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ անազատության մեջ պահվող անձն ունի Եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներ, այդ թվում՝ իրեն ազատությունից զրկելու և դրա պատճառի մասին տեղյակ լինելու իրավունքը, պաշտպան ունենալու և լուր մնալու իրավունքներն անգամ նախքան ձերբակալման մասին արձանագրության կազմումը: *Գազիկ Միքայելյանի գործը*, § 1, հղում՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ, հոդված 6: Բացի այդ, եթե օրենքով թույլատրելի 3 ժամվա ընթացքում ձերբակալման մասին արձանագրություն չի կազմվում, ապա դատարանը նշել է, որ անձն, այնուամենայնիվ, պետք է համարվի ձերբակալված և 72 ժամ հետո իրավունք ունի ազատ արձակվել, եթե դատարանը կալանավորման մասին որոշում չի կայացրել: *Նույն տեղը*, § 2: Ինչնիցե, պարզ չէ, թե որքանով են ստորադաս ատյանի դատարանները և երկրի քրեական հետապնդում իրականացնող մարմինները հետևում *Միքայելյանի* գործին:

Հայաստանում անձը կարող է դատարան բողոք ներկայացնել քրեական վարույթ իրականացնող մարմնի անօրինական և անհիմն որոշման կամ գործողության դեմ, այդ թվում նաև՝ անօրինական արգելանքի տակ վերցնելու դեմ: ԶԲ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՊԻՐԶ, հոդված 290: Այնուամենայնիվ, պրակտիկայում արգելանքի վերցնելու օրինականությունն ընդհանուր առմամբ գտնվում է դատական վերահսկողությունից դուրս: Դատավորն ունի 10 օր 290 հոդվածի

համաձայն ներկայացված բողոքը քննելու համար, որը գերազանցում է առանց ձերբակալելու և մեղադրանք առաջադրելու անձին արգելանքի տակ պահելու ժամկետը: Երբ անձի նկատմամբ արդեն մեղադրանք է առաջադրվում, փաստաբանները սովորաբար գտնում են, որ 290 հոդվածի համաձայն բողոք ներկայացնելը վիճելի է, քանի որ համարում են, որ մեղադրանքն արդարացնում է արգելանքի տակ վերցնելը և անգամ եթե բողոքը հիմնավոր համարվի, ապա դա չի հանգեցնի նրան, որ մեղադրյալն ազատ արձակվի կամ որ մեղադրանքները հանվեն: Բացի այդ, մինչդեռ տակալական փուլում անձին կալանավորելու հարցը լուծելիս դատարանները հաճախ չեն քննում արգելանքի տակ վերցնելու փաստական հանգամանքները: Հետևաբար, չկան արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված ընթացակարգերը չեն պահպանվում, չնայած տեսականորեն ընթացակարգին չհետևելու պատճառով հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը կամ դատախազը կարող են կարգապահական պատասխանատվության ենթարկվել: *Տե՛ս* ստորև՝ Գործոն 9:

Շատ իրավաբաններ հստակ չեն պատկերացնում արգելանքի տակ վերցնելու *դե յուրե* պահանջները: Փաստաբաններից մեկի կարծիքով քննիչներին 24 ժամ է տրված ձերբակալման մասին արձանագրություն կազմելու և դատախազին տեղեկացնելու համար, մինչդեռ մեկ այլ փաստաբան տեղյակ չէր, որ առանց դատավարական կարգավիճակի անազատության մեջ գտնվող անձինք պաշտպան ունենալու իրավունք ունեն: Քննիչների, ինչպես նաև որոշ մարզերի հանրային պաշտպանների շրջանում այն տարածված կարծիքը կա, որ պաշտպան ունենալու իրավունքը չի գործում, քանի դեռ ձերբակալման մասին արձանագրություն կազմելու համար նախատեսված 3 ժամը չի լրացել: Մինչդեռ իրականում այդ իրավունքը գործում է կասկածյալին փաստացի արգելանքի տակ վերցնելու պահից: *Տե՛ս* ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 19, *տե՛ս* նաև *Գազիկ Միքայելյանի գործը*: Ըստ դատախազների, օրենքը նրանց չի թույլատրում մասնակցել քննչական գործողություններին կամ նույնիսկ այցելել հանցագործության կատարման վայր: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 53 (*փոփոխվել է 2007թ. նոյեմբերի 28-ին*): Տարածված է նաև այն, որ դատարանի որոշման հիման վրա արգելանքի տակ վերցված անձինք միանգամից կալանավորվում են՝ առանց որոշում կայացրած մարմնին տեղեկացնելու:

Համաձայն ստացված տեղեկությունների, հետաքննության մարմնի աշխատակիցների և քննիչների շրջանում ընդունված է ուշադրություն չդարձնել կասկածյալին արգելանքի տակ վերցնելու համար նախատեսված *դե յուրե* պահանջներին: Ասում են, որ հետաքննության մարմինը հաճախակի չի գրանցում կասկածյալին արգելանքի տակ վերցնելու ժամը, այնպես որ չի կարող ապացուցվել, թե արդյոք 3 ժամից ավելի է անձն անազատության մեջ եղել նախքան ձերբակալումը: Հետաքննության մարմնի կողմից կասկածյալների և անազատության մեջ գտնվող այլ անձանց նկատմամբ ֆիզիկական

ճնշումները, ինչպես նաև բժշկական օգնություն չտրամադրելու դեպքերը, ըստ հարցազրույցների մասնակիցների, տարածված բնույթ են կրում, որպեսզի ստիպեն նրանց ցուցմունք տալ: Հատուկ քննչական ծառայությունը (այսուհետ՝ ՀՔԾ), որը պատասխանատու է հետաքննության մարմնի կողմից կատարված հանցագործությունների հետ կապված նախաքննություն իրականացնելու համար, համարվում է անարդյունավետ, քանզի այն ներգրավված է կոծկելու հետաքննության մարմնի անօրինական գործունեությունը: 2010թ. ապրիլին ոստիկանությունում գտնվելու ժամանակ Վահան Խալաֆյանն անհասկանալի հանգամանքներում մահացել է: Ոստիկանությունը պնդում է, որ նա ինքնասպանություն է գործել, սակայն ընդունում է նրան ծեծի ենթարկելու փաստը, իսկ դեպքի վկաները շտապ հեռացել են երկրից նախքան նրանց կկանչեին վկայություն տալու: *Տե՛ս Ազատություն ռադիոկայան, Հայաստանի ոստիկանությունը փնտրում է անազատության մեջ գտնված մարդու մահվան վկաներին, 2010թ. մայիսի 7:*<sup>9</sup>

Հետաքննության փուլում երկրով մեկ տարածված պրակտիկա է անձանց հրավիրել ոստիկանության բաժանմունք բացատրություն տալու՝ որպես նախաքննության կամ հետաքննության մաս, առանց տեղեկացնելու, որ նրանք կասկածվում են հանցագործություն կատարելու մեջ կամ ունեն կասկածյալի պաշտոնական կարգավիճակ, այնպես որ ձերբակալման մասին արձանագրություն կազմելու կամ նրանց իրենց իրավունքների մասին տեղեկացնելու պահանջի էությունը վեր չի հանվում: Ինչպես հայտնի է, մարդիկ տեղյակ չեն, որ կարող են հրաժարվել նման հրավերքից կամ վախենում են, որ իրենց կասկածյալ կճանաչեն, եթե հրաժարվեն: Տրամադրած տեղեկությունների համաձայն, տարածված են նաև բացատրություն տալու համար հրավիրված անձանց նկատմամբ ճնշումները, իսկ անձինք ովքեր ճանաչվել են որպես վկա կամ տուժող, վախենում են, որ իրենց կասկածյալ կճանաչեն, եթե չհամագործակցեն: Չնայած այն բանին, որ վկաներն ունեն փաստաբան ունենալու իրավունք, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 86(10), նրանք հազվադեպ են օգտվում այս իրավունքից, քանի որ շատերը տեղյակ չեն այդ իրավունքի մասին, իսկ ովքեր էլ որ տեղյակ են, վախենում են, որ մեղավորի տպավորություն կթողնեն, եթե իրենց հետ փաստաբան տանեն: Քննիչները և ոստիկանության աշխատակիցները մյուս կողմից ցավով էին նշում, որ հայկական մտածելակերպն այնպիսին է, որ վկաներն ու տուժողները չեն ուզում համագործակցել և նրանք երբեմն ստիպված են համոզելու միջոցներ գործադրել, որպեսզի խրախուսեն համագործակցությունը:

<sup>9</sup> ՀՔԾ-ն եզրակացրել է, որ պրն. Խալաֆյանը դանակահարել է իրեն ոստիկանների ձեռքերում տանջանքները կրելուց հետո: 2010թ. հուլիսին ոստիկանության աշխատակիցների նկատմամբ մեղադրանք է առաջադրվել Վ. Խալաֆյանի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերելու համար: *Տե՛ս Ազատություն ռադիոկայան, Վահան Խալաֆյանի մահվան գործով դատավարությունը սկսվեց, 2010թ. հուլիսի 6:*

**Գործոն 8. Ազատությունից զրկումը նախքան կալանավորելու մասին որոշում կայացնելը**

*Անձին ազատությունից նախնական զրկելուց հետո ձերբակալված անձն անհապաղ ներկայացվում է դատական մարմնի առջև, որպեսզի վերջինս որոշի, թե արդյոք անձը շարունակելու է պահվել անազատության մեջ, թե՛ ոչ: Նախքան դատական մարմնի մոտ տարվելը, ձերբակալված անձն իրավունք ունի տեղեկացվել առաջադրված մեղադրանքի էության, ինչպես նաև պաշտպան ունենալու, սեփական անձի դեմ ցուցմունք չտալու, ինչպես նաև ընտանիքի անդամներին, իսկ օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝ դեսպանատանը, ձերբակալման մասին տեղյակ պահելու իրավունքների մասին:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Ձերբակալման պահին ձերբակալված անձին պարտավոր են տեղեկացնել նրա իրավունքների մասին և թե ինչում է նա կասկածվում: Ձերբակալված անձի նկատմամբ պետք է մեղադրանք առաջադրվի կամ նա պետք է ազատ արձակվի և արդարացվի արգելանքի տակ վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում: Այս ուղենիշները, որպես կանոն, պահպանվում են գործնականում, սակայն ոմանք կարծում են, որ մեղադրանք առաջադրելու գործընթացն ավարտին հասցնելու համար սահմանված 72-ժամյա վերջնաժամկետի արդյունքում մեղադրանքի և մինչդատական վարույթում կալանավորելու մասին ներկայացված միջնորդությունները հապճեպ են կազմվում և վատ են հիմնավորված լինում: Մյուսների կարծիքով հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցները շտապում են կասկածյալին արգելանքի տակ վերցնել և նախքան ձերբակալելը պետք է սպասեն մինչև որ կարողանան հիմնավորել մեղադրանքը:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Հանցագործության կատարման պահին (flagrante delicto), ինչպես նաև խուզարկությունից հետո հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին անազատության մեջ պահելը և ձերբակալման մասին արձանագրություն կազմելը, որը համաձայն Հայաստանի օրենքի կոչվում է «ձերբակալում», կատարվում է ձերբակալվածներին պահելու վայրում (այսուհետ՝ ՁՊՎ), որը մարզերում գտնվում է ոստիկանության բաժանմունքներում, իսկ Երևանում՝ կենտրոնական մի հաստատությունում: ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍՊԳԻԲ, հոդված 129, 130: Քրեական հետապնդում իրականացնող մարմինը 3 ժամվա ընթացքում

կազմում է ձերբակալման մասին արձանագրություն՝ ձերբակալված անձին տեղեկացնելով իր իրավունքների մասին, պաշտպան ունենալու, պաշտպանության իրավունքի մասին, իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին, իր դեմ ցուցմունք չտալու մասին, միջնորդություններ անելու, ինչպես նաև քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցելու իրավունքի մասին, քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով անօրինական պատճառված վնասի հատուցումը ստանալու իրավունքի մասին և նշում է այն հանցագործությունները, որոնց մեջ անձը կասկածվում է: *Նույն տեղը*, հոդված 131, *տե՛ս* նաև հոդված 63: Ձերբակալման արձանագրությունը կազմելուց հետո՝ 12 ժամվա ընթացքում հետաքննության մարմինը կամ քննիչը գրավոր իրազեկում է դատախազին: *Նույն տեղը*:

Օրենքի համաձայն, ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի, անգամ եթե արգելանքի տակ վերցնելու պահից 3 ժամվա ընթացքում ձերբակալման մասին արձանագրությունը պատշաճ կերպով չի կազմվում: *Նույն տեղը*, հոդվածներ 129, 130, *տե՛ս* նաև *Գազիկ Միքայելյանի գործը*, § 2: Կասկածյալը ենթակա է ազատման, եթե նրա նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել 72 ժամվա ընթացքում և չի կարող կրկին ձերբակալվել նույն կասկածանքով: *Նույն տեղը*, հոդված 132: Եթե կասկածյալի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել, ապա նա չի կարող 3 օրից ավելի պահվել ՁՊՎ-ում, բացի այն դեպքից, երբ կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով՝ խնդիր, որը պրակտիկայում արտառոց չէ: *Նույն տեղը*, հոդված 137(2):

**ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ, 2008-2009ԹԹ.**

Կարգ	2008թ.	2009թ.
Մեղադրյալների թիվը նոր քրեական գործերով	2,790	3,375
Ձերբակալվածների թիվը	2,032	2,544
Կալանավորված մեղադրյալների թիվը տոկոսային հարաբերակցությամբ	72.8%	75.4%

*Աղբյուրը՝* ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչություն

Ե՛վ դատավորները, և՛ քննիչները դժգոհել են, որ կասկածյալի նկատմամբ մեղադրանք առաջադրելու համար նախատեսված 72-ժամյա ժամկետը չափազանց կարճ է՝ նշելով, որ այդ ժամկետի մեջ են մտնում հանգստյան օրերն ու տոները, և որ վերջնական մեղադրանքը և կալանավորման մասին որոշումը պետք է կայացվեն այս ժամկետում: Մի դատավոր նշել է, որ եթե նա շարունակում է դատական նիստը, որպեսզի ավելի շատ ապացույցներ կամ ժամա-

նակ պահանջի անձին կալանավորելու մասին որոշում կայացնելու համար, ապա նա պետք է այնպես անի, որ տեղավորվի 72 ժամվա մեջ, որովհետև եթե կասկածյալն ազատ արձակվի 72 ժամը լրանալուց հետո, ապա նա չի կարող կրկին մեղադրել անձին միննույն հիմքով: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվողներն ու փաստաբանները նշել են, որ մեղադրանքին վերաբերող փաստաթղթերը և կալանավորման մասին միջնորդությունները հաճախ ձևական բնույթ են կրում, չունեն հիմնավորում և իրավական հիմք: Ըստ քննիչների, 72-ժամյա վերջնաժամկետը հնարավորություն չի տալիս նրանց հիմնավորելու մեղադրանքը՝ մասնավորապես նշելով, որ փորձագիտական եզրակացություն ստանալը կարող է ամիսներ տևել և ստացվել միայն մինչդատական կալանքի ժամանակահատվածում: Տե՛ս ստորև՝ Գործոն 9: Քննիչները նշել են, որ ձերբակալման համար կնախընտրելին ավելի երկար ժամանակ ունենալ կամ գոնե հնարավոր լինել ազատ արձակել ձերբակալվածին նախքան նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացնելը, սակայն գործող օրենքն արգելում է նրանց այդպես վարվել: Մյուս կողմից, հարցազրույցների մասնակիցներից ոմանք այն կարծիքին էին, որ քննիչները շատ արագ են արգելանքի տակ վերցնում կասկածյալին և որ նրանք նախքան ձերբակալելը պետք է սպասեն, մինչև համոզված կլինեն, որ ի վիճակի են հիմնավորել մեղադրանքը: Համաձայն ստացված տեղեկությունների, մեղադրանքը հիմնավորելիս քննիչները համարյա ամբողջովին հիմնվում են ինքնախոստովանական ցուցմունքների և վկայությունների վրա, և շատ մասնակիցների կարծիքով, այս երևույթը նպաստում է ձերբակալվածների նկատմամբ ճնշումներ և բռնություն գործադրելու համատարած պրակտիկային:

Հարցազրույցների մասնակիցները համաձայնել են, որ 72-ժամյա ժամկետը սովորաբար պահպանվում է գործնականում, չնայած դրա արդյունքում մեղադրանք առաջադրելու մասին որոշումները կարող են հապճեպ կայացվել: Այնուամենայնիվ, տեղեկացրել են, որ ոստիկանության շրջանում տարածված է կասկածյալին արգելանքի տակ վերցնելու պահին ժամանակը չգրանցելը: Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը *Միքայելյանի* գործում գտել է, որ անգամ ձերբակալման մասին պաշտոնական արձանագրության բացակայության պարագայում 3 ժամից ավելի անազատության մեջ պահվող կասկածյալը պետք է համարվի ձերբակալված և պետք է ազատ արձակվի կամ արգելանքի տակ վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում տարվի դատարան, եթե ոստիկանները չեն գրանցում կասկածյալին ազատությունից զրկելու ժամանակը, ապա անհնար է որոշել, թե երբ է 72-ժամյա ժամկետը լրացել:

Ինչպես այս զեկույցում քննարկված շատ այլ խախտումների պարագայում, այնպես էլ այս դեպքում հարցազրույցների մասնակիցները հայտնել են, որ Հայաստանի օրենքով առանց մեղադրանք առաջադրելու 72 ժամից ավելի անազատության մեջ պահված ձերբակալվածի համար իրավական պաշտպանության միջոցներ չկան՝ չհաշված Մարդու իրավունքների եվրոպական

կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի պահանջը: Նախկինում կալանավորված մի անձ նշել է, որ իր մտքով երբեք չի անցել բողոքարկել ձերբակալված մնալու ապօրինի ժամկետը: Համաձայն ստացված տեղեկությունների, դատավորները հորդորում են քննիչներին կամ խնդրում, որպեսզի նրանց ղեկավարները պատասխանատվության ենթարկեն նրանց ձերբակալման ժամկետը ապօրինի երկարացնելու համար, սակայն այս պրակտիկան չի թվում, որ տարածված բնույթ է կրում և ոչ էլ իրավական պաշտպանության միջոց է տրամադրում անազատության մեջ գտնվող անձանց: Եթե ձերբակալված անձն ի վերջո արդարացվում է, ապա նա տեսականորեն իրավունք ունի վնասի հատուցման հայց ներկայացնել, որը պատճառվել է սխալի կամ իրավախախտման հետևանքով, ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍՊԻԲ, հոդված 66, 67, սակայն պրակտիկայում հարցազրույցի մասնակիցները չեն լսել, որ նման հայցը երբևէ հաջողություն ունեցած լինի, որ հայցվորը ազատագրված ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռ կայացնելուց հետո փոխհատուցվի պատճառված վնասի դիմաց, որը հետագայում պարզվել է, որ հիմնված է ճնշման տակ վերցված ինքնախոստովանական ցուցմունքի վրա: *Տե՛ս Փաստերի շարադրանք, Արմեն Պողոսյանը և Անահիտ Բաղդասարյանն ընդ. Հայաստանի, թիվ 22999/08 (գտնվում է վարույթում):*

Ըստ փաստաբանների, պաշտպան ունենալու իրավունքն ընդհանուր առմամբ հարգվում է: Քննիչները բավարարում են հանրային պաշտպան ունենալու ձերբակալվածի պահանջը (*Տե՛ս վերևում՝ Գործոն 1*), և նրանք չեն հիշում մի դեպք, երբ ձերբակալված անձին մերժեն պաշտպան տրամադրել: Այնուամենայնիվ, փաստաբանները նշել են, որ մեղադրանքի հետ կապված չհիմնավորված փաստաթղթերի և կալանավորման մասին միջնորդությունների գերապայությունը շատ է դժվարացնում իրենց վստահորդների շահերի արդյունավետ պաշտպանության իրականացումը:

**Գործոն 9. Նախնական ազատությունից զրկման և կալանավորման նկատմամբ իրականացվող վերահսկողությունը**

*Դատական մարմինը որոշում է կայացնում, թե արդյոք մինչդատական վարույթում որպես խափանման միջոց պետք է կիրառվի կալանավորումը: Կալանավորման հանգամանքների մասին ամբողջական տվյալները հավաքվում և տրամադրվում են ձերբակալվածին, նրա պաշտպանին և իրավասու մարմիններին: Իրավասու մարմինը պատշաճ կերպով վերահսկում է քրեական արդարադատության համակարգի սուբյեկտների կողմից իրականացվող կալանավորման գործընթացը:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը չեզոք</i>
<p>Դատարանները որոշում են կայացնում, թե արդյոք պետք է արգելանքի տակ վերցնելու պահից 72 ժամվա ընթացքում մինչդատական վարույթում կիրառվի կալանքը որպես խափանման միջոց, և թե արդյոք 2 ամիս հետո կալանավորումը պետք է վերացվի կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվի մինչև առավելագույնը 1 տարի ժամկետով նախքան դատական քննության սկիզբը: Դատարաններն ավելի ու ավելի են սկսում անդրադառնալ ձերբակալման փաստական հանգամանքներին և օրինականությանը, ինչպես նաև պաշտպանել ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով սահմանված ձերբակալված անձանց իրավունքները: Այնուամենայնիվ, մինչդատական վարույթում կալանավորում կիրառվում է գործերի ճնշող մեծամասնության դեպքում, իսկ դրա վերաբերյալ կայացվող որոշումները լավ հիմնավորված չեն: Գրավը և ազատությունից զրկելու հետ չկապված մյուս խափանման միջոցներն առկա են, սակայն գործնականում հազվադեպ են կիրառվում:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Մինչև ձերբակալման համար նախատեսված 72-ժամյա ժամկետի լրանալը, քննիչը կամ դատախազը պարտավոր է մեղադրյալին ներկայացնել իրավասու դատարանի առջև, որը կալանավորում կիրառելու մասին որոշում է կայացնում: Մեղադրանք առաջադրելու որոշումը կայացվում է դատախազի կամ քննիչի որոշմամբ, որի դեպքում փաստական հանգամանքների համապատասխանության վերաբերյալ դատական վերանայման օրենսդրական պահանջ չկա, չնայած դատարաններից պահանջվում է քննել կալանավորելու մասին միջնորդությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները Վճռաբեկ դատարանի *Ասլան Ավետիսյանի* գործին համապատասխան: *Տե՛ս Ասլան Ավետիսյանի գործը*, N ԱՎԴ/0022/06/08, 2008թ. հոկտեմբերի 31: Բացի այդ, չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը նշել է, որ ձերբակալման ընթացա-

կարգի խախտումները (այդ թվում՝ ժամանակի նկատմամբ սահմանված պահանջները) հիմք չէ կալանավորման մասին միջնորդությունը մերժելու համար, դատարանը նշել է նաև, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դատական վերահսկողությունից դուրս լինել, իսկ ձերբակալման ընթացակարգի խախտումները պետք է իրավական հետևանքներ առաջացնեն: *Գազիկ Միքայելյանի գործը*, § 3: Մնում է տեսնել, թե ինչպե՞ս է *Միքայելյանի* գործը կիրառվում ստորադաս ատյանի դատարանների և քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից:

Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ պարտադիր չէ, որ նախքան մինչդատական կալանքի հարցի քննության համար դատարան ներկայանալը մեղադրյալն արգելանքի տակ վերցված կամ ձերբակալված լինի: Մեղադրյալը կարող է ինքնակամ ներկայանալ: *Տիգրան Վահրադյանի գործը*, § 26, թիվ ԼԴ/0197/06/08, (2008թ. դեկտեմբերի 26): Դատարանը նշել է, որ դատական նիստին մեղադրյալի ներկայությունը կալանավորման օրինականության հիմնական երաշխիքն է: *Նույն տեղը*: Եթե մեղադրյալը գտնվում է ազատության մեջ և կա ներկայանալու կարգադրություն, ապա վերջինս պետք է անազատության մեջ պահվելու պահից 72 ժամվա ընթացքում բերվի դատարան և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի իրավունք ունենա բողոքարկել իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը: *Նույն տեղը*, § 34, *հղում՝ ՄԻԵԴ, Լադենտն ընդ. Լեհաստանի, գանգատ թիվ 11036/03* (2008թ. մարտի 18), *Գարաբանն ընդ. Ռուսաստանի, գանգատ թիվ 38411/02* (2007թ. հունիսի 7), *ՄաքՔեյն ընդ. Միացյալ Թագավորության, գանգատ թիվ 543/03* (2006թ. մարտի 10):

Կալանավորումը որպես խափանման միջոց դատարանի կողմից կարող է կիրառվել քննիչի կամ դատախազի միջնորդության հիման վրա և այն ժամանակ, երբ անձը կասկածվում է մի հանցագործության կատարման մեջ, որի համար նախատեսված ազատագրկման ժամկետը 1 տարուց ավելի է, և երբ դատախազը, քննիչները կամ հետաքննության մարմինը կասկածներ ունեն, որ մեղադրյալը կարող է թաքնվել, խոչընդոտել գործի քննությանը կամ կատարել նոր հանցագործություն: *Նույն տեղը*, հոդվածներ 134, 135: Կալանավորում կիրառելու դեպքում դատարանը, պաշտպանի, քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, կարող է փոխարինել այն գրավով՝ որպես այլընտրանք: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 134(4), 136: Մեղադրանքի և կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու հարցը քննվում է դոնփակ դատական նիստում: Դատական նիստի արձանագրությունը ևս հրապարակային չէ: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 20, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 280, 283 (1), 288(3): Դատարանը կասկածյալին կամ մեղադրյալին է հայտարարում իր որոշումը և նրան է հանձնում որոշման պատճենը: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 136(3):

Մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը (ներառյալ գրավի ժամկետը, քանի որ գրավը ընդամենը փոխարինում է որպես խափանման միջոց ընտրված կալանքին) չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ երբ այն կարող է երկարացվել՝ յուրաքանչյուր դեպքում չգերազանցելով 2 ամիսը: Դատարանը կարող է երկարացնել մինչև 6 ամիս կամ 12 ամիս ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում, որը հաշվվում է անձին արգելանքի վերցնելու պահից կամ, եթե մեղադրյալն ինքնակամ է ներկայացել և արգելանքի տակ չի վերցվել, ապա կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը կայացնելու պահից: *Նույն տեղը*, հոդված 138: Քննիչը կամ դատախազը ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու 2-ամսյա ժամկետը լրանալուց 10 օր առաջ միջնորդություն է ներկայացնում, իսկ դատարանը համապատասխան որոշում է կայացնում այդ ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ: *Նույն տեղը*, հոդված 139: Չնայած այն բանին, որ վերջերս կայացված նախադեպերով պահանջվում է, որ դատախազները հիմնավորեն կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին իրենց միջնորդությունները, գործնականում դա չի արվում և ոչ էլ ամրագրված է օրենքով: *Տե՛ս Ասլան Ավետիսյանի* գործը: Եթե կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է և այն չի երկարացվել կամ եթե լրացել է անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը, ապա կալանավայրի վարչակազմը մեղադրյալին պետք է ազատ արձակի: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 142(3):

Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ կալանքը որպես խափանման միջոց ապահովում է մեղադրյալի ներկայությունը և հետևաբար, կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշման մեջ չի կարող քննարկվել մեղադրյալի մեղավորության հարցը կամ հիմնված լինել մի եզրակացության վրա, որ նրա նկատմամբ առաջադրված մեղադրանքը հիմնավորված է: *Տիգրան Վահրադյանի գործը*, §§ 41, 44, 45: Եթե կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հիմնված է այն եզրակացության վրա, որ մեղադրյալը մեղավոր է, ապա դրանով խախտվում է անմեղության կանխավարկածը: *Նույն տեղը*, § 41: Օրենքը գրավի կիրառումը թույլատրում է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար և կարող է մերժվել, եթե հայտնի չէ մեղադրյալի անձը, նա չունի մշտական բնակության վայր կամ եթե մեղադրյալը փորձել է թաքնվել քրեական հետապնդումից: Գրավի չափը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափից ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս կամ նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափից՝ միջին ծանրության հանցանք կատարելու մեջ մեղադրվելիս:<sup>10</sup> Երբ գրավն արդեն մուծված է,

<sup>10</sup> Գրավի չափը և այլ իրավական ակտեր հաշվելու նպատակով նվազագույն աշխատավարձի չափը 1000 ՀՀ դրամ է (2.60 ԱՄՆ դոլար): Հետևաբար, ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար գրավի չափը 200,000 ՀՀ դրամ է (523.90 ԱՄՆ դոլար), իսկ միջին ծանրության հանցագործությունների համար՝ 500,000 ՀՀ դրամ (1309.76): *Տե՛ս* ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔ, հոդված 3 (*ուժի մեջ է* մտել 2004թ. հունվարի 1-ին):

դատարանը հանձնարարում է մեղադրյալին ազատել կալանքից: Գրավը կարող է անվավեր ճանաչվել և մեղադրյալը կարող է նորից կալանքի տակ վերցվել, եթե վերջինս խախտում է դատարանի կողմից նրա վրա դրված սահմանափակումները: *Նույն տեղը*, հոդված 143: ՄԻԵԴ-ը և Հայաստանի նախադեպային իրավունքը սահմանում են, որ հանցագործության ծանրությունն առանձին վերցված բավարար հիմք չէ գրավի նշանակումը չթույլատրելու համար: Հայաստանի դատավորները, քննիչները և դատախազները տեղյակ են այս սկզբունքի մասին, սակայն դատարանները հետևողականորեն չեն կիրառել այն պրակտիկայում, և հարցազրույցների մասնակիցներից շատերը նշել են, որ համաձայն չեն այս կանոնի հետ: *Տե՛ս*, օրինակ, ՄԻԵԴ, *Կարալլերոն ընդ. Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 32819/96, 2000թ. փետրվարի 8, *S.B.C.-ն ընդ. Միացյալ Թագավորության*, գանգատ թիվ 39360/98, 2001թ. հունվարի 19, ՀՀ Վճռաբեկ դատարան, *Տարոն Հակոբյանի գործը*, N ՎԲ-115/07 (2007թ. հուլիսի 13) և *Ասլան Ավետիսյանի գործը*:

Մինչդատական վարույթում կալանավորման փոխարեն վարույթ իրականացնող մարմինը կիրառում է նաև այլ խափանման միջոցներ: Այդ խափանման միջոցներն են՝ մեղադրյալի կողմից տրված կոնկրետ տարածքից չհեռանալու մասին ստորագրություն, մեղադրյալի ազատ արձակումը «վստահություն վայելող անձի» անձնական երաշխավորությամբ, մեղադրյալի ազատ արձակումը «վստահություն վայելող իրավաբանական անձի» երաշխավորությամբ, անչափահասի ազատ արձակումը խնամակալի հսկողությանը հանձնելով կամ զինձառայողի ազատ արձակումը հրամանատարության հսկողությանը հանձնելով: ԶԲ. ԴՍՍ. ՕԲԵՆՍԳԻԲԶ, հոդվածներ 134(2), 144-149: Կալանավորումը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն այնպիսի հանցագործության համար, որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը 1 տարուց ավելի է և երբ դատարանը որոշում է, որ մեղադրյալը կարող է թաքնվել, խոչընդոտել քննությանը կամ կատարել նոր հանցագործություն: *Նույն տեղը*, հոդված 135: Դատարանը պետք է հաշվի առնի վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, ինչպես նաև կասկածյալի/մեղադրյալի անձը: *Նույն տեղը*: Խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված: *Նույն տեղը*, հոդված 136: Այն դեպքում, երբ մեղադրյալն ազատ է արձակվում կալանքի տակ պահելու ժամկետը լրանալու հիմքով կամ եթե դատարանն ընտրում է մեկ այլ խափանման միջոց, ապա նա չի կարող նորից կալանավորվել նույն մեղադրանքով: *Նույն տեղը*, հոդված 142(4):

Պրակտիկայում կալանքը որպես խափանման միջոց շատ հաճախ է կիրառվում ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար, իսկ մյուս խափանման միջոցները հազվադեպ են հաշվի առնվում: Հարցազրույցների մասնակիցները կիսում էին նույն կարծիքը, որ քննիչները գրեթե միշտ կալանավորելու մասին միջնորդություն են ներկայացնում, իսկ դատախազները գրեթե միշտ միջնորդում են երկարացնել կալանքի տակ պահելու

Ժամկետը: Քննիչները և դատախազները ակնարկել են, որ կցանկանային ավելի շատ տարբերակներ ունենալ, սակայն եթե չմիջնորդեն, որպեսզի կալանք կիրառվի, ապա վախենում են, որ իրենց կմեղադրեն կոռուպցիայի մեջ կամ որ մեղմ են վերաբերվում հանցագործությանը: Փաստաբանները և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները բողոքել են, որ կալանավորելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունները հազվադեպ են պատճառաբանված լինում և ըստ էության նույնությամբ արտագրվում են դատարանի որոշման մեջ: Հազվադեպ է լինում, որ դատավորները չհամաձայնվեն կալանավորելու մասին միջնորդության հետ, իսկ գրավի վերաբերյալ միջնորդություն հազվադեպ է ներկայացվում կամ բավարարվում՝ որպես մինչդատական վարույթում կալանավորմանը փոխարինող միջոց:

**ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՐԱՎԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, 2007-2009ԹԹ.**

Կարգ	2007թ.	2008թ.	2009թ.
Նոր հարուցված քրեական գործերի թիվը (մեղադրյալների թիվը) <sup>11</sup>	1,807 (2,327)	2,145 (2,790)	2,604 (3,375)
Դատարանների կողմից քննված կալանավորման մասին միջնորդությունները <sup>12</sup>	2,849	2,915	3,572
Բավարարված միջնորդությունները կալանավորման մասին (տոկոսային հարաբերությամբ)	2,780 (97.6%)	2,726 (93.5%)	3,362 (94.1%)
Դատարանի կողմից քննված գրավի միջնորդությունները (գործերի թիվը տոկոսային հարաբերությամբ, որտեղ կալանավորումը գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել)	81 (2.9%)	443 (16.2%)	484 (14.4%)
Բավարարված միջնորդությունները գրավի մասին (տոկոսային հարաբերությամբ)	62 (76.5%)	151 (34.1%)	186 (38.4%)

*Աղբյուրը՝* ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչություն, ՀՀ Դատական դեպարտամենտ:

<sup>11</sup> Ներկայացված են միայն ոստիկանությունում հարուցված քրեական գործերը՝ առանց հարկային և այլ մասնագիտացված գործերի:

<sup>12</sup> Մեկ գործով կարող է ներկայացվել կալանավորման մասին մեկից ավելի միջնորդություն: Վիճակագրական տվյալներ չկան այն գործերի թվի վերաբերյալ, որոնց ժամանակ մինչդատական վարույթում կալանավորման մասին միջնորդություն է ներկայացվել:

2010թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ՀՊԳ-ի վարած գործերում Երևան քաղաքում չափահասների նկատմամբ կիրառված ամենատարածված խափանման միջոցը կալանավորումն է եղել: Այն ավելի քիչ կիրառվել է անչափահասների նկատմամբ և մարզերում:<sup>13</sup>

**ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ 2010Թ.  
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՊԳ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ**

	<b>ք. Երևան Չափահաս- ների նկատմամբ</b>	<b>ք. Երևան Անչափահաս- ների նկատմամբ</b>	<b>Մարզեր Չափահաս- ների նկատմամբ</b>	<b>Մարզեր Անչափա- հասների նկատմամբ</b>
<b>Կիրառվել է կալանքը որպես խափանման միջոց (Գրավ է կիրառվել)</b>	50 (7)	1	74 (9)	8
<b>Կիրառվել է այլընտրանքային միջոցներ</b>	21	3	104	47

*Աղբյուրը՝* ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակ:

Հարցազրույցների մասնակիցները կարծիք են հայտնել, որ գրավի վերաբերյալ հազվադեպ են միջնորդություններ ներկայացվում, քանի որ գրավի նվազագույն չափերը չափազանց բարձր են և շատ մեղադրյալներ չեն կարող այն վճարել: Մասնակիցներից ոմանք ընդգծել են, որ մինչդաստական վարույթում պետք է կալանավորում կիրառվի նախքան գրավի հարցը քննելը, սակայն կալանավորում կիրառելով՝ դատարանը գալիս է այն եզրակացության, որ այն անհրաժեշտ է և գրավի նշանակումը անտրամաբանական է դառնում: Համաձայն ստացված տեղեկությունների, վարույթ իրականացնող մարմինը հազվադեպ է հաշվի առնում մյուս խափանման միջոցները, քանի որ վախենում է, որ իրեն կաշառակերության մեջ կկասկածեն: Հարցազրույցների մասնակիցներից ոմանք նշել են, որ կաշառակերությունը նվազել է ներկայիս վարչակազմի օրոք, քանի որ Սերժ Սարգսյանը, ով 2008թ.-ին է դարձել Նախագահ, մասսայաբար դեմ է արտահայտվել կաշառակերությանը: Այնուամենայնիվ, նշվել է նաև, որ դատավորները և դատախազներն այժմ չափազանց վախենում են կաշառակերության մեջ մեղադրվելուց, հետևաբար քիչ հավանական է, որ

<sup>13</sup> Տեղեկություններ չեն տրամադրվել հանցագործությունների տեսակների մասին, որում մեղադրյալները մեղադրվել են:

հոգուտ մեղադրյալների գործողություններ կձեռնարկեն: Ուստի, ինչպես երևում է վերը նշված աղյուսակից, 2007թ.-ից ի վեր մինչդասական վարույթում կիրառված կալանավորումների թիվը զգալիորեն չի տարբերվել: Գրավ կիրառված գործերի տոկոսը իրականում 2007-ից 2008թթ. զգալիորեն նվազել է, սակայն աճել է բացարձակ թվերով: Ոմանք պնդել են, որ գրավի և խափանման միջոցների ցածր ցուցանիշը Խորհրդային Ժամանակաշրջանի հասած ժառանգություն է, երբ գրավ կոչվածը չկար, և շատ գործող դատավորներ աշխատում էին որպես դատախազ:

Շատ մասնակիցներ ցավով նշել են, որ դատավորները խստապահանջ չեն կալանավորման մասին միջնորդությունները քննելու հարցում՝ բերելով բազմաթիվ գործերի օրինակներ, որտեղ դատավորները ենթադրաբար են կալանավորում նշանակել՝ հաշվի չառնելով, որ քննիչը միջնորդության մեջ որևէ հիմք չի մատնանշել: Փաստաբանները նաև վկայակոչել են գործեր, որոնցում դատավորը կալանք կիրառելու վերաբերյալ որոշում է կայացրել այնպիսի հիմքերով, որոնք նախատեսված չեն Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով: Փաստաբանները նշել են, որ երկամսյա ժամկետը լրանալուց հետո կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ներկայացված միջնորդությունների պատճառը հաճախ ապացույցների վերաբերյալ հասարակ փորձագիտական եզրակացություն ստանալու հետ կապված ձգձգումներն են: Քննիչները համաձայնել են, որ սա խնդիր է՝ ասելով, որ շատ պարզ եզրակացություն ստանալու համար կարող են ամիսներ պահանջվել: Փաստաբաններից ոմանք հայտնել են, որ չնայած նրան, որ մեղադրյալն իրավունք ունի ներկա գտնվել դատական նիստերին, գործնականում պատահում է, որ կալանավորման հարցը քննվում է առանց մեղադրյալի ներկայության: Հարցազրույցների մասնակիցներից մի քանիսը որպես պատճառ մեջ էին բերում խիստ վերջնաժամկետները և պնդում, որ նման բան տեղի է ունենում միայն, երբ դժվարություններ կան մեղադրյալին կալանավորվածներին պահելու վայրից տեղափոխելու հետ կապված, օրինակ՝ հանգստյան օրերի ընթացքում:

Հարցազրույցների մասնակիցներից շատերը բողոքել են, որ կալանավորման վերաբերյալ դռնփակ դատական նիստերի անցկացումը թույլ չեն տալիս հիմնավորել նման հայտարարությունները, իսկ վատ պատճառաբանված որոշումները բավարար տեղեկություններ չեն տալիս ենթադրվող իրավախախտումները հիմնավորելու կամ բողոք ներկայացնելու համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դատավարությունների մոնիթորինգի զեկույցում նույնպես նշվել է մինչդասական վարույթում կալանավորելու մասին որոշումները դռնփակ նիստում անցկացնելու հետ կապված թափանցիկության պակասի մասին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԶԵԿՈՒՅՑ 21:

**Գործոն 10. Կալանավորումը դատական քննության գործընթացում**

*Մինչդատական վարույթում կալանավորում կիրառվում է միայն, երբ դա անհրաժեշտ է արդարադատության շահերի համար, և դատաքննությունը ձեռքարկված անձի ներկայությունը ապահովելու համար այլ տարբերակները հաշվի առնելուց հետո: Դատաքննության փուլում կալանքի տակ պահվող անձանց գործը քննվում է ողջամիտ ժամկետում կամ էլ նրանք ազատ են արձակվում դատաքննության ընթացքում: Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատական որոշումները պատճառաբանվում են:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ բացասական</u>
<p>Մինչդատական վարույթում կալանավորված անձինք գրեթե բոլոր գործերով շարունակում են կալանքի տակ մնալ գործի դատական քննության փուլում: Դատական քննությունը պաշտոնապես սկսվելուց հետո մեղադրյալները կարող են անորոշ ժամկետով պահվել կալանքի տակ:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Ինչպես վերը նշվեց Գործոն 9-ում, Հայաստանում գործի մինչդատական վարույթը սկսվում է քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտը, երբ սկսվում է գործի դատաքննությունը կամ քրեական վարույթ իրականացնող մարմինը որոշում է կայացնում գործը կարճելու մասին: Ինչպես վերը նշվեց, կալանքի տակ պահելու հարցը քննվում է 2 ամիսը մեկ և կարող է երկարացվել մինչև 1 տարի ժամկետով նախքան դատաքննության սկիզբը (6 ամիս ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար): Եթե մեղադրյալը կալանքի տակ չի գտնվում կամ գրավով ազատված չէ, ապա նախաքննության փուլի ժամկետը սահմանափակվում է միայն տվյալ հանցագործության համար նախատեսված համապատասխան վաղեմության ժամկետով: Ինչպես հայտնի է, եթե անձը գտնվում է կալանքի տակ, սակայն նախաքննությունը դեռ չի ավարտվել, ապա դատարանները սկսում են դատաքննությունը և շարունակում այն կամ շատ դանդաղ ընթացք են տալիս դրան, մինչդեռ նախաքննության մարմինը շարունակում է ապացույցներ հավաքել՝ մեղադրյալին ազատ արձակելու փոխարեն:

Դատաքննության փուլում կալանավորման համար մի քանի պահանջ գոյություն ունի: Ժամանակային սահմանափակում չկա դատաքննության տևողության կամ դատաքննության փուլում կալանքի տակ պահելու ժամկետի

նկատմամբ: Դատաքննությունը սկսելու պահից մեղադրյալը կարող է միջնորդել դատարանին փոխել իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ վիճարկելով ինչպես դրա օրինականությունը, այնպես էլ անհրաժեշտությունը: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 102, 312: Պրակտիկայում այն մեղադրյալները, ում նկատմամբ նախաքննության փուլում կալանք է ընտրվել որպես խափանման միջոց, թվում է, թե միշտ շարունակում են կալանքի տակ մնալ դատաքննության ընթացքում: Հարցազրույցների մասնակիցները չեն կարողացել մտաբերել մի դեպք, երբ դա տեղի չի ունեցել: Կալանքի տակ պահելու հարցը չի քննվում դատաքննության ժամանակ և չնայած այն բանին, որ պաշտպանները կարող են բողոք բերել տևական կալանավորման դեմ, դատարանները, թվում է, թե անտեսում են այդ բողոքները: Դատական նիստերն անցկացվում են փուլ առ փուլ և ըստ հարցազրույցների մասնակիցներից շատերի ավելի երկար են տևում, քան անհրաժեշտ է: Մեղադրյալներին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում է ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ 1 օրը հաշվելով 1 օրվա դիմաց, որն էլ որոշ առումով բերում է բանտերում դատապարտյալների գերբնակեցվածության: *Տե՛ս* ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 69(3): Նախքան փոխվելը, Քրեական օրենսգրքով կալանքի տակ պահելու ժամկետը հաշվակցվում էր ազատագրկման ձևով նշանակված պատժին՝ 3 օրը հաշվելով 1 օրվա դիմաց: Որոշ մասնակիցներ գտնում էին, որ կրկին Խորհրդային ժամանակներից մնացած ավանդույթ է դատական վարույթում կալանավորված անձանց մեծ թիվ ունենալու պատճառը՝ ասելով, որ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց կալանավորելը դատավորների և դատախազների գործելաոճի մի մասն է:

### III. Մինչդատական վարույթում կալանավորումը բողոքարկելու մեխանիզմները

#### Գործոն 11. Իրավական պաշտպանության արտակարգ միջոցները

*Նախքան հանցագործության կատարման համար դատապարտվելը ազատությունից զրկված անձը, այդ թվում նաև՝ դատարանի որոշմամբ կալանավորված անձը իր՝ ազատությունից զրկված լինելու օրինականությունը իրավասու դատարանի առջև անհապաղ վիճարկելու և ազատ արձակվելու իրավունք ունի:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Իրավական պաշտպանության արտակարգ միջոցներ նախատեսված չեն ՀՀ օրենքով, սակայն հարցազրույցների մասնակիցների կարծիքով իրավական պաշտպանության սովորական միջոցները բավարար են կալանավորման օրինականության մասին հարցը լուծելու համար: Հարկ է նշել, որ չկան իրավական պաշտպանության միջոցներ ապօրինի կալանավորված անձանց համար՝ վերականգնելու իրենց իրավունքները:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Նախքան հանցագործության համար դատապարտվելը, անօրինական ազատազրկումը բողոքարկելու համար Հայաստանի օրենքով իրավական պաշտպանության արտակարգ միջոցներ նախատեսված չեն: Այնուամենայնիվ, հարցազրույցների մասնակիցներն ընդհանուր առմամբ համաձայնել են, որ կան համապատասխան սովորական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս մինչդատական վարույթում ազատությունից զրկված անձանց բողոքարկել կալանավորման օրինականությանը վերաբերող հարցերը, այդ թվում՝ ձերբակալման 72 ժամը, կալանքի տակ պահելու երկամսյա ժամկետի վերանայումը և ազատազրկման հետ չկապված խափանման միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելու իրավունքը: Տե՛ս վերևում՝ Գործոններ 7-10: Մեղադրյալը կարող է դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոք ներկայացնել դատարան, որը պետք է քննվի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻԲ, հոդված 290: Սակայն, բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին՝ վերացնելու այն գործողությունները կամ որոշումները, որոնք խախտել են մեղադրյալի իրավունքները: Որևէ վնասի հատուցում կամ

ակտիվ պաշտպանության միջոց երաշխավորված չէ: *Նույն տեղը*: Չնայած Վճռաբեկ դատարանը դրա վերաբերյալ որոշում է կայացրել. եթե կալանավորված անձը պաշտոնապես ձերբակալված չէ օրենքով սահմանված 3 ժամվա ընթացքում, նա, այնուամենայնիվ, համարվում է ձերբակալված և կարող է կալանքի տակ գտնվել առանց դատարանի որոշման միայն 72 ժամ: Ձերբակալման ընթացակարգի խախտումը հիմք չի հանդիսանում կալանավորման միջնորդության մերժման համար, սակայն կարող է բերել ընթացակարգը խախտող անձի նկատմամբ իրավական հետևանքների կիրառմանը: Գագիկ Միքայելյանի գործը §§ 2, 3.

Մասնակիցներն այն միասնական կարծիքին էին, որ մեղադրյալի համար իրավական պաշտպանության միջոցներ չկան այն դեպքում, երբ դատավարական պահանջները չեն պահպանվում: Դատավորները կարող են նախազգուշացնել կարգը խախտած պաշտոնյային կամ պահանջել, որ նրա ղեկավարը պատասխանատվության ենթարկի նրան, սակայն կալանավորված անձն իր իրավունքները պաշտպանելու համար ճանապարհ չունի, եթե չարդարացվի և կարողանա ցույց տալ այն փաստացի վնասները (գույքային վնասը, կորցրած աշխատավարձերը, ներառյալ վճարված դատական ծախսերը, փաստաբանին վճարված գումարները և այլն), որոնք պատճառվել են սխալի կամ իրավախախտման հետևանքով: Նման պարագայում նա կարող է քաղաքացիական հայց ներկայացնել: *Տե՛ս* ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 66, 67: Համաձայն ստացված տեղեկությունների, դատարանները հակված են դատապարտել ենթադրյալ անմեղ մեղադրյալներին և նրանց նկատմամբ նշանակել ազատագրկման հետ չկապված պատիժներ, որպեսզի խուսափեն նման հայցի հնարավորությունից:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է պատճառված վնասի հատուցման իրավունք այն դեպքում, երբ անձն ապօրինի ազատությունից զրկվել է կամ ապօրինաբար ենթարկվել է խուզարկության: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն, յուրաքանչյուր անձ, ով ի խախտումն 5-րդ հոդվածով նախատեսված իրավունքների ձերբակալվել կամ կալանավորվել է, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման: *Տե՛ս* ՍՍՀՄ. հոդված 16, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ, հոդված 5: Մասնակիցներից մեկի տրամադրած տեղեկության համաձայն, Վերաքննիչ դատարանը ետ է ուղարկել գործը՝ կարգադրելով հանել ապօրինի խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույցները, սակայն մյուս մասնակիցները նման գործի մասին չէին լսել, իսկ ըստ ԺՀՄԻԳ-ի զեկույցի, դատավորները մեծամասամբ անտեսում են ապօրինի ձեռք բերված ապացույցները հանելու մասին միջնորդությունները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՁԵԿՈՒՅՑ 59:

Չնայած այն բանին, որ հարցազրույցների մասնակիցները ընդհանուր առմամբ համաձայնել են, որ բավարար սովորական միջոցներ կան, սակայն շատ մաս-

նակիցներ վկայակոչել են իրավիճակներ, երբ մարդիկ օրինական ձեռք բերված առաջ ուստիկանության բաժանմունքում անազատության մեջ են պահվել առանց հաղորդակցվելու հնարավորության և առանց դատավարական կարգավիճակի: Որևէ իրավական պաշտպանության միջոց չկա ստիպելու նախաքննության կամ հետաքննության մարմնին ազատ արձակել անազատության մեջ հայտնված անձին: Ինչևէ, մասնակիցները կարծում էին, որ անձին անազատության մեջ երկար ժամանակ պահելը համատարած բնույթ չի կրում և անհրաժեշտ չէին համարում զարգացնել նման իրավական պաշտպանության միջոցները:

**Գործոն 12. Կալանավորում կիրառելու մասին որոշման բողոքարկումը**

*Կալանավորված անձինք ունեն կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Կալանավորված անձինք ունեն կալանավորումը բողոքարկելու իրավունք: Ե՛վ մեղադրողը, և՛ պաշտպանը կարող են բողոքարկել խափանման միջոց կիրառելու մասին որոշումները: Գործնականում տարածված է այն կարծիքը, որ դատարանները բողոքները քննելիս առավելությունը տալիս են մեղադրող կողմին:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Խափանման միջոց կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատախազին, իսկ դատախազի որոշումը՝ համապատասխան վերադաս դատախազին: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 63(17), 150: Պաշտպանության կամ մեղադրող կողմը խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկել վերաքննիչ դատարան: *Նույն տեղը*, հոդված 150:

Հարցազրույցների մասնակիցները հայտնել են, որ դատախազները միշտ բողոքարկում են մինչդատական վարույթում կալանավորումը որպես խափանման միջոց չկիրառելու կամ այն գրավով փոխարինելու մասին որոշումները, մինչդեռ ավելի քիչ են դեպքերը, երբ պաշտպանության կողմն է բողոքարկում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը ընդունվում է : Ըստ հանրային պաշտպանների, նրանք միշտ բողոքարկում են գրավի մերժումը, քանի որ որոշումները հազվադեպ են պատճառաբանված լինում, սակայն նրանց բողոքները գրեթե երբեք չեն բավարարվում: Որոշ փաստաբաններ նշել են, որ ստորադաս ատյանների կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին վատ պատճառաբանված որոշումները

դժվարացնում են բողոքարկման ժամանակ իրենց վստահորդների շահերը ինչպես հարկն է պաշտպանել: Մասնակիցներից մեկը նշել է, որ վերաքննիչ դատարանն ըստ էության գործում է որպես դատախազության օգնական՝ միշտ բեկանելով գրավ նշանակելու վերաբերյալ կայացրած ստորադաս դատարանի որոշումները: Այնուամենայնիվ, չնայած որ վիճակագրական տվյալներ չկան, վերաքննիչ դատարանի մի դատավոր նշել է, որ դատախազության կողմից ներկայացված բողոքների 65%-ն այդ դատարանում մերժվում են: ՀՊԳ-ի կողմից տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն, 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում Երևանում հանրային պաշտպանները բողոքարկել են 18 մեղադրյալի (այդ թվում՝ 4 անչափահասի) նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 15 որոշում: Այդ բողոքներից երեքն են բավարարվել: Մարզերում հանրային պաշտպանները բողոքարկել են 26 մեղադրյալի (այդ թվում՝ 3 անչափահասի) նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 22 որոշում, որոնցից 3 բավարարվել են:

Չնայած նրան, որ մեղադրյալները պետք է անհապաղ ազատ արձակվեն այն դեպքում, երբ մինչդատական վարույթում կալանավորելու մասին միջնորդությունը մերժվում է կամ փոխարինվում է գրավով, հարցազրույցների մասնակիցներից մի քանիսը նշել են, որ մեղադրյալները համարյա միշտ ապօրինի ձևով կալանքի տակ են պահվում այն ընթացքում, երբ մեղադրանքի կողմը բողոք է ներկայացնում: ՄԻԵԴ-ի կողմից վերջերս լուծված գործում այս խնդիրը վեր է հանվում: *Տե՛ս Ասատրյանն ընդ. Հայաստանի*, թիվ 24173/06 (2010թ. փետրվարի 9): ՄԻԵԴ-ը հայտնաբերել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի (1) կետի (գ) ենթակետի խախտում, քանի որ քրեական գործով մեղադրյալն անհապաղ չէր ազատ արձակվել այն բանից հետո, երբ առաջին ատյանի դատարանը մերժել էր նրան կալանավորելու մասին միջնորդությունը: Փոխարենը, մեղադրյալը կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց հետո մնացել էր անազատության մեջ, որի ընթացքում վերաքննիչ դատարանը որոշում էր կայացրել և բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումը՝ երկարացնելով կալանքի տակ պահելու ժամկետը: Այդուհանդերձ, հարցազրույցների մյուս մասնակիցները չէին կարծում, որ անօրինական կալանավորումը դատախազի բողոք բերելու ընթացքում համատարած խնդիր է, քանի որ դատախազի կողմից բողոքներ քիչ են ներկայացվում, երբ դատարանը որոշում է կայացնում հոգուտ պաշտպանության և քանի որ Քրեական օրենսգրքի 348 և 353 հոդվածները նման դեպքերում քրեական պատասխանատվություն են նախատեսում: Վճռաբեկ դատարանը, ինչպես հայտնի է, փորձում է իր դատական պրակտիկայի միջոցով խրախուսել ստորադաս դատարաններին ավելի հաճախ գրավ կիրառել: *Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարան, Տարոն Հակոբյանի և Ասլան Ավետիսյանի* գործերը, *վերևում*՝ Գործոն 9: Մեղադրանքի կողմի ներկայացրած բողոքների հաջողության գրավականը, ըստ մասնակիցների, այս անգամ ևս հոգուտ կալանավորմանը

ձևավորված Խորհրդային ավանդույթների և դեռ գոյություն ունեցող մտածելակերպի պահպանումն է:

Մարզերում հարցազրույցների մասնակիցները ինչպես մեղադրող կողմի, այնպես էլ պաշտպանության կողմից ևս նշել են, որ ռեսուրսների պակասը կարող է դժվարացնել բողոքներին հետամուտ լինելու գործընթացը, քանի որ վերաքննիչ դատարանները գտնվում են Երևանում: Քննիչը, դատախազը կամ հանրային պաշտպանը ստիպված են 1 օր ճամփորդել դատական նիստին ներկա լինելու համար: Խնդիրն այն է, որ համապատասխան հաստատություններում բավարար թվով աշխատողներ չկան և տրանսպորտային միջոցի համար հատկացված գումարները բավարար չեն: Կալանավորվածներին պահելու վայրը պատասխանատու է մեղադրյալին դատական նիստի տեղափոխելու համար, որի հետ կապված ևս խնդիրներ են լինում նույն պատճառներով:

**Գործոն 13. Կալանքի տակ պահելու ժամկետը պարբերաբար վերանայելու երաշխիքը**

*Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումները պարբերաբար վերանայվում են դատական մարմնի կողմից:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Կալանքի տակ պահելու ժամկետը վերանայելը պարտադիր է օրենքով միայն մինչև դատաքննության սկսվելը: Գործնականում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուց հետո, կալանավորման վերանայումը կրում է ձևական բնույթ և մինչդատական կալանքի ժամկետը գրեթե միշտ երկարացվում է միջնորդությամբ: Դատաքննությունը սկսվելուց հետո, մեղադրյալը իրավունք ունի բողոքարկել իր կալանավորումը, սակայն ինքնաբերական վերանայում տեղի չի ունենում:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Կալանքի տակ պահելու ժամկետի պարբերաբար վերանայման երաշխիքը գործում է միայն մինչդատական փուլում: Այդ փուլում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող տևել 2 ամսից ավելի: Եթե քննիչը կամ դատախազը անհրաժեշտ է համարում երկարացնել կալանքի տակ պահելու ժամկետը, ապա վերջինս պետք է նման միջնորդություն ներկայացնի ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու 2-ամսյա ժամկետը լրանալուց 10 օր առաջ, իսկ դատարանը պետք է որոշում կայացնի ոչ ուշ, քան այդ ժամկետը լրանալուց 5 օր առաջ: *ՔՀ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՊԻՐ, հոդված, հոդված 138, 139(1):* Եթե պաշտպանին ժամանակ

է հարկավոր գործի նյութերին ծանոթանալու համար, դատախազը կամ քննիչը՝ դատախազի համաձայնությամբ, կարող են նման միջնորդություն ներկայացնել դատարանին կալանքի ժամկետը լրանալուց միայն 5 օր առաջ: *Նույն տեղը*: Եթե կալանքի տակ պահելու ժամկետը լրացել է և այն չի երկարացվել կամ եթե լրացել է կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետը, ապա կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պետք է մեխանիկորեն ազատի մեղադրյալին: *Նույն տեղը*, հոդված 142(4): Ըստ ստացված տեղեկությունների, դատարանները հաճախ մերժում են մեղադրյալի միջնորդությամբ վերանայել մինչդատական կալանքը՝ նախընտրելով սպասել մինչև ավարտվի կալանքի տակ պահելու երկամսյա ժամկետը, և ինքնաբերական վերանայում պահանջվի:

Գործնականում կալանավորելու մասին որոշում կայացնելուց հետո կալանքի տակ պահելու ժամկետը գրեթե բոլոր գործերով երկարացվում է քննիչի կամ դատախազի միջնորդությամբ: Ինչպես դատախազի ներկայացրած միջնորդության, այնպես էլ դատավորի կայացրած որոշման մեջ քիչ են վերլուծվում կամ հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքերը: Ըստ ստացված տեղեկությունների, չնայած այն բանին, որ մեղադրյալն իրավունք ունի ներկա լինելու համաձայն Քրեական դատավարական օրենսգրքի 136(3) հոդվածի, զարմանալի չէ, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումը կայացվի նրա բացակայությամբ: Հարցազրույց տվողներից ոմանք մեջ են բերել վերջնաժամկետները որպես հիմք և պնդել, որ սա պատահում է միայն այն ժամանակ, երբ դժվարություններ կան մեղադրյալին կալանավայրից տեղափոխելու հետ կապված, օրինակ՝ շաբաթվա հանգստյան օրերի ընթացքում: Քննիչները և դատախազները հայտնել են նաև, որ փորձագետի եզրակացությունը ձեռք բերելու հետ կապված անտեղի ձգձգումները հաճախ դառնում են կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն ներկայացնելու պատճառ:

Դատաքննության սկսելու պահից կալանքի տակ պահելու ժամկետի վերանայման երաշխիք չկա: Դատավարության ժամանակ մեղադրյալը կարող է բողոքարկել իր դեմ ընտրված խափանման միջոցը՝ վիճարկելով ինչպես դրա օրինականության, այնպես էլ անհրաժեշտության հարցը: *Տե՛ս ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ*, հոդվածներ 103, 287: Գործնականում եթե կալանքն ընտրվել է որպես խափանման միջոց մինչդատական փուլում, ապա այն այդպես էլ շարունակվում է դատաքննության ժամանակ: Օրենքով մինչդատական փուլը պետք է ավարտված լինի մինչև դատաքննության սկսվելը: Դատարանների համար ընդունված պրակտիկա է սկսել դատաքննությունը, երբ լրանում է մինչդատական կալանքի առավելագույն ժամկետը՝ մեղադրյալին ազատ արձակելուց խուսափելու նպատակով, անգամ եթե քրեական հետապնդման մարմինը, իրականում, շարունակում է գործի քննությունը: Այս պրակտիկայի արդյունքում հնարավոր է նաև խուսափել կալանքի վերանայման պահանջից:

## IV. Ազատագրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռ կայացնելը

### Գործոն 14. Դատավճռի կայացման ընթացակարգը

*Հանցանք կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ դատարանը նշանակում է պատիժ: Այդ անձինք պատժի վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ և փաստարկներ ներկայացնելու հնարավորություն ունեն: Պատիժ նշանակելիս դատավորը հաշվի է առնում դատապարտյալի մասին համապատասխան տեղեկությունները, այդ թվում՝ կատարված հանցագործության բնույթը: Դատավճիռը կայացվում է դռնբաց դատական նիստում, որին ներկա է գտնվում դատապարտյալը, իսկ դատավորը հասկանալի լեզվով ներկայացնում է նշանակված պատժի հիմքերը և պայմանները:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Դատարանի կայացրած դատավճռում նշվում են առաջադրված մեղադրանքները, որոնց համար ամբաստանյալը մեղավոր է ճանաչվում, ինչպես նաև այն հիմնավորող օրենքը և փաստերը: Որից հետո, դատարանը լուծում է պատժի հարցը՝ առանց ամբաստանյալի կողմից լրացուցիչ ներկայացնելու ձևով պատժի վերաբերյալ առանձին ապացույցներ կամ փաստարկներ ուսումնասիրելու կամ անկախ աղբյուրներից ամբաստանյալի մասին հավաքված որևէ տվյալներ, նախկինում կամ ներկա պահին կատարված հանցագործություններ կատարելու, հոգեկան առողջության և հակումների մասին տեղեկություններ լսելու:</p>	

### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանի քրեական դատավարության մեջ պատժի նշանակման փուլը չի առանձնացվում ամբաստանյալի մեղավորությունը որոշելու փուլից: Հակառակը. ապացույցները և մեղավորության ու պատժի վերաբերյալ բանավոր փաստարկները միաժամանակ են քննվում: Դատարանն այնուհետև հեռանում է խորհրդակցական սենյակ և առաջին հերթին լուծում այն հարցը, թե արդյոք ամբաստանյալը մեղավոր է տվյալ հանցանքը կատարելու մեջ և առանց ամբաստանյալի կողմից լրացուցիչ փաստարկներ լսելու՝ լուծում է պատժի հարցը: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 359 և 360: Խորհրդակցական սենյակում դատարանը կարող է որոշում կայացնել դատաքննությունը վերսկսելու մասին, եթե այն գտնում է, որ չի կարող լուծել համապատասխան հարցը՝ առանց լրացուցիչ ապացույցներ լսելու, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 363:

Պատժի հարցը լուծելու համար դատարանը անդրադառնում է հետևյալ հարցերին՝

- ապացուցված է արդյոք, որ կան մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքներ,
- ենթակա է արդյոք ամբաստանյալը պատժի իր կատարած հանցանքի համար,
- ինչպիսի պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ,
- ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը,
- պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման,
- ամբաստանյալի նկատմամբ արդյոք պետք է կիրառել բուժում գինեմոլությունից կամ թմրամոլությունից,
- ուղղիչ կամ կարգապահական հիմնարկի տեսակը, համապատասխան ռեժիմը, որում ամբաստանյալը պետք է կրի ազատագրվման ձևով նշանակված իր պատիժը:

ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 360:

Լուծելով վերը նշված հարցերը՝ դատարանն անցնում է գրավոր դատավճիռ կազմելուն, որի մեջ ներկայացվում են դատարանի հետևությունները սահմանված ձևով, *տե՛ս նույն տեղը*, հոդվածներ 369-372, որից հետո դատավճիռը հրապարակվում է: *Նույն տեղը*, հոդված 373: Դատավճռում պետք է պարզ և հասկանալի լեզվով շարադրվի դատավճիռը կայացնելու ժամանակը և վայրը, դատարանի անունը, դատարանի կազմը, դատական նիստի քարտուղարը, մեղադրողը, պաշտպանը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և նրանց ներկայացուցիչները, ինչպես նաև ամբաստանյալի անունը, ազգանունը, նրա ծննդյան թվականը, ընտանեկան դրությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, կրթությունը և ամբաստանյալի անձին վերաբերող այլ տեղեկություններ, որոնք նշանակություն ունեն գործի համար, այն քրեական օրենքը, որով նախատեսված հանցանքի կատարման համար մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել: *Նույն տեղը*, հոդվածներ 369, 370: Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում պետք է նշվի մեղադրանքի բովանդակությունը, գործի հանգամանքների մասին դատարանի հետևությունները, թե արդյոք մեղադրանքն ապացուցվել է, իսկ ամբաստանյալի մեղավորությունը հիմնավորվել է, ինչպես նաև այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները: *Նույն տեղը*, հոդված 371: Դատավճռի եզրափակիչ մասում նշվում են դատարանի որոշումները և դատավճռի բողոքարկման կարգը: *Նույն տեղը*, հոդված 372:

Նախնական կալանքի տակ գտնվող ամբաստանյալն ազատ է արձակվում, եթե իր դատավճռով դատարանն արդարացնում է ամբաստանյալին, հետաձգում է պատիժը կրելը կամ մեղադրական դատավճիռ է կայացնում պատիժը կրելուց ազատելով, կամ պատիժը պայմանականորեն չի կիրառում, կամ նրան ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ է նշանակում, կամ էլ նշանակված պատժի ժամկետը չի գերազանցում ամբաստանյալի կալանքի տակ գտնվելու ժամկետը: *Նույն տեղը*, հոդված 374:

Հարցազրույցների մասնակիցները հաստատել են, որ գործնականում ամբաստանյալին մեղավոր ճանաչելուց հետո դատարանը նրա նկատմամբ նշանակված պատժի վերաբերյալ առանձին ապացույցներ չի լսում: Այս հանգամանքը պաշտպանության ռազմավարության տեսանկյունից ամբաստանյալին և նրա պաշտպանին դնում է անմխիթար վիճակում: Եթե ամբաստանյալը մեղավոր ճանաչվելուց առաջ պատժի համապատասխանության վերաբերյալ դատարանին դիմի, ապա դատարանը կարող է սա դիտարկել որպես մեղավորության մարտավարական ճանաչում: Այնուամենայնիվ, եթե ամբաստանյալը չանդրադառնա պատժի համապատասխանությանը և մեղավոր է ճանաչվում, ապա դատարանը պատժի վերաբերյալ դատավճիռ կկայացնի առանց դրան առնչվող փաստարկները լսելու: Մասնակիցներից ոմանք չեն գտնում, որ սա ամբաստանյալի համար կարևոր խնդիր կարող է լինել՝ նշելով, որ ամբաստանյալը կամ նրա փաստաբանը կարող են նախադեպեր մատնանշել համապատասխան պատժի վերաբերյալ: ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 15(3):

#### **Գործոն 15. Պատիժ նշանակելիս հաշվի առնվող գործոնները**

*Ազատագրվումն իր ծանրությամբ համարվում է որպես վերջին միջոց: Պատիժ նշանակող մարմինը պատիժ նշանակելիս հաշվի է առնում ամբաստանյալի ուղղվելու հնարավորությունը, հասարակության պաշտպանությունը, տուժողի շահերը, ամբաստանյալի՝ կալանքի տակ եղած ժամկետը, ինչպես նաև ցանկացած ծանրացուցիչ կամ մեղմացուցիչ հանգամանք: Համանման իրավիճակում գտնվող մեղադրյալների նկատմամբ կիրառվում է համանման պատիժ:*

*Եզրակացություն*

*Հարաբերակցությունը՝ բացասական*

Հայաստանի իրավական դաշտը պահանջում է, որ անձինք ազատությունից զրկվեն միայն անհրաժեշտության դեպքում և դատավորներին տրամադրում է մշակված չափորոշիչներ, որպեսզի վերջիններս ղեկավարվեն պատիժ նշանակելիս: Այնուամենայնիվ, ազատագրվումը հաճախակի է նշանակվում: Մասնակիցներից շատերը գտնում են, որ դա գալիս է պատմական պրակտիկայից և իրատեսական այլընտրանքներ չունենալուց:

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրքը սահմանում է, որ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 48(1): Օրենսգիրքը յուրաքանչյուր հանցագործության համար նախատեսում է պատժի սահմաններ: *Նույն տեղը*, ՀԱՏՈՒԿ ՄԱՍ: Սպանությունը, օրինակ, պատժվում է ազատագրվմամբ 6-ից 12 տարի ժամկետով, բացի այն դեպքերից, երբ առկա է մեկ կամ ավելի ծանրացուցիչ հանգամանք, որի դեպքում հնարավոր պատիժը կարող է հասնել 8-ից 15 տարի ժամկետով կամ ցմահ ազատագրվման: *Նույն տեղը*, հոդված 104: Համապատասխան պատիժը որոշվում է հանցագործության համար նախատեսված պատժի սահմաններում՝ հաշվի առնելով մի շարք ընդհանուր սկզբունքներ: *Նույն տեղը*, հոդված 61(1). Այդ սկզբունքներն են՝ հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները: *Նույն տեղը*, 61(2): Չնայած այն բանին, որ տուժողի օժանդակությունը պատժի նշանակման հարցում օրենսդրությամբ կամ սահմանադրությամբ չի պահանջվում, նման բան պրակտիկայում երբեմն տեղի է ունենում, Գործոն 5-ում նկարագրվածի համաձայն:

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրքը նախատեսում է մի շարք պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնվեն պատիժ նշանակող դատարանի կողմից: Որպես պատիժը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն առաջին անգամ հանգամանքների պատահական զուգորդմամբ մեղադրյալի կողմից ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարելը, անչափահաս կամ հղի լինելը հանցագործությունը կատարելու պահին, պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև 14 տարեկան երեխայի առկայությունը, հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ կարեկցանքի շարժառիթով կատարելը կամ էլ՝ հանցագործությունը

բացահայտելու հարցում օժանդակելու կամ հանցանք կատարած այլ անձանց բռնելու հանգամանքը և այլն: *Նույն տեղը*, հոդված 62: Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներն են հանցանք կատարելու ռեցիդիվը, հանցանքը կազմակերպված խմբի կազմում կատարելը կամ հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը, հանցանքն այնպիսի անձի կողմից կատարելը, ով դրանով խախտել է զինվորական կամ մասնագիտական երդումը, հանցանքը կատարելուն հոգեկան խանգարումներով տառապող, հարբած, քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց ներգրավելը, հղի վիճակում գտնվող տուժողի նկատմամբ, մանկահասակի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ (այդ թվում՝ ամուսինը կամ մերձավոր ազգականը) կամ հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական շարժառիթներով կամ առանձին դաժանությամբ, ակոհողի, թմրամիջոցների ազդեցության տակ կատարելը: Հոդված 63-ը սահմանում է սպառնիչ ցանկը: *Նույն տեղը*, հոդված 63:

Որոշակի հանցանքների համար նախկին դատվածությունները նույնպես կարող են ծանրացնող հանգամանք հանդիսանալ՝ հանգեցնելով ավելի մեծ տույժի նույն կամ որոշակի այլ հանցանքների համար նշանակված հետագա դատվածությունների ժամանակ՝ մասնավորապես՝ սեփականության վերաբերյալ հանցանքների համար: Վճռաբեկ դատարանի մի դատավոր դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «կրկնակի դատվածության» կամ նոր դատվածության դեպքում ավելի մեծ տույժի հանգեցնող նախկին դատվածությունների՝ ինչպես ծանրացնող հանգամանք կիրառման հարցով, որը կարող է որոշակի պարզաբանում տալ ծանրացուցիչ հանգամանքների կիրառման առումով<sup>14</sup>: Ներկայացվող հարցի էությունն այն է, թե արդյոք նախկինում դատապարտված լինելը կարող է համարվել որպես ծանրացուցիչ հանգամանք երկրորդ անգամ անձին ավելի երկար ժամկետով դատապարտելու համար (նույնիսկ եթե երկրորդ հանցագործությունն ավելի թեթև է), եթե դատապարտյալը կրկին հանցագործություն է կատարում պատիժը կրելուց հետո:

Պատիժը նշանակելիս դատարանը պետք է նշանակի պատիժներից ամենանվազ խիստ պատիժը, որը համապատասխանում է պատժի նպատակներին: *Նույն տեղը*, հոդված 61(3): Մինչև դատաքննությունը նախնական կալանքի տակ պահելու ժամկետը հանվում է ազատագրկման ձևով նշանակված պատժի ժամկետից, ինչպես նաև հանրային աշխատանքների ձևով նշանակված պատժի ժամկետից: *Նույն տեղը*, հոդված 69: Դատարանը կարող է

<sup>14</sup> 2010 թ.-ի մայիսին, երբ սույն զեկույցի ուսումնասիրությունները ավարտվեցին, ՀՀ Սահմանադրական դատարանը որոշեց, որ այդպես կոչված կրկնակի դատվածության վերաբերյալ դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: *Տե՛ս զեկույցը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 177(3) և 258(1) հոդվածների սահմանադրականությունը, գործ համար ՄՂՈ-882 (մայիսի 11, 2010թ.)*

նախատեսված նվազագույն պատժից նույնիսկ ավելի մեղմ պատիժ նշանակել այն դեպքերում, երբ կան բացառիկ հանգամանքներ կապված հանցագործության շարժառիթի և նպատակի հետ կամ հանցանքը կատարելիս հանցավորի վարքագծի հետ, և հանգամանքներ, որոնք նվազեցնում են հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, կամ եթե խմբակային հանցագործության մասնակիցը ակտիվորեն աջակցում է խմբի կողմից կատարած հանցանքը բացահայտելուն: *Նույն տեղը*, հոդված 64: Այնուամենայնիվ, այս դրույթը ոչ հաճախակի է կիրառվում պրակտիկայում: ՀՊԳ-ի կողմից տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն, 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում Երևանում 64-րդ հոդվածի համաձայն օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակվել է 323 ավարտված գործերից 9-ով (2,8%), որից 8 գործով մեղադրյալը չափահաս է եղել, իսկ 1-ով՝ անչափահաս: Մարզերում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակվել է 606 ավարտված գործերից 4-ով (0,7%), որից 3 գործով մեղադրյալները եղել են անչափահաս, իսկ 1-ով՝ չափահաս:

Ազատազրկումը Հայաստանում մնում է ամենահաճախակի կիրառվող պատժատեսակը: Հարցազրույցների մասնակիցներն ասել են, որ դատավորները հաշվի են առնում պատժի այլընտրանքային միջոցները, երբ հնարավոր և տեղին է, սակայն բացակայում են այլընտրանքային դիսպոզիցիաները կիրառելու և վերահսկելու արդյունավետ միջոցները (հարցը քննարկվում է ներքոհիշյալ Գործոն 16-ում):

Թեև դատավորների համար ավելի հստակ ուղենիշներ չեն առաջարկվել, սակայն պատիժների նշանակման հարցում դատավորների շրջանում անկանխատեսելիության և համապատասխանության պակասն առանձնացվել է որպես խնդիր՝ հատկապես փաստաբանների կողմից: Պարզ չէ, թե ինչ որոշակի ազդեցություն պետք է ունենան մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները պատժի նշանակման հարցում կամ որքան կշիռ պետք է դատավորները վերագրեն յուրաքանչյուր հանգամանքին: Հարցազրույցներին մասնակցած դատավորները չէին կարծում, որ օրենսդրական բացերի խնդիր կա, սակայն նշում էին, որ յուրաքանչյուր գործ յուրովի է դիտարկվում: Հարցազրույցների մասնակիցներից մի քանիսը նշել են, որ անհրաժեշտ է հնարավորինս կրճատել յուրաքանչյուր հանցագործության համար նախատեսված ազատազրկման ձևով նշանակված պատժի նվազագույն և առավելագույն ժամկետի միջև եղած տարբերությունը: Սա ոչ միայն հստակություն կմտցնի պատժի սահմանների մեջ, այլ նաև կնվազեցնի դատավորների հայեցողության աստիճանը: Առաջարկություններ են արվել նաև որոշակի հանցանքների դեպքում պարտադիր նվազագույնի վերաբերյալ, հատկապես, երբ հանցավորը նախկինում մի քանի անգամ դատված է եղել, ինչպես նաև մեղմացուցիչ և ծանրացուցիչ հանգամանքների կիրառման հետ կապված օրենսդրության մեջ ավելի մեծ հստակություն մտցնելու վերաբերյալ՝ ուշադրություն դարձնելով հատկապես կազմակերպված հանցագործություններ վրա: Միևնույն իրավիճակում գտնվող

մեղադրյալները պետք է գործնականում դատավորների կողմից ավելի հետևողականորեն արժանանան միևնույն վերաբերմունքի: Մի փաստաբան կողմնակից էր անձի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում առավել խիստ պատիժների նշանակմանը՝ համեմատելով ներպետական համակարգը ՄԻԵԴ-ի կամ այլ համակարգերի հետ: Նա մեջ է բերել սպանության մի օրինակ, որի համար, նա նշեց, Գերմանիայում կամ Ֆրանսիայում նախատեսվում է 25-30 տարի ազատազրկում, սակայն Հայաստանում նման հանցագործության համար էապես մեղմ պատիժ է նախատեսված: *Տե՛ս նույն տեղը*, հոդված 104: 16 տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Այն չի համարվում ծանր հանցագործություն, իսկ նման գործողություններին օժանդակելը կամ դրանց մասին չհայտնելը քրեականացված է: *Տե՛ս նույն տեղը*, հոդված 142: Նշվել է նաև, որ սուտ վկայության, վկաների վրա ճնշում գործադրելու կամ արդարադատության դեմ կատարած մյուս հանցանքների համար նախատեսված պատիժները պետք է խստացվեն: Տարածված է այն կարծիքը, որ քրեական օրենսգրքով նախատեսված պատիժների միջև եղած սահմանը և տարիների թիվը հաճախ չի համապատասխանում հանցագործության ծանրությանը: Վերջերս մեծ աղմուկ հանած Նուբարաշենի դպրոցի նախկին ուսուցչի գործով Լևոն Ավագյանն իրեն մեղավոր է ճանաչել «անչափահասների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու մեջ», որը զուգադրվել է բռնությամբ և ահաբեկությամբ, սակայն մեղադրողն ընդամենը պահանջել է 18 ամիս ազատազրկում: *Տե՛ս Ազատություն ռադիոկայան, Նախկին հայ ուսուցիչն իրեն մեղավոր է ճանաչում սեռական բռնություն կատարելու մեջ* (2010թ. մայիսի 13): *Տե՛ս* վերևում՝ գործոն 4, ծանոթագրություն 6՝ գործի տրամադրման վերաբերյալ քննարկման համար:

Մեկ այլ խնդիր, որ առանձնացվել է, այն է որ վարչական տույժերի համար սահմանված չափը գերազանցում է հանցագործություն կատարելու համար օրենսդրի կողմից սահմանված տուգանքի չափը: ՄԻԵԴ-ը գտել է, որ պետական տուգանքը հավասարազոր է քրեական պատժին: *Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի*, թիվ 21638/03 (2007թ. դեկտեմբերի 20): Որոշ գործերով թմրանյութեր օգտագործելը/պահելը կարող է հանգեցնել վարչական տույժի, սակայն այլ գործերով կասկածյալների նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում, որը մեծացնում է ազատազրկման հավանականությունը: Հարցազրույց տված մի փաստաբան բողոքել է, որ հարկերից խուսափելու գործերում տուգանքները ոչ միայն հաճախ բարձր են, այլ նշանակված գումարի չափն է անկանխատեսելի:<sup>15</sup>

<sup>15</sup> 2010թ. հունիսին Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան այս հարցի կապակցությամբ՝ վիճարկելով, որ պետական տուրքերի հետ կապված անորոշությունը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ կասկածյալի նկատմամբ կոնկրետ հանցագործության կատարման համար մեղադրանք առաջադրելու մասին որոշումը, այն դեպքում, երբ մեկ այլ մեղադրանք ևս կիրառելի է, ազդում է պատժի վրա: Մասնավորապես, մասնակիցները հայտնել են, որ կանանց միակ կալանավայրում՝ Աբովյանի Քրեակատարողական հիմնարկում, մոտավորապես 20-25 կին (կանանց ընդհանուր թվի մոտ 14%-ը), ներկայումս գտնվում են կալանքի տակ կամ ազատազրկված են թրաֆիքինգի համար: Մասնակիցները մտահոգություն են հայտնել թրաֆիքինգի համար ձերբակալված կանանց թվի առումով, քանի որ նրանց կարծիքով նախնական փաստական հանգամանքները կարծես թե ավելի շուտ վկայում են այդ կանանց կողմից կավատության կատարման մասին, որը ավելի մեղմ պատիժ է նախատեսում ինչն էլ կարող է վկայել այն մասին, որ քրեական արդարադատության ոլորտի պաշտոնատար անձինք բավարար ջանք չեն թափում հետաքննելու կազմակերպված հանցագործության իրական պարագլուխներին, իսկ դատախազները՝ քրեորեն հետապնդելու իրական մեղավորներին: Մտահոգություններ են եղել նաև թրաֆիքինգի գոհերի հետ կապված, ովքեր Հայաստան վերադառնալով կարող են մեղադրվել թրաֆիքինգով զբաղվելու մեջ: Հարցազրույցների մասնակիցների կարծիքով այս իրավիճակից կարելի է եզրակացնել, որ իրավապահ մարմինների վրա ճնշումներ են գործադրվում, որպեսզի վերջիններս համառորեն հետամուտ լինեն թրաֆիքինգի գործերին՝ միաժամանակ վախենալով քաղաքական կապեր ունեցող թրաֆիքինգով զբաղվողների հետապնդումից:

Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ կամ հատուցել նրան պատճառված վնասը: ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 73: Բացի այդ մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կարճվում է, երբ կողմերը հաշտվում են: ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 36: Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից իրադրության փոփոխման հետևանքով: Նույն տեղը, հոդված 74: Շփոթմունք կա կապված քրեական պատասխանատվությունից ազատման հետ, որն ինչպես օրենսդրության մեջ հստակության, այնպես էլ դրա կիրառման համապատասխանության բացակայության արդյունք է: Հայաստանի քրեական օրենքը չի սահմանում «հաշտեցում» հասկացությունը: Որևէ տեղ նշված չէ նաև, թե ով է նման որոշում կայացնողը: Մասնավորապես պարզաբանված չեն այն իրավիճակները, երբ տուժողը անչափահաս է կամ տառապում է հոգեկան խանգարումով կամ մահացել է կամ երբ գործում համամեղադրյալներ են ներգրավված, իսկ տուժողը հաշտվում է միայն նրանցից մեկի հետ: Պարզ չէ նաև, թե ինչ է իրենից ներկայացնում «իրադրության փոփոխությունը»: Մասնակիցներից մեկը այս անհստակությունը բացատրեց մի անձի օրինակով, ով լքում է գորամասը՝ կատարելով

հանցագործություն, և թաքնվում քննությունից, սակայն 5 տարի հետո հայտնվում է՝ որպես պարկեշտ քաղաքացի:

### Գործոն 16. Ազատագրկման այլընտրանքները

*Գոյություն ունեն ազատագրկման հետ չկապված օրենքով նախատեսված մի շարք միջոցներ, որոնք նշանակվում են հանցագործության բնույթի և ծանրության, ամբաստանյալի անձի և կենսագրական տվյալների, պատժի նպատակների և տուժողների շահերի վերաբերյալ հաստատված չափորոշիչների գնահատման հիման վրա:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Չնայած այն բանին, որ օրենքով նախատեսված են ազատագրկման հետ չկապված պատժի մի շարք տարբերակներ, սակայն դրանք գործնականում չեն դիտվում կամ կիրառվում որպես իրական այլընտրանքներ:</p>	

### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքը սահմանում է դատարանի կողմից նշանակվող պատիժների տեսակները: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 49: Պատիժները լինում են «հիմնական» կամ «լրացուցիչ»: *Նույն տեղը*, հոդված 50: Մեկ հանցագործության համար կարող է նշանակվել միայն մեկ հիմնական պատիժ: *Նույն տեղը*, հոդված 50(4): Հիմնական պատիժն Քրեական օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է միացվել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ: *Նույն տեղը*: Ազատագրկման հետ չկապված ամենակարևոր հիմնական պատիժները տուգանքն ու հանրային աշխատանքն է: Եթե դատարանը որոշում է, որ տվյալ հանցանքի համար ազատագրկման ձևով պատիժ պետք է նշանակի, այն կարող է որոշում կայացնել նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին՝ սահմանելով փորձաշրջան և պահանջելով, որ դատապարտյալը կատարի մի շարք պայմաններ: *Նույն տեղը*, հոդված 70:

Տուգանքը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար՝ որպես քրեական օրենսգրքով տվյալ հանցագործության համար նախատեսված պատիժ: *Նույն տեղը*, հոդված 51(1): Տուգանքի չափը տատանվում է նվազագույն աշխատավարձի 30-ապատիկից 3000-ապատիկի սահմանում: Տուգանքի հստակ չափը սահմանված է ըստ յուրաքանչյուր հանցանքի: *Նույն տեղը*, հոդված 51(1), ՀԱՏՈՒԿ ՄԱՍ: Տուգանքի չափը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրությունը և դատապարտվողի գույքային դրությունը: *Նույն տեղը*, հոդված 51(2): Դատարանը

դատապարտվողի համար կարող է վճարման ժամկետ սահմանել մինչև 1 տարի ժամկետով և կարող է որոշել հատուկ ժամանակացույց տուգանքը մաս առ մաս վճարելու համար: *Նույն տեղը*, հոդված 51(3), (4): Մինչև դատական քննությունը կալանքի տակ գտնվող անձի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը կարող է նվազեցնել տուգանքի չափը՝ հաշվի առնելով կալանքի տակ գտնվելու ժամկետը: *Նույն տեղը*, հոդված 69(5): Տուգանքը կամ դրա մի մասը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների 5 ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց (փոխարինված պատիժը պետք նվազագույնը լինի 270 ժամ, իսկ առավելագույնը՝ 2200 ժամ): *Նույն տեղը*, հոդված 51: Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: *Նույն տեղը*, հոդված 87(1): Այնուամենայնիվ, անչափահասի նկատմամբ տուգանքը նշանակվում է նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից 500-ապատիկի չափով (10,000 դրամից 500,000 դրամ կամ 26.18 դոլարից 1,308.90 դոլար): *Նույն տեղը*, հոդված 87(2):

Տուգանքը որպես ազատագրկման այլընտրանք ամենահաճախակի նշանակվող պատժի տեսակն է: Այդուհանդերձ, տուգանք նշանակելու դատարանի կարողությունը սահմանափակ է՝ ելնելով տնտեսական հանգամանքներից, քանի որ դատապարտյալները չափազանց աղքատ են, եթե նույնիսկ նրանց թույլատրվի այն մաս առ մաս վճարել: Դատարանները կարող են նաև տուգանքի վճարումը փոխարինել հանրային աշխատանքով, հանրային աշխատանքի յուրաքանչյուր 5 ժամը 1000 դրամ (2.61 դոլար) նվազագույն աշխատավարձի դիմաց: *Նույն տեղը*, հոդված 51(4): Սա հաճախ արդյունավետ տարբերակ չէ, քանի որ դատարանները հանրային աշխատանք չեն կարող նշանակել որոշակի կարգի անձանց նկատմամբ, ինչպիսիք են անչափահասները կամ թոշակառուները, և որոշ դեպքերում, ըստ հարցազրույցների մասնակիցների, տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելը բավարար պատիժ չէ:

Հանրային աշխատանքը դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքի կատարումն է: *Նույն տեղը*, հոդված 54(1): Հանրային աշխատանքները, որոնք նշանակվում են 270-ից 2,200 ժամ ժամկետով, կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը 2 տարի ժամկետով ազատագրկման դատապարտված անձանց նկատմամբ և նշանակվում են միայն դատապարտյալի դիմումի հիման վրա: *Նույն տեղը*, հոդվածներ 54(2),(3): Հանրային աշխատանքը չի նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին 16 տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ: *Նույն տեղը*,

հողված 54(4): Եթե դատապարտյալը հրաժարվում է հանրային աշխատանք կատարել, հանրային աշխատանքի չկրած մասը դատարանը փոխարինում է ազատազրկմամբ՝ 1 օրը հաշվարկելով չկրած հանրային աշխատանքի 3 ժամվա դիմաց: *Նույն տեղը*, հողված 54(5): Որպես ազատազրկման այլընտրանք՝ հանրային աշխատանք նշանակելու դատարանի լիազորությունները խիստ սահմանափակ են, որը պայմանավորված է Հայաստանում ընդհանուր առմամբ աշխատատեղերի պակասով, ինչպես նաև հանրային աշխատանքի հնարավորության պակասով և դատապարտյալների շրջանում այդ աշխատանքը կատարելու ցանկության բացակայությամբ: Կա նաև լավ մշակված կազմակերպչական և կիրառման մեխանիզմների պակաս, որի մասին խոսվում է ստորև՝ Գործոն 17-ում:

Հայաստանի քրեական օրենքը նախատեսում է նաև որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում: Դատարանը, որպես հիմնական պատիժ, կարող է արգելել դատապարտյալին զբաղեցնել որոշակի պաշտոն կամ զբաղվել որոշակի գործունեությամբ (սա կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ պատիժ): *Նույն տեղը*, հողված 49(2), 50(2): Արգելքը կարող է սահմանվել երկուսից 7 տարի ժամկետով՝ դիտավորյալ հանցագործությունների համար, և 1-ից 5 տարի ժամկետով՝ անզգույշ հանցագործությունների համար: Այն դեպքերում, երբ պատժի այս տեսակը նշանակվում է որպես լրացուցիչ պատիժ, արգելքը կարող է տևել 1-ից 3 տարի: *Նույն տեղը*, հողված 52(2): Դատարանը կարող է այս պատժի տեսակը նշանակել, երբ ելնելով հանցավորի պաշտոնավարության կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու ժամանակ նրա կատարած հանցագործության բնույթից, հնարավոր չի գտնում պահպանել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու նրա իրավունքը: *Նույն տեղը*, հողված 52(3): Քրեակատարողական վարչությունը պատասխանատու է այս պատիժը կատարելու և դատապարտյալի գործատուին կամ մասնագիտական միավորմանը տեղեկացնելու համար: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻԲ, հողվածներ 27-29: Հայաստանի օրենքը չի անդրադառնում այս արգելքի խախտման դեպքում նշանակվող սանկցիաներին:

Հայաստանի օրենքը թույլատրում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձն ազատվի քրեական պատասխանատվությունից, եթե նա հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործությունը բացահայտելուն, հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻԲ, հողված 72: Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը: *Նույն տեղը*, հողված 73, *տե՛ս* նաև հողված 36: Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը

գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է այնպիսի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ, ինչպիսին են՝ նախագրուշացումը, ծնողների, իրավական խնամակալի կամ համապատասխան մարմինների վերահսկողության տակ պահելը՝ պահանջելով մեղմել հասցրած վնասը կամ սահմանափակելով գործողությունները: *Նույն տեղը*, հոդված 91(1):

Այն դեպքում, երբ դատարանը որոշում է, որ ազատագրկումը տվյալ հանցանքը կատարելու համար համապատասխան հիմնական պատիժն է, դատարանը կարող է նաև որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին՝ փոխարենը դատապարտյալից պահանջելով պահպանել մի շարք պայմաններ: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 70: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ 1-ից 5 տարի ժամկետով: *Նույն տեղը*, հոդված 70(3): Դատարանը դատապարտյալի վրա կարող է դնել մի շարք պարտականություններ, որոնք կոչված են նրա ուղղմանը՝ իրավասու մարմինն տեղեկացնել բնակության վայրի փոփոխման մասին, բուժման կուրս անցնել ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին: *Նույն տեղը*, հոդված 70(5): Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է գտնի, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով պատիժը կրելու հաշվի առնելով նրա անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը, պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները և թե արդյոք դատապարտյալը, եթե դատարանը նման կարգադրություն է արել, հատուցել է տուժողին պատճառված վնասի համար: *Նույն տեղը*, հոդված 70(1), (2):

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ գործնականում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում փորձաշրջան չի կիրառվում և նույնիսկ ավելի պակաս ծանր հանցագործությունների դեպքում այն տարածված չէ: Փաստաբանները նշել են, որ հազվադեպ են դեպքերը, երբ իրենց վստահորդների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառվի և սովորաբար դա տեղի է ունենում, երբ մեղադրողը հատուկ կողմնապահությամբ է հանդես գալիս ի օգուտ մեղադրյալի կամ եթե մեղադրյալը քաղաքական լծակներ ունի: Պատիժը պայմանականորեն չի կիրառվում ավելի շատ անչափահասների նկատմամբ, քան չափահասների: Լոռու մարզում ՀՊԳ-ի տրամադրած տվյալներով պատիժը պայմանականորեն չի կիրառվել 2 գործով: Ինչևէ, ՀՊԳ-ից ստացված վիճակագրության համաձայն, պատիժը պայմանականորեն չի կիրառվում ավելի շատ մարզերում, քան Երևանում:

**2010թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՊԳ-Ի ՎԱՐԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ ՊԱՏԻԺԸ**

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇԸ**

	<i>Դատավճիռ կայացրած գործերի թիվը (մեղադրոյալների թիվը)</i>	<i>Գործեր, որտեղ պատիժը պայմանականորեն չի կիրառվել</i>	<i>Պատիժը պայմանականորեն չկրող դատապարտյալների ընդհանուր թիվը</i>	<i>Պատիժը պայմանականորեն չկրող չափահաս դատապարտյալների թիվը</i>	<i>Պատիժը պայմանականորեն չկրող անչափահաս դատապարտյալների թիվը</i>
<b>Երևան</b>	323 (333)	16 (4.9%)	23 (6.9%)	17 (5.2%)	6 (54.5%)
<b>Մարզեր</b>	606 (736)	86 (14.2%)	107 (14.5%)	73 (11.4%)	34 (34.7%)

*Աղբյուրը՝ ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակ:*

Մի քանի պաշտպաններ նշել են, որ պատիժը հաճախ պայմանականորեն չի կիրառվում, որպեսզի գոհացնեն և՛ դատախազին, և՛ մեղադրյալին, դրանով իսկ խուսափելով բողոքարկման հետ կապված անորոշությունից, ներառյալ նաև այն դեպքերը, երբ մեղադրյալը ենթադրաբար մեղավոր չէ, սակայն դատախազը խուսափում է նրան արդարացնելուց, ելնելով դատաքննության հետ կապված մտավախություններից: Սա հանգեցնում է նաև դատավճիռների դեմ բերված բողոքարկումների նվազեցմանը, քանի որ, համաձայն ստացված տեղեկությունների Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունած նույնիսկ քիչ քրեական գործերով հաճախ ավելի մեծ պատժողականություն է դրսևորում:

Այն հարցին, թե ինչու է պատժի պայմանականորեն չկիրառումը հազվադեպ երևույթ, մասնակիցները պատասխանել են, որ դա կապված է ԱՊԿԲ ռեսուրսների սղության հետ՝ հսկողություն իրականացնելու պայմանականորեն պատիժը չկրող դատապարտյալների նկատմամբ պատժի պայմանական չկիրառման պայմանների կատարման նպատակով, ուստի դատավորներն էլ խուսափում են նման որոշումներ կայացնելուց: Տե՛ս ստորև՝ Գործոն 17: Բացի այդ, եթե դատապարտյալը կախվածության մեջ է գտնվում ալկոհոլից կամ թմրանյութերից, փորձաշրջանի ժամանակ բուժման քիչ տարբերակներ կան, ինչպես նաև հասարակությունը վատ աչքով է նայում նրանց, ովքեր փորձում են բուժվել թմրամոլությունից կամ ալկոհոլամոլությունից: Այն դեպքում, երբ պատիժը պայմանականորեն չի կիրառվում, ըստ մի մասնակցի, դատարանը

հաշվի է առնում անձի բնավորությունը, ընտանեկան դրությունը, մասնագիտական կարգավիճակը, առողջությունը, տուժողի կարծիքը հնարավոր հաշտեցման մասին և նախկինում դատված լինելու հանգամանքը:

**Գործոն 17. Ազատագրկման հետ չկապված պատիժների մասին որոշումների կատարումը և վերահսկողությունը**

*Ազատագրկման հետ չկապված պատիժների մասին որոշումներն արդյունավետորեն կատարվում և վերահսկվում են իրավասու վերահսկիչ մարմինների կողմից: Պատիժը նշանակող մարմինը տեղեկացվում է ազատագրկման հետ չկապված պատժի կրման պայմանների էական խախտումների մասին:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ չեզոք</u>
<p>Չնայած այն բանին, որ հայկական օրենսդրական համակարգը փորձում է արդյունավետորեն իրականացնել այլընտրանքային պատիժների մասին որոշումների հետ կապված ընթացակարգերը, սակայն համապատասխան ռեսուրսների պակասը թույլ չի տալիս խթանել այդ ջանքերը:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին, այդ թվում՝ փորձաշրջանի մասին, դատավճիռը ստանալուց հետո դատապարտյալի վերահսկողությունն ստանձնում է Քրեակատարողական վարչության (ՔՎ) Այլընտրանքային պատիժների կատարման բաժինը, որը գտնվում է դատապարտյալի բնակության վայրում: Դատարանի դատավճիռը կամ որոշումն ստանալուց 3 օրվա ընթացքում ԱՊԿԲ-ի ծառայողը դատապարտյալի մասին կազմում է անձնական գործ: Անձնական գործում ներառվում են տեղեկություններ դատապարտյալի անձի, բնակության և աշխատանքի վայրերի, ինչպես նաև պատժի կատարման համար նշանակություն ունեցող այլ հարցերի մասին: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ, 26 հոկտեմբերի 2006 թվականի N 1561-Ն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԲԱԺԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, կետեր 48 և 49 (այսուհետ՝ Այլընտրանքային պատիժների մասին որոշում): ԱՊԿԲ-ի ծառայողները դատապարտյալին հաշվառման վերցնելուց հետո 3-օրյա ժամկետում հաղորդում են ուղարկում ոստիկանություն: *Նույն տեղը*, կետ 54: Դատապարտյալի՝ ԱՊԿԲ ներկայանալու դեպքում բաժանմունքի ծառայողը նրա անունով լրացնում է հաշվառման քարտ, դատապարտյալին պարզաբա-

նում է նրա իրավունքները և պարտականությունները, դրանք խախտելու համար սահմանված պատասխանատվությունը, ինչպես նաև հաշվառման ներկայանալու օրվանից առնվազն ամիսը 1 անգամ ԱՊԿԲ ներկայանալու պարտականության մասին, ինչի մասին դատապարտյալից վերցվում է ստորագրություն: 7-օրյա ժամկետում ԱՊԿԲ չներկայանալու դեպքում դատապարտյալին ուղարկվում է ծանուցագիր բաժանմունք ներկայանալու մասին: *Նույն տեղը*, կետ 50:

Դատապարտյալները տուգանքը վճարում են բանկային հաշվին, իսկ դատարանն այնուհետև տեղեկացվում է այդ մասին: Տուգանքի վճարումը վերահսկվում է ՔՎ-ի կողմից: Եթե դատապարտյալն ուշացնում է տուգանքի վճարումը 7 օրով, ապա ՔՎ-ն այդ մասին տեղեկացնում է դատարանին: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետ 7, 50, *տե՛ս* նաև ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 26: Դատարանը կարող է դատապարտյալին լրացուցիչ ժամանակ տալ տուգանքը վճարելու համար կամ տուգանքը փոխարինել հանրային աշխատանքով կամ ազատազրկմամբ: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 26:

Այն դեպքում, երբ հանրային աշխատանքը նշանակվում է որպես պատիժ, դատապարտյալի գործը հանձնարարվում է դատապարտյալի բնակության վայրում գտնվող ՔՎ-ի տարածքային բաժնին, իսկ ՔՎ-ի ներկայացուցիչը կազմում է նրա անձնական գործը: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետեր 48, 49: Դատապարտյալների համար աշխատանքի տեղեր ձեռք բերելու համար Արդարադատության նախարարությունը պայմանագիր է կնքում ոչ-առևտրային ընկերությունների հետ, ինչպիսիք են դպրոցը կամ այգիները: Պայմանագրում նշվում է, թե ով է վերահսկելու դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքը: ՔՎ-ն փորձում է համապատասխանեցնել յուրաքանչյուր դատապարտյալի հմտությունները հանրային աշխատանքի տվյալ տեսակին՝ հաշվի առնելով հանցագործության բնույթը և ծանրությունը:

Եթե դատապարտյալի նկատմամբ հատուկ պայմաններ են նշանակվում, ապա ԱՊԿԲ-ի ծառայողը համապատասխան առողջապահական մարմիններ հաղորդում է ուղարկում այն դատապարտյալների մասին, որոնք պետք է բուժման կուրս անցնեն ակոհոլամոլության, թմրամոլության, թունամոլության կամ վեներական հիվանդությունների հետ կապված: Եթե նշանակվում են այլ պարտականություններ ԱՊԿԲ-ի ծառայողը հաղորդում է ուղարկում համապատասխան մարմիններին: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետ 52: Ծառայողը կարող է այցելել համապատասխան հաստատություններ դատապարտյալի պարտականությունների կատարումը վերահսկելու նպատակով, իսկ փորձաշրջանի դեպքում ԱՊԿԲ-ի ծառայողներն իրավունք ունեն այցելելու դատապարտյալի բնակության վայր կամ աշխատավայր և դատապարտյալից պահանջելու ամիսը 1 անգամ բաժանմունք ներկայացնել

մարմինների կամ առողջապահական կազմակերպությունների կողմից տրված տեղեկանքները: *Նույն տեղը*, կետ 55:

Դատապարտյալի կողմից սահմանված կարգով ծանուցվելուց հետո ԱՊԿԲ չներկայանալու կամ դատարանի դատավճիռը, այդ թվում՝ փորձաշրջանի պայմանները, խախտելու դեպքում ԱՊԿԲ-ի ծառայողը 10 օրվա ընթացքում դատապարտյալին ծանուցագրով հրավիրում է ԱՊԿԲ: Հարգելի պատճառների բացակայության դեպքում նրան գրավոր նախազգուշացվում է պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցով դատարան դիմելու հնարավորության մասին: Դատապարտյալը պարտավոր է ստորագրել նախազգուշացման տակ: *Նույն տեղը*, կետ 56, *տե՛ս* նաև ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 132: Այն դեպքում, երբ ԱՊԿԲ-ն անհրաժեշտ է համարում ուժեղացնել դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողությունը, ԱՊԿԲ-ի պետը համապատասխան միջնորդություն է ներկայացնում դատարան նրա վրա լրացուցիչ պարտականություններ դնելու կամ սահմանափակումներ կիրառելու մասին: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետ 57, *տե՛ս* նաև ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 132:

Երկու և ավելի անգամ ԱՊԿԲ չներկայանալու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատարանի դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին ԱՊԿԲ-ի միջնորդությունը պետք է ներառի չներկայանալու վերաբերյալ վկայող փաստեր, այդ թվում՝ նրան տրված գրավոր նախազգուշացման մասին: Միջնորդությանը կարող են կցվել նաև բնութագրեր դատապարտյալի աշխատանքի կամ ուսման, ինչպես նաև բնակության վայրերից՝ պարզաբանելով դատապարտյալի հանգամանքները և անձնական առանձնահատկությունները: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետ 58: Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չարամտորեն խուսափում է դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները չարամտորեն կատարելուց կամ կատարում է անզգույշ կամ ոչ մեծ ծանրության հանցագործություն, դատարանը լուծում է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, 70(6): Եթե դատապարտյալը կատարում է միջին ծանրության, ծանր կամ շատ ծանր հանցագործություն կամ եթե դատարանը որոշում է վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու մի հատվածը անզգույշ հանցագործություն կատարելու համար, ապա դատապարտյալից պահանջվում է կրել ինչպես պատիժը պայմանականորեն չկիրառելը կասեցնելուց հետո նշանակված ազատագրկման ձևով պատիժը, այնպես էլ նոր հանցանք կատարելու համար դատավճռով նշանակված լրիվ կամ մասնակի պատիժը: *Նույն տեղը*, հոդվածներ 67(1), 70(7):

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների նկատմամբ վերահսկողության իրականացման ավարտից հետո ԱՊԿԲ-ի ծառայողը դատապարտյալին տալիս է պատժից ազատվելու մասին տեղեկանք և այդ մասին հայտնում ոստիկանություն: Դատարանի դատավճռով նշանակված պատժից ազատվելուց հետո դատապարտյալի անձնական գործը սահմանված կարգով արխիվացվում է: ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ, կետեր 58, 59:

Ինչպես նշվեց, վերոհիշյալ գործողություններից շատերը հանձնարարված են Այլընտրանքային պատիժների կատարման բաժնին: Ինչպես հայտնի է, այս բաժնում աշխատում են շատ քիչ թվով աշխատողներ և այն ունի միայն 1 աշխատասենյակ ՔՎ-ում: Երևանում 1 դատախազ է նշանակված ՔՎ-ի այս բաժնի հետ աշխատելու համար: Չնայած, որ ՔՎ-ն ունի ընդհանուր հաշվով 13 քրեակատարողական կենտրոններ, միայն 4-ն են գտնվում Երևանից դուրս:

Այլընտրանքային պատիժների կատարման բաժնի վիճակը խիստ անբարենպաստ ազդեցություն ունի այլընտրանքային միջոցների վերահսկման և իրականացման արդյունավետության վրա, քանի որ բաժնի քիչ թվով աշխատողները չափից ավելի ծանրաբեռնված են: Հարցազրույցների մասնակիցներից շատերը համաձայնել են, որ պայմանականորեն պատիժ կրող իրավախախտների վերահսկողության մակարդակը այնքան խիստ չէ, որքան պետք է լինի: Մի փաստաբան նշել է, որ իրականում պատիժը պայմանականորեն չկրող անձանց նկատմամբ ինչպես հարկն է վերահսկողություն չի իրականացվում, քանի որ դատարանները դատապարտյալների վրա «ստորագրելուց» և ՔՎ ներկայանալուց բացի այլ պարտականություն չեն դնում: Ինչպես հայտնի է, դատապարտյալի պարտականությունն է առնվազն ամիսը 1 անգամ ներկայանալ ՔՎ, որի վերաբերյալ նրանից վերցվում է ստորագրություն: Նշվել է, որ որոշ ոստիկանության բաժանմունքներ դեր ունեն փորձաշրջանում գտնվող անձանց վերահսկելու գործում և «անձնական քարտերի համակարգի» միջոցով գրանցում են դատապարտյալի կողմից կատարած նոր վարչական կամ քրեական խախտումները: Մի դատախազ ընդունել է, որ պետք է ավելի խիստ կամ ավելի ակտիվ վերահսկողություն իրականացվի, որպեսզի կանխվի ռեցիդիվը: Սա հատկապես ճիշտ կլինի անչափահասների դեպքում, քանի որ նրանք հաճախ «սոցիալական խնդիրներ» ունեն տանը և կարող են լուրջ հանցագործություններ կատարել: Երիտասարդ դատապարտյալների նկատմամբ ավելի աչալուրջ և արդյունավետ վերահսկողություն իրականացնելով՝ կարելի է կանխել հետագա քրեական խնդիրները: Այլընտրանքային պատիժների կատարման բաժնից ստացված տեղեկությունների համաձայն, 2009թ. 2,026 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որիցի 36-ը կատարել են նոր հանցագործություն և նրանց նկատմամբ պատիժը փոխարինվել է ազատազրկման ձևով պատժով: Վիճակագրական տվյալներ չկան փորձաշրջանի այնպիսի

խախտումների ընդհանուր թվի վերաբերյալ, որոնք չհանգեցնեին իրավախախտին կալանավայր ուղարկելուն:

#### **Գործոն 18. Ազատագրկման հետ չկապված պատիժների վերացումը**

*Ազատագրկման հետ չկապված պատիժ նշանակող մարմնի կողմից վերացվում և փոխարինվում են ազատագրկմամբ բացառապես պատժի կրման էական խախտումների դեպքում, երբ բացակայում են հնարավոր այլընտրանքային պատժատեսակներն ու պատշաճ կերպով ապահովվում է դատապարտյալի դատավարական իրավունքները:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ չեզոք</u>
<p>Բավարար ռեսուրսներ հատկացված չեն ազատագրկման հետ չկապված պատիժ կրող անձանց նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար: Չկան նաև խախտումներին արձագանքելու հատուկ ընթացակարգեր: Նվազագույն երաշխիքներ են գործում այն դատապարտյալների իրավունքների պաշտպանության համար, ում նկատմամբ ազատագրկման հետ չկապված պատիժը վերացվում է:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանի Քրեական օրենսգիրքը հատուկ սանկցիաներ է նախատեսում ազատության հետ չկապված վերոնշյալ պատիժների կրման պայմանները խախտելու համար: Տուգանքի համար Քրեական օրենսգիրքը սահմանում է, որ եթե դատապարտյալը չի կարող վճարել տուգանքն ամբողջությամբ կամ դրա մի մասը, ապա դատարանն այն փոխարինում է հանրային աշխատանքով որպես համապատասխան պատիժ՝ 5 ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց (փոխարինված պատիժը պետք է լինի նվազագույնը 270 ժամ, իսկ առավելագույնը՝ 2,200 ժամ): ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 51(4): Եթե դատապարտյալը հրաժարվում է կատարել հանրային աշխատանք, ապա դատարանը փոխարինում է հանրային աշխատանքի չկրած մասը ազատագրկմամբ՝ ազատագրկման 1 օրը հաշվարկելով հանրային աշխատանքների 3 ժամվա դիմաց: *Նույն տեղը*, հոդված 54(5): Եթե փորձաշրջանի ընթացքում դատապարտյալը չարամտորեն խուսափում է դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելուց կամ կատարում է անզգույշ կամ ոչ մեծ ծանրության հանցագործություն, ապա պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը լուծում է դատարանը: *Նույն տեղը*, հոդված 70(6): Եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում կատարում է միջին ծանրության կամ ծանր հանցագործություն, կամ եթե դատարանը որոշում է վերացնել

պատիժը պայմանականորեն չկիրառելը անզգույշ հանցագործություն կատարելու պատճառով, ապա դատարանի որոշմամբ նոր դատավճռով նշանակված պատժին լրիվ կամ մասնակիորեն գումարվում է նախորդ դատավճռով նշանակված պատժի չկրած մասը: *Նույն տեղը*, հոդվածներ 67(1), 70(7):

Դատապարտյալի իրավունքները պաշտպանվում են դատարանի որոշումն ի կատար ածելու փուլում: Երբ դատարանը քննարկում է իր որոշման կատարման հետ կապված հարցեր, դատապարտյալն իրավունք ունի մասնակցել դատական նիստին և տալ ցուցմունք, ներկայացնել ապացույցներ, հարուցել միջնորդություններ և հայտնել բացարկներ, ծանոթանալ գործի բոլոր նյութերին, ինչպես նաև բողոքարկել դատարանի գործողություններն ու որոշումները: ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 429: Պատիժը պայմանականորեն չկիրառելու ժամկետը կրճատելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծվում են դատապարտյալի բնակության վայրի դատարանի որոշմամբ: *Նույն տեղը*, հոդված 437(4): Դատական որոշման կատարման հետ կապված հարցերը դատարանի կողմից քննվում են դատական նիստում՝ դատապարտյալի և նրա պաշտպանի մասնակցությամբ: Գործի քննարկումն սկսվում է նախագահողի կողմից միջնորդագիրը հրապարակելով, որից հետո դատարանը հետազոտում է ապացույցները և լսում է դատական նիստին ներկայացած անձանց կարծիքները: Վերջինը ելույթ է ունենում դատապարտյալը կամ նրա պաշտպանը: Այնուհետև, դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ որոշում կայացնելու:

Այնուամենայնիվ պարզ չէ, թե ինչպիսի ընթացակարգեր են կիրառվում, երբ ազատազրկման հետ չկապված պատիժները կրելու ընթացքում խախտումներ են լինում, հատկապես կապված պաշտպանի ներգրավվածության հետ: Պարզ չէ նույնիսկ, թե արդյոք դատարանները դատական նիստ հրավիրում են խախտումները քննարկելու համար: Չնայած երբ կոնկրետ գործի վերաբերյալ այս հարցը տրվեց, մի դատավոր պատասխանեց. «Այո՛, մենք նիստ հրավիրել ենք»: Հանրային պաշտպանները ներկա չեն լինում, սակայն նշել են, որ կգնան, եթե դատարանը կամ մեղադրյալը նման պահանջ ներկայացնեն:

Այն հարցին, թե որքան հաճախ են դատարանները վերացնում հանրային աշխատանք կատարելու մասին որոշումները և կիրառում ազատազրկման ձևով պատիժ, մի մասնակից պատասխանեց, որ դա մոտավորապես տեղի է ունենում գործերի 50%-ի դեպքում: Բացի այդ, ասվել է նաև, որ եթե դատապարտյալը մի քանի անգամ խախտում է փորձաշրջանը՝ առանց քրեական հանցանք կատարելու, ապա ՔՎ-ի ներկայացուցիչը սովորաբար վերացման և ազատազրկման ձևով պատիժ նշանակելու մասին միջնորդություն է ներկայացնում:

Չնայած նրան, որ ենթադրվում է, որ պատիժների նշանակման վերաբերյալ ընդհանուր օրենսդրական դրույթներն այս փուլում կիրառվում են, պարզ չէ, թե

ինչ գործոններ են դատավորներն իրականում հաշվի առնում հատկապես ազատագրկման հետ չկապված պատիժն ի սկզբանե կրող դատապարտյալի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ կրելու մասին որոշում կայացնելիս: Դատավորներից ոմանք նշել են, որ նրանք փորձում են ազատագրկում կիրառել ամենավերջում՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը և խախտումների բնույթը:

## V. Ազատագրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճիռը բողոքարկելու մեխանիզմները

### Գործոն 19. Իրավական պաշտպանության արտակարգ միջոցները

*Ազատագրկման ձևով պատիժը կրող կամ այլ կերպ ազատությունից զրկված անձը հանցագործության կատարման մեջ դատապարտվելուց հետո ունի իրավական մեխանիզմներ դատական մարմնի առջև իրեն ազատությունից զրկելու փաստը բողոքարկելու համար՝ կամ որպես դատավճռի կայացման և բողոքարկման գործընթացի մի մաս, կամ էլ՝ որպես առանձին իրավական գործողություն:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ չեզոք</u>
<p>Հայաստանն այժմ չունի իրավական պաշտպանության արտակարգ միջոցներ սահմանող որևէ սահմանադրական կամ օրենսդրական դրույթ: Այնուամենայնիվ, դատապարտյալները կարող են հատուկ դեպքերում ազատվել պատիժը կրելուց:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայկական օրենսդրությունը հանցագործության կատարման համար դատապարտվելուց հետո ապօրինի ազատությունից զրկումը վիճարկելու արտակարգ իրավական պաշտպանության միջոցներ չի սահմանում: Ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: ՔՐ. ՕՐԵՆՍՍԳԻԲ, հոդված 76(1): Պատժից պայմանական վաղակետ ազատում և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինում դատարանը կիրառում է պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդագրով: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՍԳԻԲ, հոդված 434: Դատապարտյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը նույնպես կարող են միջնորդագիր ներկայացնել: *Նույն տեղը:* Այն դեպքում, երբ ազատագրկման դատապարտված անձը բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա հիվանդացել է խրոնիկ հոգեկան հիվանդությամբ, դատարանը, քրեական պատիժն իրականացնող հիմնարկի վարչակազմի միջնորդագրով կարող է որոշում կայացնել պատիժը հետազայում կրելուց նրան ազատելու մասին: *Նույն տեղը*, հոդված 432: Եթե դատապարտյալն առողջանում է, ապա նա պետք է շարունակի

պատիժը կրել: ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 79: Եթե անձը հանցանք կատարելուց կամ դատավճիռ կայացնելուց հետո հիվանդացել է այլ ծանր հիվանդությամբ, որը խոչընդոտում է պատիժը կրելուն, ապա դատարանը կարող է նրան ազատել պատիժը կրելուց՝ հաշվի առնելով կատարված հանցանքի ծանրությունը, դատապարտյալի անձը, հիվանդության բնույթը և այլ հանգամանքներ: *Նույն տեղը:*

Հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց, բացառությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար 5 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց, դատարանը կարող է ազատել պատիժը կրելուց: Որպես այլընտրանքային տարբերակ, դատարանը կարող է հետաձգել պատիժը մինչև երեխայի 3 տարեկան դառնալը: ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 78:

Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձը կարող է ազատվել պատժից, եթե հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անձի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի հետագա կրումը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների: ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 80:

Դատարանը կարող է նաև հետաձգել պատժի կատարումը, եթե պատժի կատարումն իրականացնող մարմինը, դատապարտյալը կամ նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը հետաձգման միջնորդություն է ներկայացնում: Դատարանը կարող է ազատազրկման ձևով պատժի կատարման հետաձգումը վերացնել՝ պատժի կատարումն իրականացնող մարմնի միջնորդությամբ: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՊԻՐՔ, հոդված 433:

## **Գործոն 20. Ազատազրկման ձևով պատիժ նշանակելու մասին դատավճռի բողոքարկումը**

*Ազատազրկման ձևով պատիժը կրող անձինք իրենց նկատմամբ նշանակված պատժի իրավական և փաստական հանգամանքները վերադաս դատական մարմնի կողմից վերանայելու, այդ թվում՝ ազատազրկման հետ չկապված միջոցներ կիրառելու պահանջի իրավունք ունեն:*

***Եզրակացություն***

***Հարաբերակցությունը՝ չեզոք***

Չնայած նրան, որ բողոք բերելու իրավունքը նախատեսված է օրենքով, սակայն բողոքարկման հետ կապված խիստ իրավական ընթացակարգերը հետևողականորեն չեն պահպանվում բոլոր դատարանների կողմից:

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Դատավճիռը հրապարակելուց հետո 1 ամսվա ընթացքում դատապարտյալը կարող է բողոք բերել դրա դեմ՝ պահանջելով վերանայել դատապարտման հիմքում ընկած փաստական հանգամանքների, ինչպես նաև քրեական և դատավարական օրենքի կիրառման ճշտությունը: ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍՍԳԻՐԲ, հոդվածներ 376, 379, 386: 10-օրյա ժամկետը կիրառվում է, երբ դատապարտյալի՝ ազատազրկման հետ չկապված պատիժը վերացվում է և նշանակվում է ազատազրկման ձևով պատիժ: *Նույն տեղը*, հոդված 379(3): Վերաքննիչ դատարանը կարող է նաև վերանայել այն հոդվածը, որով մեղադրանք է առաջադրվել մեղադրյալին: *Նույն տեղը*, հոդված 397: Բացառիկ դեպքերում վերաքննիչ դատարանը կարող է նաև վերանայել նոր ապացույցները: *Նույն տեղը*, 381(6), 382(3), 385, 391: Վերաքննիչ դատարանը կարող է բեկանել կամ փոփոխել առաջին ատյանի դատարանի կայացրած դատական ակտը, եթե գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին, ճիշտ չի կիրառվել քրեական օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, առկա է քրեադատավարական օրենքի էական խախտում կամ դատավճռով նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը և ամբաստանյալի անձին: *Նույն տեղը*, հոդված 395: Վերաքննիչ դատարանն իրավունք ունի գործի քննության արդյունքներով առաջադրված մեղադրանքի սահմաններում կիրառել ավելի ծանր հանցագործության համար օրենք կամ նշանակել ավելի խիստ պատիժ միայն այն դեպքում, երբ այդ հիմքերով բողոք է բերել մեղադրողը, ինչպես նաև տուժողը կամ նրա ներկայացուցիչը: *Նույն տեղը*, հոդված 397: Վերաքննիչ դատարանը կարող է մեղմացնել պատիժը՝ հաշվի առնելով պատժի խստությունը և ամբաստանյալի անձը: *Նույն տեղը*, հոդված 399: Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 1-ամսյա ժամկետում: Վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում ուղարկվում է դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին և օրինական ներկայացուցիչներին, մեղադրողին, տուժողին և նրա ներկայացուցչին, ինչպես նաև քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, եթե նրանք մասնակցել են գործի քննությանը վերաքննիչ դատարանում: *Նույն տեղը*, հոդված 402: Մեղադրյալի պաշտպանի կողմից վճռաբեկ բողոք կարող է բերվել, եթե տեղի է ունեցել

նյութական կամ դատավարական իրավունքի խախտում կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների դեպքում, որը կարող է ազդել գործի ելքի վրա: *Նույն տեղը*, հոդված 406: Եթե վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանները որոշում են կայացնում ամբաստանյալին արդարացնելու կամ նրան պատժից ազատելու մասին, ապա ամբաստանյալն անմիջապես ազատվում է: *Նույն տեղը*, հոդված 427(3):

Պետք է նշել, որ դատախազը ևս կարող է բողոքարկել չափազանց մեղմ թվացող պատիժը, ինչպես նաև արդարացման դատավճիռները: *Տե՛ս ԴԱՏԱ-ԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ*, հոդված 28:

Վերաքննիչ դատարանի մի դատավոր նշել է, որ բողոքները մեծամասամբ վերաբերում են պատժի խստությանը (կամ հակառակը) կամ այն արարքին, որի կատարման մեջ մեղադրյալը մեղադրվում է: Նշվել է նաև, որ վերաքննիչ դատարանները բավականին մեղմ են վերաբերվում այն հարցին, թե ինչ բողոքներ պետք է քննության առնվեն և հիմնականում չեն մերժում այն դիմումները, որոնք իրավական տեսանկյունից կարող են համապատասխան չլինել: Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համաձայն, 2010թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզերում հանրային պաշտպանները բերել են 25 վերաքննիչ բողոք, որից 5-ն են բավարարվել: Նույն ժամանակահատվածում Երևանի ՀՊԳ-ն ներկայացրել է 50 վերաքննիչ բողոք, որից 11-ն են բավարարվել, ինչպես նաև ներկայացրել է 22 բողոք Վճռաբեկ դատարան, որից 2-ն են բավարարվել:

**Գործոն 21. Նախագահի կողմից ներում շնորհելը**

*Հանցագործության համար դատապարտված անձինք ներման, համաներման կամ պատժի փոփոխման վերաբերյալ խնդրագիր ներկայացնելու հնարավորություն ունեն: Նախագահի կողմից շնորհվող ներումը չի կիրառվում որպես պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ ազատագրկման մյուս այլընտրանքների փոխարինող:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Բացակայում են թափանցիկ, հասարակությանը հայտի ընթացակարգեր ու քննարկումներ, որոնց գործադիր և օրենսդիր իշխասանությունները հետևում են ներման կամ համաներման մասին խնդրագրերը հաշվի առնելիս:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Հայաստանի Հանրապետության Նախագահը Սահմանադրությամբ լիազորված է ներում շնորհել դատապարտյալներին: ՄԱՀՄ. հոդված 55(17): *Տե՛ս* նաև ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 83: Նախագահը կարող է մասնակիորեն ազատել հանցագործության համար դատապարտված անձին հիմնական կամ լրացուցիչ պատժից, փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով, վերացնել դատվածությունը կամ նրանց, ովքեր արդեն կրել են իրենց պատիժը ազատել պատժի արդյունքում նշանակված նյութական վնասը հատուցելուց: ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱԳՐԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ, թիվ ՆՀ-183-Ն (*ընդունվել է* 2003թ. նոյեմբերի 19-ին) (այսուհետ՝ ՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ): Դատապարտյալը կարող է օրենսդիր մարմնի կողմից լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 82:

Ներման մասին հրամանագրում նշվում է, որ Նախագահը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի կատարված հանցագործության բնույթին, հանրության համար վտանգավորության աստիճանին, դատապարտյալի անձին, աշխատանքի հանդեպ ունեցած նրա վերաբերմունքին, ընտանեկան պայմաններին, դատապարտյալի ընտանիքի սոցիալական վիճակին և ուշադրության արժանի այլ հանգամանքներին: Գործնականում, այնուամենայնիվ, քիչ սահմանափակումներ են դրված գործադիրի վրա կապված ներման ինստիտուտի կիրառման հետ, հատկապես քննության արժանի հանգամանքների առումով, օրինակ՝ հանցագործության ծանրությունը, խնդրագիր ներկայացրած անձի նախկինում դատված լինելը կամ տուժողների կարծիքները: Ներման ակտով ավելի հաճախ ազատվում են անչափահաս կամ տարեց դատապարտյալները:

Ներման մասին հրամանագրում նախատեսված է հետևյալը՝ այն անձանց, որոնց նախկինում ներում է շնորհվել կամ որոնց նկատմամբ նախկինում կիրառվել է համաներում կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով, եթե նրանք մինչև դատվածության մարումը կամ վերացումը նորից դիտավորյալ հանցագործություն են կատարել, կարող է ներում շնորհվել միայն բացառիկ դեպքերում: Ներման խնդրագրերն ուղարկվում են Հանրապետության Նախագահին համապատասխան քրեակատարողական մարմնի վարչակազմի կողմից: Վերջինս խնդրագրին կից ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթեր դատապարտյալի անձի և այլ տվյալների մասին: Խնդրագրերը քննարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ներման հարցերով հանձնաժողովում: Հանձնաժողովը կազմավորում է Նախագահը, իսկ որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց խնդրա-

գրերն ուղարկվում են Վճռաբեկ դատարանի նախագահին և Արդարադատության նախարարին՝ կարծիք և առաջարկություններ ստանալու նպատակով, ովքեր երկշաբաթյա ժամկետում իրենց վերլուծություններն ու առաջարկներն են տրամադրում դատապարտյալի կողմից կատարված հանցագործության հանգամանքների, ինչպես նաև դատապարտյալի մասին այլ տվյալների վերաբերյալ: Ներման խնդրագրերը կարող են ուղարկվել նաև Գլխավոր դատախազություն, Ազգային անվտանգության ծառայություն կամ Արդարադատության խորհուրդ՝ կարծիք ներկայացնելու համար: Ներման խնդրագրերը հանձնաժողովի առաջարկություններով հանդերձ ուղարկվում են Նախագահի քննարկմանը: Ներման խնդրագրերը բավարարելու կամ մերժելու մասին Նախագահը հրապարակում է հրամանագրեր: Ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե ուշադրության արժանի նոր հանգամանքներ չկան, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմի ներկայացված ներման նոր խնդրագրերը Նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից 1 տարի անց, իսկ այլ հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված նոր խնդրագրերը՝ 6 ամիս անց: Ներման խնդրագրերը բավարարելու մասին Նախագահի հրամանագրերն ի կատար են ածվում անհապաղ: Նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարզնեղի և կոչումների վարչությունը պատասխանատու է Նախագահի ներման մասին հրամանագրերի պատշաճ կատարումը վերահսկելու համար:

Ի հավելումն գործադիր ներման, գործում է նաև անձի ազատումը քրեական պատասխանատվությունից օրենսդրությամբ ընդունված համաներման ակտով: *Տե՛ս ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐՔ*, հոդված 82: Ներման կամ համաներման դեպքերում անձը կարող է ազատվել պատժից, նրա պատիժը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժով կամ կարող է վերացվել դատվածությունը: *Տե՛ս նույն տեղը* հոդվածներ 82, 83:

Ըստ ստացված տեղեկությունների, վերջինս կարող է, սակայն, խնդիրներ առաջ քաշել այն դեպքերում, երբ անձը կրկին հանցագործություն կատարի, իսկ նախկին դատվածությունը չի կարող հաշվի առնվել երկրորդ արարքը խստացնելու համար: Այն չի կարող կիրառվել որպես ծանրացուցիչ հանգամանք երկրորդ գործում մեղադրանք առաջադրելիս և/կամ պատիժ նշանակելիս: *Տե՛ս ՔՐ. ՕՐԵՆՍՊԻՐՔ*, հոդված 84:

## VI. Ազատագրկման ձևով պատիժը կրելու պրակտիկան

### Գործոն 22. Ազատագրկման ձևով պատիժը կրելու ժամանակ գործող ընթացակարգերը

*Ազատությունից զրկված անձանց տարբեր կատեգորիաներ պահվում են առանձին հիմնարկներում կամ դրանց հատվածներում: Մեկուսի բանտարկությունն արգելված է կամ դրա կիրառումը չափազանց սահմանափակ է:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ չեզոք</u>
<p>Դատապարտվելուց հետո տարբեր կատեգորիաների դատապարտյալներ ընդհանուր առմամբ առանձնացված են ըստ օրենքի, իսկ մեկուսի բանտարկությունը և այլ կոպիտ միջոցների կիրառումը սահմանափակ է: Ձերբակալման և մինչդատական փուլերում ազատությունից զրկելու պատշաճ ընթացակարգերն ամրագրված են օրենքով, սակայն դրանք սովորաբար չեն պահպանվում:</p>	

#### Վերլուծություն/Նախադրյալներ.

Ուղղիչ հիմնարկներում սահմանված կանոնակարգի նպատակն է ապահովել ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու՝ մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններ, նվազեցնել ազատագրկման մեջ գտնվելու հոգեբանական ազդեցությունը, ապահովել կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, աջակցել դատապարտյալին՝ նրանում զարգացնելու այնպիսի հմտություններ և ունակություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպելու հետագա կյանքը: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍ-ԳԻՐՔ, հոդված 70(2): Կանոնակարգի հիմնական պահանջներն են դատապարտյալի մեկուսացումը հասարակությունից և սույն օրենսգրքով սահմանված դեպքերում՝ այլ դատապարտյալներից, ինչպես նաև դատապարտյալի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարման ապահովումը, դատապարտյալին պահելու տարբեր պայմանների նախատեսումը՝ ելնելով դատապարտյալի անձից և նրա վարքագծից, կատարված հանցագործության բնույթից ու հասարակական վտանգավորության աստիճանից, ինչպես նաև նրա նկատմամբ հսկողություն սահմանելը՝ նրա կողմից նոր հանցագործություններ բացառելու նպատակով: Նույն տեղը, հոդված 70(3): Բացի Քրեակատարողական օրենսգրքում սահմանված կանոնակարգի, ուղղիչ հիմնարկում սահմանվում է նաև ներքին կանոնակարգ, որը նախատեսում է դատա-

պարտյալին ուղղիչ հիմնարկ ընդունելու կարգը, դատապարտյալի վարքագծի կանոնները, դատապարտյալին արգելված առարկաների ցանկը, արգելված առարկաներն առգրավելու, դատապարտյալի և ուղղիչ հիմնարկում նրա կացարանի խուզարկության, տեսակցության, հեռախոսակապից օգտվելու, նամակագրության կարգը, օրվա կարգացուցակը: *Նույն տեղը*, հոդված 72(1): Ներքին կանոնակարգը փակցվում է ուղղիչ հիմնարկի՝ բոլորի համար տեսանելի վայրերում, և դատապարտյալները կարող են լրացուցիչ տեղեկություն ստանալու ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի մասին: *Նույն տեղը*, հոդված 72(2):

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի ուղղիչ հիմնարկների 5 տեսակ՝ բաց ուղղիչ հիմնարկ, կիսաբաց ուղղիչ հիմնարկ, կիսափակ ուղղիչ հիմնարկ, փակ ուղղիչ հիմնարկ և բուժական ուղղիչ հիմնարկ: *Նույն տեղը*, հոդված 99: Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշում է ԱՆ Քրեակատարողական ծառայությունում գործող տեղաբաշխման հանձնաժողովը՝ անգուշույթյամբ կատարած հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ բաց ուղղիչ հիմնարկ, դիտավորյալ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ դատապարտվելու դեպքում՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկ, առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ կիսափակ ուղղիչ հիմնարկ, առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց ավելի ժամկետով կամ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ փակ ուղղիչ հիմնարկ: *Նույն տեղը*, հոդված 100(2): Բուժօգնության կարիք ունեցող դատապարտյալները տեղավորվում են բուժական ուղղիչ հիմնարկում: *Նույն տեղը*: Բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պահվում են բնակելի կացարանում, ունեն հիմնարկում ազատ տեղաշարժվելու իրավունք, ինչպես նաև կարող են թույլտվություն ստանալ դուրս գալու հիմնարկից: Կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պահվում են բնակելի կացարաններում և ունեն ցերեկային ժամերին ազատ տեղաշարժվելու իրավունք հիմնարկի ներսում: Կիսափակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալները պահվում են մի քանի մարդու համար նախատեսված մեկուսացված խցերում և ցերեկային ժամերին ունեն առնվազն 3 ժամ ազատ տեղաշարժվելու իրավունք սահմանափակ վայրերում, իսկ փակ ուղղիչ հիմնարկի դատապարտյալները պահվում են մի քանի մարդու համար նախատեսված մեկուսացված խցերում և հիմնարկի պետի որոշմամբ կարող են միայնակ պահվել խցում: *Նույն տեղը*, հոդվածներ 103-106:

Տեղաբաշխման հանձնաժողովը կարող է տեղափոխել դատապարտյալներին, այդ թվում նաև՝ անչափահաս դատապարտյալներին, մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ՝ հիմք ընդունելով դատապարտյալի դրսևորած դրական վարքագիծը կամ տվյալ ուղղիչ հիմնարկում կրած պատժի

մասը: *Նույն տեղը*, հոդված 102(1): Բացի այդ, հանձնաժողովը կարող է տեղափոխել դատապարտյալներին, այդ թվում նաև՝ անչափահաս դատապարտյալներին, մեկուսացվածության առավել բարձր աստիճանի ուղղիչ հիմնարկ՝ հիմք ընդունելով դատապարտյալի դրսևորած բացասական վարքագիծը կամ նրա դիմումը (օրինակ՝ անվտանգության պատճառներից ելնելով), բացառությամբ անզուլության կատարված հանցագործության համար դատապարտված անձի, որի նկատմամբ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը չի կարող փոխվել կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկի, իսկ անզուլությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անչափահասը չի կարող տեղափոխվել մեկուսացվածության առավել բարձր աստիճանի ուղղիչ հիմնարկ: *Նույն տեղը*, հոդված 102(2): Տարբեր մեկուսացվածության աստիճանի ուղղիչ հիմնարկները գտնվում են միևնույն քրեակատարողական համալիրում. այսինքն՝ մեկուսացվածության այլ աստիճանի տեղափոխումը ընդհանուր առմամբ չի նշանակում, որ դատապարտյալը տեղափոխվում է մեկ այլ հաստատություն:

Ուղղիչ հիմնարկում տարբեր դասի պատկանող դատապարտյալները պահվում են անջատ՝ տղամարդիկ՝ կանանցից, անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ այն չափահասների, ովքեր դատավճռի կայացման պահին եղել են անչափահաս, ուստի կարող են մնալ անչափահասների համար նախատեսված ուղղիչ հիմնարկում մինչև 18-21 տարեկանը, առաջին անգամ ազատազրկման դատապարտված անձինք, բացի առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձանցից՝ նախկինում ազատազրկման ձևով պատիժ կրած դատապարտյալներից, շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող դատապարտյալը՝ մյուս դատապարտյալներից, դատապարտյալը, որի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, մյուս դատապարտյալներից, անզուլությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձինք՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձանցից, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձինք՝ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանցից: *Նույն տեղը*, հոդված 68(1): Դատապարտյալները կարող են մասնակցել սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների, աշխատանքային, կրթական, մշակութային և մարզական միջոցառումների այն դատապարտյալների հետ, ումից նրանք, որպես կանոն, անջատ են պահվում: *Նույն տեղը*, հոդված 68(3): Դատապարտյալները կարող են տեղափոխվել մեկ այլ ուղղիչ հիմնարկ արտակարգ դեպքերում, ինչպիսիք են նրա առողջության կամ անձնական անվտանգության հետ կապված դեպքերը: *Նույն տեղը*, հոդված 69:

Դատապարտյալը կարող է տեղափոխվել մեկուսացվածության առավել բարձր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ չարամտորեն կատարված խախտումների համար, այդ թվում՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, անհնազանդությունը կամ անհարգալից վերաբեր-

մունքը, անհնազանդություններ կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, ինչպես նաև 1 տարվա ընթացքում պատժի կրման սահմանված կարգի 2 կամ ավելի խախտումները, եթե դրանցից յուրաքանչյուրի համար դատապարտյալը ենթարկվել է տույժի: *Նույն տեղը*, հոդված 96(1): Դատապարտյալի նկատմամբ կարող են նույն ուղղիչ հիմնարկում կիրառվել տույժի միջոցներ՝ նրան որոշակի ժամկետով պատժախուց տեղափոխելով: Կիրառվող տույժը պետք է համապատասխանի կատարած խախտման ծանրությանը և բնույթին, կիրառվի խախտումը կատարած անձի նկատմամբ այն հայտնաբերելուց հետո ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում, ինչպես նաև կատարվի գրավոր: Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախաձննդյան կամ հետձննդյան ժամանակահատվածում գտնվող դատապարտյալը պատժախուց չի տեղափոխվում: *Նույն տեղը*, հոդված 97: Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, նամակագրություն վարելը, կամ զանգվածային լրատվությունից օգտվելը, սակայն նա իրավունք ունի սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու, ինչպես նաև օգտվելու 1 ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքից: *Նույն տեղը*, հոդված 98: Պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության ներքո: Նրա նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է դադարեցվել բժշկի եզրակացության հիման վրա: *Նույն տեղը*:

Դատապարտյալի որոշ իրավունքներ, ինչպիսիք են՝ տեսակցությունները կամ նամակագրություն վարելը, կարող են կասեցվել արտակարգ իրավիճակների դեպքում, որը հայտարարվում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի կողմից տարերային աղետների, ռազմական դրության, զանգվածային անկարգության, ինչպես նաև դատապարտյալների զանգվածային անհնազանդության, ուղղիչ հիմնարկի վրա հարձակման իրական վտանգի դեպքերում: *Նույն տեղը*, հոդված 71(1), (3): Արտակարգ իրավիճակ հայտարարվում է մինչև 30 օր ժամկետով և կարող է երկարաձգվել ևս մինչև 30 օրով, իսկ հակահամաճարակային նպատակներով՝ մինչև դրա անհրաժեշտությունը վերանայր: *Նույն տեղը*, հոդված 71(2): Դատապարտյալների կյանքին և առողջությանը սպառնացող անմիջական վտանգ ծագելու դեպքում ուղղիչ հիմնարկի վարչակազմը կարող է միջոցներ ձեռնարկել նրանց իրավունքները սահմանափակելու ուղղությամբ և պարտավոր է անհապաղ տեղեկացնել քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարին և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարին: *Նույն տեղը*, հոդված 71(4): Արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում ուղղիչ հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է դատապարտյալներին: *Նույն տեղը*, հոդված 71(5):

Մտացված տեղեկությունների համաձայն, Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում օրենքով նախատեսված ազատագրկման ընթացակարգերը ընդհանուր առմամբ պահպանվում են, թեև մարդաշատության արդյունքում երբեմն տարբեր կատեգորիաների դատապարտյալները միասին են պահվում:<sup>16</sup> Բացի այդ, տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ դատապարտյալներին անհրաժեշտ բժշկական օգնություն չի տրամադրվում: Ոմանք կարծում են, որ բժշկական օգնության մերժումը կապված է քաղաքական բանտարկյալներից կամ այն բանտարկյալներից, որոնց տուժողները քաղաքական կապեր ունեն, հաշվեհարդար տեսնելու հետ: *Տե՛ս*, օրինակ, Ազատություն ռադիոկայան, *Եվրոպական դատարանը հետմահու բավարարեց Աշոտ Հարությունյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության* (հունիսի 16, 2010թ.):

Իրավիճակն ավելի խնդրահարույց է ձերբակալման և մինչդատական փուլերում: Արգելանքի տակ վերցնելու պահից անձինք կարող են մինչև 3 ժամ պահվել հետաքննության մարմնի կողմից, որի ընթացքում կազմվում է ձերբակալելու մասին արձանագրություն: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 131<sup>1</sup>: «Ձերբակալումը» հանցագործության կատարման վայրում կամ խուզարկությունից հետո կասկածյալին բռնելն է, որն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրերում (ՁՊՎ): ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 133: Երևանում կա 1 կենտրոնական ՁՊՎ, իսկ մարզերում ՁՊՎ-ները գտնվում են ոստիկանության բաժանմունքներում: Ըստ օրենքի, ձերբակալումը չի կարող տևել կասկածյալին արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 129, 130, *տե՛ս* նաև վերևում՝ Գործոն 7: Ձերբակալվածները ենթարկվում են սանիտարական մշակման, մատնադրոշման, լուսանկարման և խուզարկության: Ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ հիվանդության նշաններ կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում հրավիրվում է բուժաշխատող: Ձերբակալված անձը կարող է ընտրել իր բժշկին, իսկ բժշկական գնությունը կարող է իրականացվել ՁՊՎ-ի վարչակազմի լսելիության սահմաններից դուրս: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՇՏԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ, կետ 12, 13, 15-17 (այսուհետ՝ ՁՊՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ): Ձերբակալվածն իրավունք ունի տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց դրա թվի և տևողության սահմանափակման, ՁՊՎ-ի վարչակազմի լսելիության սահմաններից դուրս, *նույն տեղը*, կետ 53, ինչպես նաև տեսակցել մերձավոր ազգականի հետ՝ մերձավոր ազգականի

<sup>16</sup> Հայաստանի քրեակատարողական հիմնարկների պայմանների վերաբերյալ մանրամասն գնահատումների համար, որը դուրս է սույն զեկույցի շրջանակներից, *տե՛ս* ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի «ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգը 2008թ.-ին» զեկույցը (2009թ.) (այսուհետ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2008թ.-ին, ԶԵԿՈՒՅՑ):

դիմումի հիման վրա: *Նույն տեղը*, կետ 53-58: Դատախազը, քննիչը կամ դատարանը իրավասու են ՁՊՎ-ի վարչակազմին տալ ցուցումներ՝ մեկ քրեական գործով, ինչպես նաև իրար հետ կապված մի քանի քրեական գործերով կասկածյալներին միմյանցից անջատ պահելու մասին: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՍԳԻՐՔ, հոդված 137(3):

Կասկածյալին մեղադրանք առաջադրելուց հետո նրան տեղափոխում են կալանավորվածներին պահելու վայր: Մինչդատական վարույթում կալանքի տակ գտնվող անձինք կալանավայրում կարող են պահվել 2 ամիս ժամկետով, որը կարող է երկարացվել մինչև 6 կամ 12 ամիս ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում: ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍՍԳԻՐՔ, հոդված 138, *տե՛ս* նաև վերևում՝ Գործոն 8: Դատաքննության փուլում կալանավորման ժամկետի վերաբերյալ օրենքով նախատեսված սահմանափակում չկա: Գործնականում մինչդատական վարույթում կալանավորված անձինք պահվում են քրեակատարողական հիմնարկների առանձին հատվածում, որոնց նկատմամբ գործում են այն նույն ընթացակարգերը, ինչը դատապարտյալների նկատմամբ է գործում: Կալանավորվածներին պահելու վայրը պատասխանատու է ապահովել կալանավորված անձանց անվտանգությունը, հանձնել նրանց համար ստացվող դատավարական փաստաթղթերը, թույլատրել անարգել առանձին տեսակցել պաշտպանի հետ՝ առանց դրա թվի և տևողության սահմանափակման, ապահովել նրա ներկայությունը դատավարական գործողություններին, անհապաղ ազատ արձակել անօրինական կալանքի տակ գտնվող, գրավ հանձնած անձանց կամ նրանց, ում կալանքի տակ պահվելու ժամկետը լրացել է: *Նույն տեղը*, հոդված 141:

Գործնականում, համաձայն ստացված տեղեկությունների, որպես կանոն, ՁՊՎ-ում պատշաճ ընթացակարգերը չեն պահպանվում: Տրամադրված տեղեկությունների համաձայն, տարածված է անձին առանց «կասկածյալի» պաշտոնական կարգավիճակ տալու պահելը, որպեսզի խուսափեն ձերբակալման համար նախատեսված 72-ժամյա ժամկետը սկսելուց և դրա հետ կապված իրավական պահանջներից: Նշվել է նաև ՁՊՎ-ներում պահվող անձանց նկատմամբ ցուցմունք տալու նպատակով ֆիզիկական ճնշումների, ինչպես նաև բուժօգնության տրամադրման հրաժարման դեպքերի տարածված լինելու մասին: ՀՔԾ-ն ընկալվում է որպես լավագույն դեպքում արդյունավետորեն գործող մարմին, իսկ վատագույն դեպքում՝ ներգրավված է հետաքննության մարմնի անիրավաչափ գործողությունները թաքցնելու մեջ:

Կալանավորվածներին պահելու վայրերը, համաձայն ստացված տեղեկությունների, հաճախ ի վիճակի չեն պահպանել դատավարական ընթացակարգերը՝ ելնելով այնպիսի պայմաններից, ինչպիսիք են մարդաշատությունը կամ ռեսուրսների պակասը: Մարզերում հարցազրույցների մասնակիցները հատուկ նշել են կալանավորված անձանց դատարան տեղափոխելու հետ

կապված դժվարությունների մասին, որոնք պայմանավորված են վառելիքի բարձր գներով, կալանավորված անձանց ուղեկցող աշխատողների քիչ թվով, ինչպես նաև դատարանի և կալանավայրի միջև եղած հեռավորությամբ: Մասնակիցները հայտնել են, որ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի և աշխատակազմի շրջանում ընդունված է գործել հոգուտ մեղադրողի՝ խրախուսելով կալանավորված անձին խոստովանել կատարած հանցանքը, օգտագործելով բժշկին կամ հոգեբանին հայտնած տեղեկությունները նրա դեմ, կարդալով նրա անձնական նամակագրությունը և նույնիսկ գաղտնալսելով պաշտպանի հետ ունեցած հանդիպումները: Գործնականում մինչդատական վարույթում կալանքի տակ պահվող անձինք անջատ են պահվում դատապարտյալներից, թեև նրանք հաճախ գտնվում են նույն տարածքում: Տարբեր կատեգորիաների կալանավորված անձինք պահվում են առանձին տարածքում:

**Գործոն 23. Բողոքարկման մեխանիզմները**

*Ինչպես ուղղիչ հիմնարկի ներսում, այնպես էլ դատական համակարգում ազատությունից զրկված անձանց համար գործում են դաժան վերաբերմունքի և բռնության այլ դեպքերի համար իրավական պաշտպանության միջոցների դիմելու մեխանիզմներ:*

<u>Եզրակացություն</u>	<u>Հարաբերակցությունը՝ բացասական</u>
<p>Հայաստանի օրենքը չի նախատեսում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ կալանավորման կամ ազատազրկման ձևով պատիժը կրելու ժամանակ գործադրված բռնության դեպքերի կամ այլ խախտումների համար: Կալանավորված անձանց պահելու վայրերը որպես կանոն ունեն բողոք ներկայացնելու համար սահմանված կարգ, որից միշտ չէ, որ կալանավորված անձինք օգտվում են կամ դա պահպանվում է աշխատակազմի կողմից: Ձերբակալման ժամանակ հաճախ դատավարական ընթացակարգերը չեն պահպանվում, իսկ բռնության դեպքերի հետաքննությամբ զբաղվող ոստիկանության բաժինը, համաձայն տրամադրված տեղեկությունների, անարդյունավետ է գործում:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է դատախազությունը: ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 46, ԴՍԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ,

հողված 4: Այնուամենայնիվ, անձինք, ովքեր պաշտպանություն են փնտրում կալանավորման կամ ազատագրկման ժամանակ տեղի ունեցած ապօրինի վերաբերմունքի կամ օրենքի այլ խախտման հարցում, դժվար թե Հայաստանի օրենքով նախատեսված իրավական պաշտպանության միջոց գտնեն: Կալանավորվածներն ու դատապարտյալները որևէ իրավական պաշտպանության միջոց չունեն, որպեսզի հայց ներկայացնեն իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար: Փաստաբանները ստիպված են հույսը դնել Խոշտանգումների դեմ կոնվենցիայի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կամ այլ միջազգային համաձայնագրերի վրա: Միակ բացառությունն այն է, որ օրենքով, երբ անձն արդարացվում է, նա տեսականորեն իրավունք ունի հայց ներկայացնել սխալի կամ անօրինական գործողության հետևանքով իրեն պատճառված վնասը հատուցելու համար, ՔՐ. ԴՍ. ՕՐԵՆՍԳԻՔ, հողվածներ 66, 67, սակայն հարցազրույցի մասնակիցներին միայն մեկ դեպք էր հայտնի, երբ արդարացված անձը հաջողությամբ փոխհատուցվել է իրեն հասցրած վնասի համար: *Տե՛ս* վերևում՝ Գործոններ 8, 11: Նշվել է, որ այս գործով ապօրինի կալանքի տակ պահված անմեղ մարդուն, որին ստիպել էին խոստովանել, դատախազը Ալեքսանդր Դյումայի *Կոմս Մոնտե-Քրիստո*՝ սպանության համար սխալմամբ բանտարկված մարդու վրեժի մասին դասական վեպն է նվիրել՝ ասելով, որ դա նրա «հատուցումն» է<sup>17</sup>: Ավելի ուշ նրան հատուցել են վնասները՝ իր կալանքի տակ եղած ժամանակահատվածում կորցրած եկամուտները:

ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողները պարտավոր են ձեռքակալվածներից ընդունել առաջարկություններ, դիմումներ և բողոքներ և հանձնել դրանք այն մարմիններին, ում հասցեագրված են: Եթե դրանք հասցեագրված են ՁՊՎ-ին, ապա այդ մասին զեկուցվում է ոստիկանության տարածքային բաժնի պետին: ՁՊՎ ԿԱՆՈՆՆԵՐ, կետ 46-48: ՁՊՎ-ն հոգում է առաջարկությունների, դիմումների և բողոքների ուղարկման ծախսերը, եթե ձեռքակալվածը համա-

<sup>17</sup> Համաձայն ՄԻԵԴ-ում գտնվող նրա գործի փաստերի արձանագրության, Արմեն Պողոսյանը՝ ներգրավված անձը, 1998թ.-ին դատապարտվել է բռնաբարության և սպանության համար, սակայն Վճռաբեկ դատարանը բեկանել է այդ դատավճիռը 2004թ.-ին: Մեղադրանք է առաջադրվել քննիչի և ոստիկանության ծառայողների հանդեպ, և 2 ծառայողներ դատապարտվել են Լոռու տարածքային դատարանում՝ պրն. Պողոսյանին անօրինական կալանքի ենթարկելու և վատ վերաբերվելու համար՝ ստիպելով նրան խոստովանել: Դատարանը կիրառել է համաներում, որպեսզի դատապարտված ծառայողները ստիպված չլինեն կրել իրենց պատիժը: Պարոն Պողոսյանը քաղաքացիական հայց է ներկայացրել դատարան և ստացել 6,250,000 ՀՀ դրամ (16,361 ԱՄՆ դոլար) 1998թ.-ի հոկտեմբերի 11-ից մինչև 2004թ.-ի ապրիլի 14-ը ընկած ժամանակահատվածում՝ իր՝ կալանավայրում գտնվելու ընթացքում, կորցրած եկամուտների փոխհատուցման համար: Այժմ նրա գործը գտնվում է ՄԻԵԴ-ում: *Տե՛ս* Փաստերի արձանագրություն *Արմեն Պողոսյան և Անահիտ Բաղդասարյան ընդդեմ Հայաստանի*, համար 22999/06 (ընթացքում):

պատասխան միջոցներ չունի: *Նույն տեղը*, կետ 51: Արգելվում է դիմումներ, բողոքներ և առաջարկություններ ներկայացնող ձեռքակալվածների նկատմամբ հետապնդումը: *Նույն տեղը*, կետ 52: Գործնականում, սակայն, այս ընթացակարգերը գրեթե ամենուր անտեսվում են: ՀՔԾ-ն պատասխանատու է իրականացնել պետական պաշտոնյաների կողմից ցուցաբերված դաժան վերաբերմունքի նախաքննությունը, սակայն գործնականում հարցազրույցների մասնակիցները նշել են, որ այս օղակը այնքան չի զբաղվում դաժան վերաբերմունքի նախաքննությամբ, որքան զբաղված է այն պարտակելով: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի մի ծառայող հայտնել է, որ նորեկ կալանավորվածների ֆիզիկական վիճակը ժամանման պահին փաստաթղթավորվում է, որպեսզի կալանավայրի աշխատակազմը չմեղադրվի կալանավորվածի նկատմամբ բռնություն գործադրելու համար պատասխանատու լինելու մեջ այն դեպքում, երբ դա տեղի է ունեցել ոստիկանության բաժանմունքում կամ ՁՊՎ-ում:

Նույն կերպ, կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է կալանավորված անձանց՝ դատարանին, դատախազին, քննիչին կամ հետաքննության մարմնին հասցեագրված բողոքները և հայտարարությունները գրանցել և ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում դրանք ուղարկել ըստ պատկանելության՝ առանց դրանք ստուգելու կամ գրաքննության ենթարկելու: ՔՐ.ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐԲ, հոդված 141: Տրամադրված տեղեկությունների համաձայն, բռնությունները տարածված են ձեռքակալման և նախնական կալանքի ժամանակ, մինչդեռ մինչդատական վարույթում կալանավորման և ազատագրվման ժամանակ դրանք ավելի քիչ են պատահում: Այնուամենայնիվ, դիտորդական խումբը նկատել է, որ կալանավորվածները և դատապարտյալները չեն ցանկանում բողոք ներկայացնել կամ հայտնել իրենց կամ մյուս դատապարտյալների նկատմամբ գործադրված բռնության դեպքերի մասին: Չնայած այն բանին, որ ծառայողները պարտավոր են զեկուցել դատախազությանը բռնության դեպքերի մասին, նրանք հաճախ պատշաճ կերպով չեն գրանցում այդ դեպքերը, իսկ բուժանձնակազմն էլ չի գրանցում դատապարտյալների վրա հայտնաբերված մարմնական վնասվածքների առկայությունը: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2008Թ.-ԻՆ ԶԵԿՈՒՅՑ:

Քրեակատարողական հիմնարկները սահմանում են բողոքների քննության իրենց սեփական մեխանիզմները՝ որպես վերը նշված Գործոն 22-ում քննարկված կանոնակարգերի մաս: Որպես կանոն, դատապարտյալները կարող են անմիջականորեն բողոքել քրեակատարողական հիմնարկի ղեկավարին, ով որոշում է կայացնում, թե արդյոք պետք է իրավիճակը շտկել և ինչպես պետք է դա արվի: Գոյություն չունի որևէ անկախ մարմին, որը զբաղվում է կալանավորվածներին պահելու վայրի աշխատակազմի կողմից կալանավորվածների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի քննությամբ:

Խոշտանգումը, որը սահմանվում է որպես այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, Հայաստանում քրեականացված է: *Տե՛ս* ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 119, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 11(7): Հարցազրույցի մասնակիցներին միայն 1 դեպք էր հայտնի, երբ պետական պաշտոնյաները դատական կարգով հետապնդվել են խոշտանգման հանգեցնող գործողությունների համար: Այդ գործով զինվորական ոստիկանության ծառայողները դատապարտվել են իշխանության չարաշահման հետևանքով կասկածյալին և 2 վկաններին մահացու ծեծելու համար նրանցից խոստովանություն ստանալու նպատակով: *Միշտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*, դիմում համար 36549/03 (28 հունիսի, 2008թ.) Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ Քրեական օրենսգրքի խոշտանգման վերաբերյալ սահմանումը, թվում է, թե չի համապատասխանում Խոշտանգումների դեմ կոնվենցիային, քանի որ այն չի ներառում պետական պաշտոնյաներին, չի ընդգրկում քողարկումները կամ խոշտանգման մասին չհայտնելը և այն ընդամենը միջին ծանրության հանցագործություն է համարվում: Անօրինական է նաև կասկածյալին, վկային, տուժողին կամ մեկ այլ կողմին ցուցմունք տալուն հարկադրելը, այդ թվում՝ սպառնալիք կամ ֆիզիկական բռնություն գործադրելու միջոցով: Պետական պաշտոնյաները, ովքեր հարկադրել են անձին ցուցմունք տալ, ենթական են քրեական պատասխանատվության, մինչդեռ մեղադրյալն իրավական պաշտպանության որևէ միջոց չունի: *Տե՛ս* ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 341: Մասնակիցներից ոմանք նշել են, որ դատավորները երբեմն հրաժարվում են ընդունել բռնությամբ ձեռք բերված ապացույցները, որը Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի պահանջն է, սակայն դատավորներից շատերը, որպես կանոն, հրաժարվում են անթույլատրելի ճանաչել նման ապացույցները:

## VII. Պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

**Գործոն 24. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի կառուցվածքը**

*Պատիժը կրելուց պայմանական ազատման ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վերահսկելու համար գործում են համապատասխան իրավական մեխանիզմներ: Վերջիններս կիրառվում են հնարավորինս վաղ փուլում՝ ազատագրկման ձևով պատիժը կրող անձանց ազատագրկման հետ չկապված միջավայր տեղափոխելու նպատակով:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ բացասական</i>
<p>Հայաստանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը փոփոխվել է 2006թ. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովներ ստեղծվելուց հետո, առանց որի հավանության պայմանական վաղաժամկետ ազատվելու մասին միջնորդագրերը չեն կարող ներկայացվել իրավասու դատարան նույնիսկ այն դեպքում, երբ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը հաստատել է դրանք: Անկախ հանձնաժողովների ստեղծումից ի վեր, համաձայն ստացված տեղեկությունների, պայմանական վաղաժամկետ ազատումը հաճախակի չի կիրառվում՝ հանգեցնելով ուղղիչ հիմնարկներում մարդկանց թվաքանակի աճի և դրանից բխող մի շարք նոր խնդիրների: Շատերի կարծիքով անկախ հանձնաժողովների նպատակը պայմանական վաղաժամկետ ազատումների թիվը կրճատելն է: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց համար գործում են վերահսկողության մեխանիզմներ:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կրող անձը կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե դատարանը գտնի, որ նա ուղղվելու համար նշանակված պատժի մնացած մասը կրելու կարիք չունի: ՔՐ. ՕՐԵՆՍՍԳԻՐՔ, հոդված 76(1), ՔՐ. ԴԱՏ ՕՐԵՆՍՍԳԻՐՔ, հոդված 434: Անձը կարող է ազատվել նաև լրացուցիչ պատիժներից, ինչպիսիք են՝ տուգանքը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, գույքի բռնագրավումը: ՔՐ. ՕՐԵՆՍՍԳԻՐՔ,

հողված 76(1), *տե՛ս* նաև *նույն տեղը*, հողված 50: Նախագահի հրամանագրով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով անկախ հանձնաժողովներ ստեղծվելու հետևանքով 2006թ.-ից ի վեր Հայաստանում պայմանական վաղաժամկետ ազատելու համակարգը զգալիորեն փոխվեց: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՊԱՏԻԺ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ, ՊԱՏԺԻ ԶԿՐԱԾ ՄԱՍՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՆՀ-163-Ն (*ընդունվել է* 2006թ. հուլիսի 31-ին) (այսուհետ՝ Պայմանական վաղաժամկետ ազատելու մասին հրամանագիր): Ներկայումս կան 3 Անկախ հանձնաժողովներ, որոնք գործում են տարբեր աշխարհագրական տարածքներում՝ իրենց կազմում ընդգրկելով Նախագահի կողմից նշանակված 8 անդամ: Ներկայիս անդամների պաշտոնավարման ժամկետը լրանալու է 2010թ. հունիսին, և Նախագահի կողմից կարող են նշանակվել նոր անդամներ: Անկախ հանձնաժողովները ուղղակիորեն հաշվետու են Նախագահին:

Պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված նվազագույն մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարտադիր լսում է կարգապահական տույժ չունեցող դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հողված 115(1): Եթե պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը որոշում է դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատել, որոշումը ներկայացնում է Անկախ հանձնաժողովի հավանությանը: Անկախ հանձնաժողովի հավանությունն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում հիմնարկի գտնվելու վայրի դատարան (որը կարող է դատապարտյալի գործը քննած դատարանը չլինել), որի հետ ներկայացվում է նաև դատապարտյալի անձնական գործը: Դատարանը կարող է հավանություն տալ կամ մերժել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդագիրը: *Նույն տեղը*, հողված 115(1),(2): Անկախ հանձնաժողովի որոշումը դատարան է ներկայացվում այն դեպքում, երբ հանձնաժողովը հավանություն է տալիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելուն: Անկախ հանձնաժողովում քվեարկությունը գաղտնի է, իսկ նրա որոշումները չեն հիմնավորվում:

Օրենքը նախատեսում է կառավարության սահմանած կարգով պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնել: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հողված 120: Պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ԱՆ-ի Քրեակատարողական վարչության ազատությունից զրկվելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը:

Անկախ հանձնաժողովների ստեղծումը շատերի կարծիքով Հայաստանի քրեակատարողական համակարգում մի շարք խնդիրներ է առաջացրել: Չնայած այն հանգամանքին, որ մինչև անկախ հանձնաժողովների ստեղծումը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքերի և ներկայիս պրակտիկայի համեմատական վիճակագրություն չկա, հանձնաժողովի գործունեությանը հետևողները հայտնել են, որ ստեղծվելուց ի վեր ավելի քիչ մարդ է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել, և հետևաբար ուղղիչ հիմնարկներում դատապարտյալների թիվն աճել է: Ինչպես տեղեկացրել են, ուղղիչ հիմնարկները չունեն ռեսուրսներ ավելացած դատապարտյալներին կառավարելու համար, իսկ դատապարտյալները, ըստ նրանց, ավելի ագրեսիվ են դարձել և ավելի քիչ են հետևում կարգապահական կանոններին, քանի որ այլևս հեռանկար չունեն լավ վարք դրսևորելու դեպքում վաղաժամկետ ազատվելու համար: Տրամադրված տեղեկությունների համաձայն, անկախ հանձնաժողովները ստեղծվել են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվող դատապարտյալների թիվը նվազեցնելու նպատակով, թեպետ հարցազրույցների մասնակիցները տեղյակ չէին չարաշահման որևէ կոնկրետ դեպքի մասին, որը հանգեցրել է պայմանական վաղաժամկետ ազատվողների թվի կրճատմանն ուղղված քաղաքականության որդեգրմանը: Մասնակիցների կողմից հաճախակի է նշվել, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերով «անկախ» հանձնաժողովը սխալ անվանում է: Մասնակիցներից մեկը նշել է նաև մի դեպք, երբ պաշտպանը, ով իրականում անկախ հանձնաժողովի անդամ է, մասնակցել է իր վստահորդի պայմանական վաղաժամկետ ազատման հարցի լուծմանը: Անդամների ճնշող մեծամասնությունը, ինչպես հայտնել են, գործադիր իշխանության և իրավապահ մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներ են, որոնցից շատ քչերն են մասնագիտացած մարդու իրավունքների կամ քրեական պաշտպանության հարցերով: Ենթադրվում է, որ բոլոր 3 հանձնաժողովների ղեկավարները ոստիկանության ոլորտում աշխատող պաշտոնյաներ են: Շատերի կարծիքով անկախ հանձնաժողովների նպատակը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումներին խոչընդոտելն է, իսկ նրանց կազմն աշխատում է ի վնաս դատապարտյալների:

**Գործոն 25. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը**

*Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու կամ մերժելու մասին որոշումները, ինչպես նաև դրանց հետ առնչվող պարտականությունների կամ միջոցների կիրառումը կամ փոփոխումը, ընդունվում են իրավասու մարմինների կողմից՝ դատավարական երաշխիքներին համապատասխան:*

Եզրակացություն

Հարաբերակցությունը՝ բացասական

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պարտադիր քննարկում է պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը, իսկ անկախ հանձնաժողովի հավանությունը չստանալուց հետո նաև վերանայում է այն: Պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու կամ մերժելու մասին անկախ հանձնաժողովի որոշումների համար օրենքով սահմանված չափորոշիչներ չկան: Անկախ հանձնաժողովի որոշումները թափանցիկ չեն և դրանց օբյեկտիվության շուրջ լուրջ կասկածներ կան: Այն դեպքերում, երբ անկախ հանձնաժողովի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման մասին հանձնարարականն ուղարկվում է դատարան, դատարանների որոշումները՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու կամ մերժելու մասին, մեծամասամբ արդար են համարվում:

Վերլուծություն/Նախադրյալներ.

Ինչպես քննարկվել է վերևում, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշումը կայացվում է մի քանի փուլով, և անձը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվում է միայն, եթե պատժը կատարող հիմնարկի վարչակազմի, անկախ հանձնաժողովի և իրավասու դատարանի որոշումները միատեսակ են: Մյուս կողմից այն կարող է մերժվել այս 3 հաստատություններից որևէ մեկի որոշմամբ: Անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց 3 ամիս անց: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻԲ, հոդված 115(3): Եթե անձը դատապարտված է ցմահ ազատազրկման, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց 1,5 տարի անց: Նույն տեղը, հոդված 116(2): Այն դեպքում, եթե անկախ հանձնաժողովը տալիս է իր հավանությունը, սակայն դատարանը մերժում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, ապա միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացվելուց 6 ամիս անց, իսկ ցմահ ազատազրկման դեպքում՝ 3 տարի անց: Նույն տեղը, հոդվածներ 115(3), 116(2): Դատապարտյալը կարող է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշումները բողոքարկել դատական կարգով՝ իր միջնորդագիրը անկախ հանձնաժողովին չներկայացնելու հիմքով: Նույն տեղը, հոդված 115(4): 2008թ.-ին Սահմանադրական դատարանի որոշմամբ Քրեակատարողական

օրենսգրքի այն դրույթը, որում նշվում է, որ անկախ հանձնաժողովի որոշումները ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքին հակասելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ ընդունվելու դեպքերի, ճանաչվեց հակասահմանադրական: *Սշոտ Հարությունյանի գործը*, N ՄԴՈ-733 (2008թ. փետրվարի 5), *տե՛ս* նաև ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 115(4): Այնուամենայնիվ, քանզի դատապարտյալների շահերը, որպես կանոն, չեն ներկայացվում պաշտպանի կողմից պայմանական վաղաժամկետ ազատման հարցը քննելիս, պարզ չէ, թե արդյոք նրանք տեղյակ են այս իրավունքի մասին, թե ոչ, և քանի որ անկախ հանձնաժողովի որոշումները չեն պատճառաբանվում, ապա դժվար է բողոքը հիմնավորել: Անկախ հանձնաժողովի անդամների քվեարկությունը գաղտնի է: Նրանք անգամ մեկը մյուսին չեն բացահայտում քվեները: Բացի այդ, անկախ հանձնաժողովների որոշումները չեն պատճառաբանվում: Դատախազները կարող են և իրականում բողոք բերում են պայմանական վաղաժամկետ ազատումը բավարարելու մասին դատարանի որոշման դեմ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, հոդված 28, և չնայած այն բանին, որ բողոքարկել թույլատրվում է, ՔՐ. ԴԱՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 429(3), պարզ չէ, թե արդյոք որևէ դատապարտյալ երբևէ բողոքարկել է պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու մասին դատարանի որոշումը:

Պատժի ժամկետի՝ համապատասխան օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պարտադիր լսում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը: Նույնը վերաբերում է անկախ հանձնաժողովի կողմից այդ հարցը մերժելու դեպքում որոշակի ժամկետից հետո վերանայմանը: ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 115(1), (3), հոդված 116(2): Եթե պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը մերժում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, ապա այն կարող է վերանայել իր որոշումը 3 ամիս հետո: ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏԺԻ ԶԿՐԱԾ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱՏԵՍԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, N 1304-Ն (*ընդունված է* 2006թ. օգոստոսի 24-ին): Որևէ մեխանիզմ չկա, համաձայն որի դատապարտյալը կարող է միջնորդագիր ներկայացնել իր հարցը պարտադիր վերանայումից դուրս քննարկելու համար: Հարցազրույցների մասնակիցներից մեկը բողոքել է, որ Քրեական դատավարության նախկին օրենսգիրքը թույլ էր տալիս պաշտպաններին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդություն ներկայացնել, սակայն դա հնարավոր չէ անել գործող համակարգի պայմաններում: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննելու գործընթացում պաշտպանի մասնակ-

ցությունը երաշխավորված չէ, թեև դատապարտյալներին արգելված չէ պաշտպան պահանջել: Մասնակիցները հայտնել են, որ իրականում երբեք չեն լսել, որ դատապարտյալների շահերը պաշտպանը ներկայացնի, իսկ պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը մեծամասամբ քննվում է գաղտնի՝ հիմք ընդունելով դատապարտյալի անձնական գործը, այնպես որ փաստաբանն այստեղ որևէ դեր չունի:

Գոյություն ունեն հաստատված չափորոշիչներ, որոնք պետք է հաշվի առնվեն պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից պայմանական վաղաժամկետ ազատելու համար միջնորդություն ներկայացնելիս: Այդ չափորոշիչները նշվում են պատիժը կատարող հիմնարկի ներսում գործող հատուկ բաժնի կողմից պատրասված բնութագրում: Հիմնական չափորոշիչը դա պատիժը կրելու ընթացքում դատապարտյալի վարքն է, սակայն բնութագրում պետք է նշվեն նաև տվյալներ նախկինում դատված լինելու փաստի, աշխատանքի, կրթության, առողջության, ընտանիքի հետ կապի, պատժի կրումից ազատվելուց հետո դատապարտյալի սոցիալական ապահովության, տուժողին պատճառած վնասի հատուցման վերաբերյալ: *Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշում N 44-Ն, 2008թ. մայիսի 30, Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին*, կետ 48-49: Որոշելով ներկայացնել դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատման՝ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը բնութագիրն ուղարկում է Անկախ հանձնաժողովին: ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ, կետ 7: Անկախ հանձնաժողովի ենթահանձնաժողովը ծանոթանում է դատապարտյալի անձնական գործին և հանդիպում նրա հետ, անհրաժեշտության դեպքում հանդիպում է նաև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի հետ: *Նույն տեղը*: Անկախ հանձնաժողովի որոշման համար իրավաբանորեն սահմանված ուղենիշներ գոյություն չունեն:

**ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, 2008-2009ԹԹ.**

Տարի	Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի քննած գործերը	Անկախ հանձնաժողովների քննած գործերը	Դատարան ներկայացրած գործերը	Դատարանի կողմից քննված բոլոր գործերը տոկոսային հարաբերությամբ
------	--	-------------------------------------	-----------------------------	---

				յամբ
2008	3,289	1,798 (54.7%)	586 (32.6%)	17.8%
2009 (մինչև հոկտեմբերի 1)	2,617	1,334 (50.9%)	483 (36.2%)	18.4%

*Աղբյուրը՝ ՀՀ Արդարադատության նախարարություն*

Տրամադրված տեղեկությունների համաձայն, դատարանները մերժում են գործերի մոտ 15-20%-ը այն դեպքում, երբ անկախ հանձնաժողովը հավանություն է տվել պայմանական վաղաժամկետ ազատման միջնորդություններին. այնպես որ պայմանական վաղաժամկետ ազատման իրավունք ունեցող դատապարտյալների մոտ 85%-ին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատումը մերժվում է:

Մասնակիցները հայտնել են, որ ն՝ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը, ն՝ դատարանները ընդհանուր առմամբ արդար են ու մանրակրկիտ իրենց որոշումների կայացման հարցում: Շատ մասնակիցներ նշել են անկախ հանձնաժողովի որոշումներում թափանցիկության և օբյեկտիվության պակասի մասին՝ ընդգծելով, որ գաղտնի քվեարկության ընթացակարգը և որոշումների պատճառաբանված չլինելը անհնարին են դարձնում պարզել, թե ինչպիսին է յուրաքանչյուր գործով քննարկումների և կշռադատումների մակարդակը: Անկախ հանձնաժողովի որոշ անդամներ պնդել են, որ նրանք միանգամայն արդար են, օբյեկտիվ և կշռադատող: Այնուամենայնիվ, հարցազրույցի որոշ մասնակիցներ, որոնք անկախ հանձնաժողովների անդամ կառույցներից են, նշել են, որ ետ են կանչել կամ մտածում են ետ կանչել իրենց ներկայացուցիչներին, քանի որ իրենց ընկալմամբ անկախ հանձնաժողովները կողմնակալ և ոչ օբյեկտիվ են: Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի կազմակերպության ներկայացուցիչ այն կարծիքին էր, որ նախկին համակարգը, երբ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ուղղակիորեն գործերը ներկայացնում էր դատարան, նույնքան կողմնակալ էր, սակայն հոգուտ պայմանական վաղաժամկետ ազատման, այլ ոչ՝ ընդդեմ դրա:

**Գործոն 26. Պայմանական վաղաժամկետ ազատման իրականացումը և վերահսկողությունը**

*Պայմանական վաղաժամկետ ազատումն արդյունավետորեն իրականացվում և վերահսկվում է օրենքով սահմանված մարմինների կողմից՝ յուրաքանչյուր*

**առանձին գործի բնույթին, տևողությանը և ծանրությանը համապատասխան: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձինք տեղեկացվում են պայմանական վաղաժամկետ ազատվելու պայմանների և դրանց չհետևելու հետևանքների մասին: Վերահսկող մարմիններն իրավասու մարմինն տեղեկացնում են պայմանական վաղաժամկետ ազատման պայմանները չպահպանելու էական խախտումների մասին:**

<b><i>Եզրակացություն</i></b>	<b><i>Հարաբերակցությունը՝ բացասական</i></b>
<p>Չնայած այն բանին, որ Հայաստանի օրենքով նախատեսված է վերահսկողություն իրականացնել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ, որոնցից յուրաքանչյուրն ունի առանձին պարտականություններ, սակայն գործնականում այդ անձանց նկատմամբ վերահսկողությունն արդյունավետ չի իրականացվում:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Քրեակատարողական օրենսգիրքը նախատեսում է պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացում կառավարության սահմանած կարգերով: ՔՐԵԱԿՍՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 120: Պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԱՆ-ի Քրեակատարողական վարչության ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը: *Նույն տեղը:* Պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելիս դատարանն անձի վրա կարող է դնել պարտականություններ, այդ թվում՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցնել հակումներից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին կամ այլ պարտականություններ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդվածներ 70(5), 76(2): Քանի որ պայմանական վաղաժամկետ ազատումը հաճախակի չի կիրառվում, պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողությունը մեծամասամբ հատուկ դեպքերի նկատմամբ է կիրառվում: Վերահսկողությունը, որպես կանոն, կրում է հետևյալ ձևը՝ պատժից ազատված անձից պահանջվում է զեկուցել ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանմանը և նշված ժամկետում ստորագրություն թողնել, սակայն այլ միջոցներ, ինչպիսիք են խորհրդատվությունը, հանրային աշխատանքները կամ վարքագծի վերահսկողությունը, չեն ձեռնարկվում՝ օգնելու պատժից ազատված անձին ինտեգրվել հասարակության մեջ: Մասնակիցները նշել են, որ սա մեծամասամբ պայմանավորված է պատժից ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների պակասով, իսկ հանրային աշխատանքներ մասնավորապես չեն կարող նշանակ-

վել, քանի որ բավարար աշխատատեղեր չկան անգամ հանցագործություն չկատարած անձանց համար, ովքեր վճարովի աշխատանքի կարիք ունեն:

**Գործոն 27. Պայմանական վաղաժամկետ ազատման վերացումը**

*Պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվում է միայն իրավասու մարմնի կողմից, համապատասխան այլընտրանքները բացակայելու դեպքում և բացառապես դատապարտյալին դատավարական երաշխիքներ ապահովելու միջոցով:*

<i>Եզրակացություն</i>	<i>Հարաբերակցությունը՝ չեզոք</i>
<p>Պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ վերացվել, եթե դատապարտյալը կատարում է նոր հանցագործություն նախքան պատժի նախնական ժամկետը լրանալը կամ խուսափում է կատարել պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները: Պայմանական վաղաժամկետ ազատումը վերացվում է դատական նիստի ժամանակ իրավասու դատարանի կողմից՝ պատշաճ իրավական ընթացակարգի պահպանմամբ:</p>	

Վերլուծություն/Նախադրյալներ.

Պայմանական վաղաժամկետ ազատումը կարող է վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ վերացվել, եթե դատապարտյալը կատարում է նոր հանցագործություն նախքան պատժի նախնական ժամկետը լրանալը կամ չարամտորեն խուսափում է կատարել պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 76(6): Եթե դատապարտյալը չարամտորեն խուսափում է կատարել պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները, ապա պայմանական վաղաժամկետ ազատում շնորհած դատարանը ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանման միջնորդությամբ որոշում է կայացնում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու և չկրած մասն ի կատար ածելու մասին: Նույն տեղը, հոդված 76(6), տե՛ս նաև ՔՐ. ԴՍՏ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 437(1): Եթե պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձը կատարում է անգույշ հանցանք, ապա պայմանական վաղաժամկետ ազատումը պահպանելու կամ վերացնելու հարցը լուծում է դատարանը: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 76(6)(2)): Պատժից ազատված անձին դիտավորյալ հանցանք կատարելու համար դատապարտելիս կամ եթե

դատարանը որոշում է վերացնել պայմանական վաղաժամկետ ազատումը, ապա դատարանը դատավճիռների համակցությամբ նշանակում է ազատագրկման ձևով պատիժ, որը չի կարող գերազանցել 20 տարին: ՔՐ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, հոդված 76(6)(3)), հոդված 67: Այն դեպքում, երբ պատժից ազատված անձը կատարել է նոր հանցանք, պայմանական վաղաժամկետ ազատելը վերացնելու հարցը որոշվում է նոր հանցագործությունը քննող առաջին ատյանի դատարանի, այլ ոչ պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառած դատարանի կողմից: Պայմանական վաղաժամկետ ազատելը վերացվում է նոր հանցագործություն կատարելու վերաբերյալ դատավճիռ կայացնելու հետ միաժամանակ: *Նույն տեղը*, հոդվածներ 67, 76: Առաջին ատյանի դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու մասին որոշումը կարող է բեկանվել վերաքննիչ դատարանի կողմից դատախազի ներկայացրած բողոքի հիման վրա, և դատապարտյալը, ով արդեն ազատ է արձակվել, կարող է որոշումը բեկանելուց հետո ետ բերվել ուղղիչ հիմնարկ:

Գործնականում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համակարգն թղթի վրա ընկալվում է որպես արդար: Այնուամենայնիվ, հարցազրույցների մասնակիցներն իրենց մտահոգությունն են հայտնել դատական համակարգի ներսում տեղի ունեցող կոռուպցիայի և թափանցիկության վերաբերյալ՝ նշելով, որ այն նույն մտահոգությունները, որոնք հանգեցնում են կալանավորման, ազատագրկման և պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու բարձր ցուցանիշներին, պատրաստի հիմք են ստեղծում պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու հետ կապված չարաշահումների համար: 2009թ.-ին գործարար Աշոտ Հարությունյանը<sup>18</sup> վերաքննիչ դատարանի կողմից նրա նկատմամբ կիրառած պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումը բեկանելուց հետո մահացել է: Նրա փաստաբանը հայտնել է, որ դատարանը նրան ետ է ուղարկել քրեակատարողական հիմնարկ, քանի որ դատավորը կապեր է ունեցել պարոն Հարությունյանի նախկին գործընկերոջ հետ: *Տե՛ս* Ազատություն ռադիոկայան, *Եվրոպական դատարանը հետմահու բավարարեց Աշոտ Հարությունյանի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության* (հունիսի 16, 2010թ.): Չնայած այս վեճը չի հիմնավորվել, սակայն այն արտացոլում է լայն տարածում գտած այն կարծիքը, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համակարգը Հայաստանում խարխուլ է:

<sup>18</sup> Նույն Աշոտ Հարությունյանը վերևում՝ գործոն 25-ում, քննարկված գործի կողմ էր